

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Լ

ՍԻՐԱՋ ԵՎ ՍԱՄՎԵԼ



1

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>



ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌՈ-
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

L

Խ Ր Ի Մ Յ Ա Ն ՝ Հ Ա Յ Ր Ի Կ

ՍԻՐԱՋ ԵՎ ՍԱՍՎԵԼ

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ Էջմիածնի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. Էջմիածն - 2009

ՀՏԴ 891.981-3 Խրիմյան Շայրիկ : 23/28
ԳՄԴ 843-4+86.37
Խ 912

Արևելահայերենի փոխադրեց Վալերի Պարանյանը
Խմբագիր՝ Լիլիթ Պետրոսյան

ԽՐԻՄՅԱՆ ՇԱՅՐԻԿ
Խ - 912 Սիրաք և Սամվել: - Էջմիածին: Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածին, 2008.- 224 էջ:

Շայընթերցողին ենք ներկայացնում մեր ժողովողի մեջ
երախտավոր Սկրտիչ Ա Վանեցի (Խրիմյան Շայրիկ)
Ամենայն Շայոց Կաթողիկոսի բարոյախրատական
երկերի հաջորդ՝ «Սիրաք և Սամվել» երկը՝ արդի
արևելահայերենի փոխադրությամբ:

ԳՄԴ 843 - 4 + 86.37

Տպագրվում է մակենասությամբ՝
«Սարգիս Գարրիելյան» հիմնադրամի

ISBN 978-9939-59-022-6 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009 թ.

ՆԱԽԱԲԱՆ

ԹԱՐԵԿԱԾ ԺՈՂՈՎՈՒԹԳ ՀԱՅՈՑ,

«Դրախտի ընտանիք»-ից հետո «Սիրաք և Սամվել» է նոր երկասիրությանս անունը, որ գրեցի Հայոց հայրերի համար, և դարձյալ քեզ եմ նվիրում, ժողովուրդ Հայոց, որի նյութն ու պարունակությունն աշխարհի կյանքի կրթական դասերն են, որոնք բարի հայր Սիրաքն ավանդում է իր հասունացած Սամվել որդուն:

Սիրաքն իր դասերն է պատմում աշխարհի բազմադիմի առարկաների մասին, իսկ Սամվելն ուշադիր ունկնդրում է: Սիրաքը հայրական և բնական սիրով ավանդում է մարդկային կյանքի ամենակարեւոր խրատները, իսկ Սամվելը որդիական հնագանդությամբ ընդունում

է հայրախոս դասերը, որ կրթում ու մարզում են իրեն իր կյանքի առաջադիմության ասպարեզում:

Նախագլխի մեջ Սիրաքը ցույց է տալիս, թե ո՞վ է մարդն աշխարհում, և ո՞րն է իր կոչումը, պարտականություններն ու իրավունքները մեր հասարակական կյանքում և այլն:

Երկրորդի մեջ համառոտակի բացատրում է ընդհանուր տիեզերքի բնական և հավիտենական օրենքները, որով օրինակարգ Արարիչն, այդ անհեղեղի օրենքների սանձն իր ձեռքն առնելով, կառավարում է վերնաշխարհն ու մեր բնակեցրած երկրագունդը։ Պատմում է նաև բարոյական օրենքի մասին, որ Տեր Աստված Մովսեսի և Հիսուսի ձեռքով ավանդեց մարդուն, որպեսզի մարդը, եթե մոռանա իր խղճի բնական օրենքը, գեթ հիշի ու կարդա Աստծու դրած և գրած օրենքները, որ միշտ լույս են տալիս և հուշարար լինելով՝ ուղղում են մարդու խոտորյալ կյանքը։

Երրորդի մեջ Սիրաքը պատմում է մարդկային ընկերության անհավասար կյանքի մասին, ըստ որի՝ կարճամիտ և թերահավատ մարդիկ մեղադրում են Աստծուն, թե ինչո՞ւ աշխարհում մարդիկ հավասար կյանք ու բախտ չունեն՝ անգիտաբար չխորհելով, որ աշխարհում

մարդկային հասարակության ամրապնդող հզորագույն կապն անհավասարությունն է, որ կապում և վարում է մեր հասարակական կյանքը։

Չորրորդ դասին պատմում է աշխարհին տիրող իշխանության և հպատակ ժողովրդի մասին, երկարաճառելով ցույց է տալիս, թե յուրաքանչյուրն ի՞նչ պարտականություններ ու իրավունքներ ունի, և ինչպե՞ս է զեղծանվում իշխանությունը, որ շրջանցելով օրենքի արդարությունը՝ միայն սրով և գավազանով է իշխում, երկրի բարգավաճան և առաջադիմության ճամփան չի բացում, ինչն իշխանության գորությունն է։ Նմանապես զեղծանում է հպատակ ազգերին, երբ անսաստող են լինում սահմանադրված օրենքի դեմ։ Ժողովուրդները մեծապես և առավել սխալվում են ունայնամիտ հույսով, երբ իրենց բաժին առաջդիմության ճանապարհն իրենց ուժի չափով չեն բացում, այլ ծուլամիտ լինելով՝ ամեն ինչ կապավորությունից են սպասում։

Հինգերորդ դասին Սիրաքն աշխարհի ժողովուրդների և ազնվական դասի նկարագիրն է տալիս՝ ցույց տալով, թե ժողովուրդն է աշխատանքին և երկրին կյանք տվող ոգին։ Արան հարում է, թե ճշմարիտ ազնվականությունը հոգու մեծությունն է, և թե նրա պարտակա-

նությունն է աշխարհում մեծագործել և ժողովրդասեր լինել:

Վեցերորդ դասով Սիրաքը մարդու աշխատանքի և աշխատանքով հայթայթված հացի մասին է խոսում՝ հայտնելով, թե հացի ու հարստության աղբյուրը երկիրն է, հողն է, բեղմնավոր մարդու աշխատող ձեռքն է. մարդը թշվառ, մուրացկան է դառնում, երբ անաշխատ ձեռքով հաց է խնդրում և առանց վարուցանի հնձել է ուզում:

Յոթերորդ դասն ավանդելով՝ Սիրաքը կյանքի ուղիղ տնտեսությունն է ուսուցանում՝ առաջ բերելով, թե անօգուտ է գանձը և հարստությունը, երբ գանձատեր հարուստը տնտեսել չգիտի և շատ շուտ սպառում է գանձը գանձատնից և ցորենը շտեմարանից: Հավելում է նաև, որ ուղիղ տնտեսությունը գիտի արդարությամբ հատուցել իր պարտքերը. կայսրինը կայսրին տալ, Աստծուն՝ Աստծուն (*Մատթ. ԻԲ 21, Մարկ. ԺԲ 17, Ղուկ. Ի 25*), և ապա իր բաժինը վայելել:

Ութերորդ դասով Սիրաքը ցույց է տալիս, որ թե՛ առանձին մարդու և թե՛ աշխարհի ժողովուրդների մեծաքայլ առաջադիմությունն ինքնաշխատության զորավոր ջանքն է, եթե կա բախտ աշխարհում, այն միայն ինքնաշխատության ձեռքում է, ով որ ծուլության մեջ փակում

է իր ձեռքը, բախտն իրենից խուսափում է: Անարժան է այն ձեռքը, որ առանց աշխատանքի հացն իր բերանն է տանում. «Ձեռքը, որը չի աշխատում, չպետք է ուտի», – սուրբ Պողոսն է պատվիրում (Հմմտ. Բ Թեսաղ. Գ 10):

Իններորդ դասով Սիրաքը ճառում է, թե ինչպես ինքնաշխատությունը, հանճարը և ընկերական զորությունը՝ այս երեք հզոր դաշնակիցները, միանալով քաղաքակրթեցին աշխարհը. ինքնաշխատ հանճարը ծնեց գյուտեր, արվեստներ, նաև ընկերային զորություն զարգացրեց, և այդպես այս երեք անզեն դաշնակիցները տիրեցին աշխարհին:

Տասներորդ դասով Սիրաքն իմաստասիրում է աշխարհի երջանկության և ապերջանկության մասին, ընական փաստերով ցույց է տալիս, որ այդ երկու հակառակ տարերքները միշտ համընթաց են մարդկային կյանքին, և հնարավոր չեն, որ մարդն աշխարհում միայն երջանկության ծաղիկներ քաղի՝ առանց փշերից խոցոտվելու:

Տասնմեկերորդ դասի մեջ Սիրաքը ցույց է տալիս, թե որոնք են այն զորավոր, ներքին և արտաքին պատճառները, որով աշխարհի ազգերը բարձրանում են և խոնարհվում, բարգավաճում են և նվազում: Սիրաքը Սուրբ Գրքով

Հաստատում է, որ այս պատճառները մեղքը և արդարությունն են:

Տասներկուերորդ դասին Սիրաքը խոսում է ժամանակի և աշխարհի այլեայլ պատահարների մասին, խոստովանում է, թե, այո՛, կան աշխարհում բնական տարերքների այնպիսի պատահարներ, որոնց վերահաս գորությունից մարդը չի կարող խուսափել: Բայց Սիրաքն աշխարհի դեպքերով հաստատում է, թե առավել չար և մեծագույն պատահարը մարդն է մարդուն, որի առաջ շատ նվազ են և առ ոչինչ են համարվում բնական պատահարները:

Տասներեքերորդ գլխով Սիրաքն ավարտում է իր դասերը և, իբրև աներկմիտ հավատացյալ, ոգեստիվելով խոսում է Ավետարանի քարոզած ընկերասիրության մասին, առակով և օրինակով ցույց է տալիս, որ մարդու ազատ ու երջանիկ կյանքը ընկերասիրության մեջ է, ցույց է տալիս, որ աշխարհում տիրող թշվառության միակ դեղն ու դարձանն ընկերասիրությունն է, ցույց է տալիս նաև, որ առանց Ավետարանի ճշմարիտ ընկերասիրության՝ քաղաքակրթությունը որքան էլ ճգնի, չի կարող մարդու ապերջանիկ կյանքը բարվոքել կամ նրա խոռված հոգուն խաղաղություն տալ:

Սիրաքը, որ Ավետարանի սիրահարն է, մյուս դասերին, հյուսելով իբրև գլուխ ու պսակ, ավանդում է իր սիրելի Սամվելին, որպեսզի Ավետարանի ընկերասիրության դասերն իր ողջ կյանքում հոգով և ճշմարտությամբ ընդունի:

Ահավասիկ, այս չափով բովանդակեցի բարի հայր Սիրաքի կրթական դասերը: Սիրով կարդացե՛ք, խելամտորեն իմացե՛ք, ո՛վ հայ ժողովուրդ, հա՛յ հայրեր, հա՛յ դաստիարակներ և հայ հասունացա՛ծ որդիներ:

Առհասարակ, ձեզ համար գրեցի այս պիտանի դասերը. դուք ևս, Սիրաք հոր բարի օրինակին հետևելով, ավանդեցե՛ք ձեր աշակերտներին, քանի որ հասունացած նոր սերնդի համար աշխարհի գիտությունը և մեր ընկերասիրական կյանքի դասերն ամենակարևոր գիտությունը և հմտությունն են:

Սոսկ դպրոցական ուսումը բավական չէ հայ զարգացած պատանիների համար, որ նոր են թևակոխում աշխարհի կյանքի շրջանը, այլ պետք է, որ նրանք, Սամվելի նման ականջ դնելով, միշտ բարեխրատ լինեն ու առաջադիմեն դեպի լավագույն կյանք, որի միջոցը միայն ուղիղ դաստիարակության ձեռքն է, որ ուղղում և առաջնորդում է իրենց:

Սիրաքն այդ կրթական ձեռքը հորինեց և
տվեց հայոց հայրերին. թե սիրաբար ընդունե-
ցե՛ք, ո՞վ դաստիարակ հայրեր, Սիրաքի տքնող
ձեռքն ու գրիչը այլևս պիտի շարունակեն
իրենց բարոյախոս դասերը:

ՍԻՐԱՔ ԵՎ ՍԱՄՎԵԼ

ԴԱՍ Ա ՄՐԴՅ ԵՎ ԱՇԽԱՋՀ



Ինձ, որ հայր եմ, լսե՛ք, որդինե՛րս, և այն-
պես գործե՛ք, որ ապրեք: Սիրաք. Գլ. Գ.

Որդյա՛կ իմ Սամվել, դպրոցի դասերդ արդեն
փոքրիչատե ավարտեցիր, հասակդ զարգացավ
և այժմ հասել ես մինչեւ տասնութ տարեկան:
Իբրև հայր պարտական եմ ինքս քեզ ավանդել
աշխարհի ընդհանուր դասերը. ո՞վ է մարդն
աշխարհում, ո՞րն է իր ընկերական կյանքը,
որո՞նք են իր պարտականությունները և իրա-
վունքը, ո՞րն է իր առանձին կոչումը, ի՞նչ էր
մարդու հին կյանքը, և ի՞նչ է արդի կյանքը, որ
քաղաքակրթություն է կոչվում, և որո՞նք են
առհասարակ մարդու առաջադիմության պայ-
մանները, որո՞նք են աշխարհում այն բնական
և պատահական պատճառները, որով մարդը

երջանիկ և ապերջանիկ է դառնում: Մի խոսքով՝ աշխարհում մարդու վարած ընկերային կյանքի մի փոքր նկարագիրը պիտի տամ քեզ:

Որդյա՞կ իմ, ընտանեկան կյանքի մեջ ծնվեցիր և հայրենի տան ու գավառի մեջ մեծացար: Այսուհետեւ կյանքիդ անձուկ շրջանն ընդարձակելով՝ մտնելու ես աշխարհի լայնածավալ շրջանը: Քո պարտքն է ճանաչել աշխարհը և մարդկանց, և ինչ որ աչքի և մտքի լույսով կտեսնես աշխարհում, չանցնես՝ առանց ապշությամբ դիտելու, այլ կքննես և հետամուտ կլինես, թե ինչպես է կառավարվում աշխարհը և մարդկային ընկերությունը:

Եթե ի բնե և ի մորե կույր ծնվեիր, ես այս դասերը քեզ չէի ավանդի, որովհետեւ այս աշխարհը և ողջ տիեզերքն առանց աչքի լույսի տեսնելու՝ անհնար կլիներ, որ ես աշխարհի դասերը ավանդեի քեզ, անհնարին կլիներ նաև, որ դու միայն մտքի լույսով կարողանայիր գաղափար կազմել իրերի գիտության մասին: Սրա համար էր մի կույր աղաղակում Հիսուսին. «Տե՛ր, ինդրում եմ, որ բացես» (Մատթ. ի 34, Մարկ. ժ 52, Ղուկ. ժԸ 41): Դժբախտ կույրն աշխարհը և կենդանի կյանքը տեսնելու համար աչքի լույս էր խնդրում: Նա իր կուրության մեջ թշվառ էր, ոչինչ չէր տեսնում և

ոչինչ չէր զգում. ո՛չ երկինքն էր տեսնում՝ լուսագունդ աստղերով, ո՛չ երկիրն էր տեսնում՝ ծառերով, ծաղիկներով, որպեսզի վայելեր և փառք տար իր ստեղծողին և օրհներ աշխարհի Արարչին:

Իսկ դու, բարեբա՛խտ որդյակ իմ, որ աչքի լույսով ես ծնվել, բյուր անգամ ծունդ դի՛ր և փա՛ռք տուր քո բարերար Ստեղծողին: Ծնորհապարտ եղի՛ր նաև քո ծնողին, որ աշխատում է լույս տալ և բանալ մտքիդ աչքը, որպեսզի աշխարհը դու երկու լույսով տեսնես: Կան մարդիկ, որ շրջում են աշխարհում և տեսնում են, բայց չեն տեսնում. այս մարդիկ մտավոր լույսից գուրկ են, միայն, իրեւ ստվեր, աշխարհի արտաքին երեսն են տեսնում և չգիտեն աշխարհի ներքին կյանքը, բնական և բարոյական օրենքները, ղեկավարող և շարժող ուժերը և այլն:

Զանագիր եղի՛ր, որդյա՞կ իմ, որ մտավոր լույսդ պայծառ լինի, և որչափ պայծառանա մտքիդ լույսը, այնչափ պայծառ ու պարզ կտեսնես աշխարհը և աշխարհի բաները, դու ստվերի նման չես անցնի աշխարհից և ստվերի նման չես տեսնի աշխարհը, այլ տիրապես կտեսնես, թե ի՞նչ է մահկանացու մարդու կոչումն աշխարհում, և ի՞նչ է նրա գործը, վախճանն ու նպատակն իր կյանքում:

Մարդու կոչումն ու գործը շատ մեծ են աշխարհում։ Աստված ներշնչում է, և Մովսեսը պատմում, թե մարդն իր Արարչապետի տիրական պատկերն է կրել, և ո՞րն է այս պատկերի նմանության կնիքը. անմահ հոգին և բնավորությունը, որով մարդը զանազանվում է բոլոր ստեղծված արարածներից խոսուն լեզվով, բանականությամբ և ճոխացած հանճարով։

Սակայն դու այնպես մի՛ հասկացիր, որ մարդն Աստծու նույնատիպ և ամբողջովին հավասար ծգրտահան պատկերն է։ Քա՛վ, եթե այսպես կարծվի. ամբարիշտ մեծամտություն է, որովհետեւ մարդն իր բարեծին սկզբից Արարչի մի ամենափոքրիկ տիպարն է, նրա կատարյալ և անհաս իմաստության առաջ մի անգետ մանուկ է, մի նմուշ է, որ մշտնջենավոր լույսից է ձգված երկրի վրա, և հավիտենական անմահության առաջ մի հողակերտ մահկանացու է։ Եվ ի՞նչ համեմատություն. մի կաթ ջուրը՝ օվկիանոսի ծովի հետ, մի կաթ շողը՝ արևի համատարած լույսի հետ։

Ուստի՝ ողջամտությամբ այսպես պետք է իմանանք՝ մարդն իր բանականության խելքով ու հանճարով խիստ չափավոր սահմանի մեջ է փակված, և նրա բարերար Արարիչն այնչափ ձիրք ու գորություն է շնորհել մարդուն, որչափ

կամեցել է։ Այո՛, մարդն այս աշխարհի հողագնդի վրա իր Արարչապետից է կարգվել իբրև իշխող տիրակալ՝ տիրել բովանդակ երկրին, իշխել ծովին ու ցամաքին, անասուններին ու թռչուններին, և առհասարակ նրանք, որ շնչում են ու սողում երկրի վրա, մարդու հրամանի տակ են դրվել, ինչպես խոստովանում է Դավիթը, թե՝ «Ամեն ինչ դրիր նրա ոտքերի ներքո» (Սաղմ. Ը. 8) և այլն։ Այստեղից իմանում ենք, և ինչպես իմաստափրում են եկեղեցու վարդապետները, թե Տեր Աստված աշխարհում ամեն բան մարդու համար է ստեղծել, իսկ մարդուն՝ Աստծու համար, որ իր արդար և առաքինի կյանքով հավիտյան օրհնի և փառավորի իր արարչին, ինչպես Հիսուսն է ասել. «Տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը» (Սատթ. Ե. 15)։ Սակայն որպես լրացում ասեմ, որ մարդուն մարդու համար է կարգել, որովհետեւ մարդու կյանքը ընկերային է, մարդն ինքնին, առանձին-առանձին ոչինչ է և ոչ մի զանազանություն չունի վայրենի կենդանիներից, որոնց բնակությունը լեռների խորշերի և անտառների մեջ է։

Ահավասիկ, այս պատճառով է բարձրանում մարդու կոչումը մեր ընկերային աշխարհում, և ընկերաբար վարելով իր կյանքը՝ առաջադիմում է, մինչդեռ անասունների կյանքը նույնն

է մնում՝ առանց երբեք առաջադիմության։ Մարդու առաջադիմությունն իր ընկերային կյանքն է, ապա թե ոչ՝ մարդն էլ վայրենության և անասունների կարգի մեջ կմնար, նրա միտքն ու հոգին վայրենության մեջ թանձրացած կլիներ և չնորհ չէր լինի նրա լեզվի և խոսակցության առավելությունը։ Աշխարհաշինությունը մարդու ընկերային կյանքից առաջ եկավ. մարդիկ տիրապես տիրեցին աշխարհի վրա և տիրապես կատարվեց Աստծու հրամանը։

Դավիթն ասում է, թե Տեր Աստված տիեզերքի ժառանգությունը բաժանեց. երկինքն իրեն բաժին առավ, երկիրը մարդկանց որդիներին ժառանգություն տվեց և ամբողջ աշխարհն իրեւ մի դրախտ զարդարելով՝ հանձնեց մարդուն, որպեսզի գործի ու պահի այն։ Տեր Աստված ցույց է տալիս, որ մարդն աշխարհի ազարակում մի գործափոր մշակ է, պետք է անդադար աշխատի արդյունավորել այն, և որքան ժրագործ լինի՝ արդյունավորելու աշխարհը մշակությամբ, շինությամբ, գործունեությամբ, այնքան ավելի կվայելի և կբարգավաճի իր կյանքը։

Բայց դու այնպես մի՛ ըմբռնիր, որդյա՛կ իմ, որ ամենահարուստ Աստված այս աշխարհը իր հարստությամբ մարդուն տվեց սոսկ նյու-

թական կյանքի համար, որ նա միայն աշխատի, վաստակի, ուտի և վայելի երկրի բարիքը։

Եթե այդպես լիներ, երբ մարդը սոսկ նյութական կյանքով ապրեր, ինչպես անասուններն են ապրում, գերազանցության և առավելության ոչ մի չնորհ չէր ունենա։

Գիտենք, որ մարդը կապված է աշխարհի և նյութական կյանքի հետ, բայց իր մեծ կոչումը պահանջում է, որ նյութականի հետ կապի բարոյական կյանքը, և այդ է միայն, որ բարձրացնում է մարդու պատիվը և արժանապատվությունը, ապա թե ոչ՝ մարդը կնվաստանա և կհավասարվի անասուններին։

Ուստի աշխարհում մարդու կոչումը, պատիվը, փառքը, արժանապորությունը իր գործերի կշիռն է, ինչ վիճակի մեջ էլ նա լինի, նրա նվիրական պարտքն է ճանաչել իր կոչումը, ճանաչել մարդկության վայելուչ կյանքը, ճանաչել նաև, թե ինքն այս աշխարհ դիպվածով և ունայնաբար չի եկել, այլ ծնվել է մեծամեծ պարտականություններ կատարելու համար, քանի դեռ կյանք ունի, պետք է գործի, քանի որ մահն ու գերեզմանը գիշեր են բերում, որում մարդն այլևս չի կարող գործել։ Այս աշխարհը մարդկանց առաքինության ասպարեզն է, ով որ ընթանալ գիտի, միայն նա մրցանակ կառնի։

Կարդա Սուրբ Գիրքը, կարդա Հայոց աշխարհի պատմությունը և տես, թե ինչպես ընթացան առաքինի ոգիները։ Նոյն՝ իբրև այր կատարյալ, արդարությամբ ընթացավ, մրցանակ առավ. Աբրահամը հավատով ընթացավ, մրցանակ առավ. Հովսեփը ողջախոհությամբ ընթացավ, մրցանակ առավ. Մովսեսն իբրև Աստծու ժողովրդի առաջնորդ ընթացավ, մրցանակ առավ. Հորը համբերությամբ ընթացավ, մրցանակ առավ. Հեսուն հաղթությամբ ընթացավ, մրցանակ առավ. Սամվելը հնազանդությամբ ընթացավ, մրցանակ առավ. Դավիթն ապահարհելով ընթացավ, թողության մրցանակն ընդունեց։ Հիսուսը՝ Դավիթի որդին, խաչակրությամբ ընթացավ, առավ այն մրցանակն ու անունը, որ յուրաքանչյուր անունից ավելի վեր է։ Առաքյալները նույն խաչակրությամբ ընթացան, մրցանակ առան. Հայրապետները, եկեղեցին բարեգարդելով, ընթանցան, մրցանակ առան. Վարդապետներն ուսուցանելով ընթացան, մրցանակ առան. Սուրբ Գրիգորն, իր որդիներն ու թոռները Հայոց աշխարհի համար ընթացան, մրցանակ առան. Սուրբ Սահակն ու Մեսրոպն, աշակերտներով հանդերձ, գրելով ընթացան, մրցանակ առան. Քաջ Վարդանն՝ իր ուխտադիր խմբով, խաչով ընթացան, մրցանակ

առան. Հայոց աշխարհից ուրիշ ո՞ր մեկին թվեմ քեզ, որ առաքինական վաստակով ընթացավ, մրցանակ առավ։

Թողնենք անցյալ աշխարհի առաքինության դասերը, թողնենք եկեղեցու սուրբ նահատակներին, որ արյունով ընթացան, գանք ներկա քաղաքակիրթ աշխարհ։ Ո՞վ կարող է համրել այն աշխատավոր առաքինիների թիվը, որոնք անդում տքնում և ընթանում են աշխարհի ասպարեզի վրա, հանճարով, գյուտերով, արվեստով, աշխարհաշինությամբ, մեծագործությամբ և այլ բազմադիմի շահավետ և արդյունավետ վաստակներով ճոխացնում, լիացնում են մարդու հասարակական կյանքը, Էլ չեմ ասում գրիչների և մամուլի անխոնջ ձեռքերի մասին, որ օր ու գիշեր լույս տարածելով՝ լուսավորում են մարդու մտավոր աշխարհը։

Արդ՝ ավարտում եմ այս դասը և ուխտով ավանդում եմ քեզ, ճանաչի՛ր, թե ո՞րն է քո կոչումն աշխարհում, և որ համես նպատակիդ ու մրցանակն առնես, կոչումիդ համեմատ ընթացի՛ր. թե իբրև հավատացյալ՝ ամբողջ սրտով պաշտի՛ր քո Տեր Աստծուն, թե իբրև աշխարհի մարդ՝ քաղաքավարությամբ առաքինացի՛ր, թե իբրև ազատ մարդ՝ մի՛ ստրկացիր, այլ պաշտպանի՛ր մարդկության պատիվը, թե իբրև իշխան՝

օրենքով իշխի՛ր, արդարություն և իրավունք սիրի՛ր, թե իբրև հպատակ՝ օրենքով հնազանդվի՛ր, թե իբրև եկեղեցու հովիվ՝ հոտիդ վրա անձնադիր եղի՛ր, թե իբրև գառ՝ արածացնող հովին հետևի՛ր, թե իբրև ընկերության մարդ՝ ընկերային պարտականություններդ սիրով կատարի՛ր և միաժամանակ ճանաչի՛ր իրավունքդ, թե իբրև հայ և հայի զավակ՝ ազգդ սիրի՛ր, թե իբրև Ավետարանի ընդհանուր մարդասիրության աշակերտ՝ ամեն մարդու առանց խտրության սիրի՛ր:

Մի բան ևս պատվիրեմ քեզ. միշտ մտքումդ պահի՛ր Պողոսի խրատը, ուր էլ լինես՝ թե՛ հայրենիքում, թե՛ օտար աշխարհում, անդրդվելի մնա՛ կոչմանդ, կարճամտությամբ կրոնից կրոն մի՛ փոխվիր: Հայոց աշխարհի զավակն ես, Հայաստանի ազատ եկեղեցու ազատ որդեգիրն ես, նույնը մնա՛ և նույնը մեռի՛ր, հայ ժողովուրդը թող տանի թաղի քեզ քո հայրերի ու նախնիների գերեզմանի ծոցում:



ԴԱՍ Բ

ՏԻԵԶԵՐՔ

ԲՆԱԿՄԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

Արարեց լուսինը ժամանակի համար, արեգակն իմացավ իր մայր մտնելու ժամը: Սաղմոս Ճ՛Դ 19

Արատես ես, որդյա՛կ իմ Սամվել, աչքդ բացի՛ր ու նայի՛ր տիեզերքին: Դու փոխվի՛ր, մտքով քննող եղի՛ր, որովհետև Տեր Աստված, իր տիրական աթոռը երկնքում դնելով, ողջ տիեզերքը կառավարում է բնական և հավիտենական օրենքով: Իր օրենքներն անշարժ և անփոփոխ են, և ոչ ոք չի կարող այն շրջել կամ խախտել, ինչպես քաղաքային անհաստատ օրենքները, որոնց մի ձեռքը գրում է, և մյուսը՝ հերքում:

Բնական օրենքով է ծագում արել, ծագում առավոտը, լույս տալիս տիեզերքին, երեկոյան

մայր մտնում: Արևը մեր կյանքի և ժամանակի չափն ու կշիռն է, որոշում է մեր օրերը, տարիներն ու դարերը: Բացի այս՝ իր լույսով ու ջերմությամբ կենդանացնում է մեր աշխարհը, մարդիկ նրա լույսի տակ են գործում, կղաղարեն, եթե անլույս մնան: «Մարդ մինչև երեկո գնում է իր գործին ու վաստակին իր ձեռքերի» (Սաղմ. ձԳ 23): Այստեղից իմանում ենք, թե բնական աշխարհին լույս է պետք, որ մարդիկ գործեն, հապա որքա՞ն առավել լույս է պետք մարդկանց մտավոր աշխարհին, որ կարողանան ուղիղ գործել:

Բնական օրենքով գիշերավար լուսինը մերթ նվազում է, մերթ լրանում, մեռնում է և դարձյալ ծնվում, իր շրջանը երեսուն օր է, և այս թվով է չափվում ամիսը, և տասներկու ամիսներով մի տարին է բոլորվում: Երկնակամարի այս երկու մեծ լուսավորները մեզ նման բանական մարդ չեն, բայց բնական օրենքով գիտեն կատարել Աստծու կամքը, ինչպես սաղմոսելով Արարչի մեծագործությունն է հոչակում Դավիթը. «Դու հաստատեցիր լուսինը ժամանակը չափելու համար, արեգակն իմացավ պահն իր մայրամուտի» (Սաղմ. ձԳ 19):

Աստղագետ չեմ, որ երկնքի ողջ համաստեղությունների մասին ճառեմ և ծանոթու-

թյուն տամ քեզ, թե ինչպես են տիեզերքի անհուն տարածության մեջ շարժվում ու դառնում, մերթ երկում, մերթ աներևութանում, և այս ողջ անսայթաք ընթացքը բնական օրենքով է կատարվում, և երբեք իրար չեն դիմահարում: Դու տեսնո՞ւմ ես՝ մարդիկ աշխարհում շրջում են ու շատ անգամ գլուխներն իրար զարկելով՝ պատռում: Երանի թե մարդկանց գլուխները ևս ճանաչեին յուրաքանչյուրն իր սահմանն ու շրջանը:

Դառնանք երկիր: Մեծ օվկիանոսը երեմն իր աշեղ ալիքներով ուռչում է, լայնանում և դարձյալ դաշտանալով՝ իր տեղում խաղաղվում. այդ ևս բնական օրենքով է, որովհետև ծովերի ամենաիշխան Տերը մանր ավազով պարիսպ է քաշել ու մոնչացող ալիքների գեմ սահման է դրել, որ այն կողմ չանցնեն ու չողողեն երկիրը: Երանի՛ թե այդպես մի սահման ևս մարդու համար դներ գերիշխան Տերը և նրա մեջ փակեր աշխարհակալության ողին, որպեսզի արյան ծովերով չողողեր խեղճ ժողովրդին:

Ռամիկը բնագետ չէ, որ տեսնի, միայն զարմանալով՝ փառք է տալիս Աստծուն. նա չգիտի, թե ինչպե՞ս ամռանը անձրւ է գալիս, ձմռանը՝ ձյուն: Մեր մամիկները մեզ պատմում էին, թե հրեշտակներն ալյուրի նման ձյուն

են մաղում երկրի վրա մերթ մանրիկ-մանրիկ, մերթ խոշոր-խոշոր:

Բայց դու գիտես, որ ծովից ու ցամաքից արեի զորությամբ գոլորշիներ են բարձրանում և խտանալով ամպ են դառնում, ամպերից անձրեւ և ձյուն է տեղում երկրի վրա, աղբյուրներն ու վտակները հորդելով առատանում են, վազում են դեպի գետերը, գետերը ևս գնում ու ծովն են թափվում: Այսպես ծովի ջրերը շրջան են առնում, ո՛չ նվազում են, ո՛չ ավելանում, ինչպես նկատել է մեծն Սողոմոնը, թե՝ «Բոլոր գետերը գնում են դեպի ծով, բայց ծովը չի լցվում, և նորից գետերը վերադառնում են այստեղ, որտեղով հոսել են» (Ժող. Ա7): Ահավասիկ, այս անդրադարձումը բնական օրենքով է զարմանալի ևս, որ ծովերն ու ջրերը նույն քանակության մեջ է պահում, որչափ և որքան եղել են ի սկզբանե, նույնը պիտի մնան հավիտյան, որովհետև Տեր Աստված ամեն բան չափով և կշռով է ստեղծել:

Օ՛, որքա՞ն զարմանալի է Արարչի կարգադրությունը. մեզ շրջապատող բոլոր տարերքները ևս, բնական օրենքով հնազանդվելով, նրա հրամանն են կատարում: Դու տեսնո՞ւմ ես, երբ գարուն է գալիս, կարծես թե մեռած հողագնդին նոր հարություն է տալիս, ողջ բուսական տա-

րերքը զարթնում է մայրենի հողի ծոցից, ծլում է, բողբոջում, նախ՝ տերևներն են բացվում, և ապա՝ ծաղկում են, ամուանը պտղաբերում են, աշնանը տերևաթափ են լինում և ձմռանը դադարում են գործելուց, և երբ ցուրտը ցամաքեցնում է բուսականության վերին մասը, ներքուստ՝ ջերմիկ հողի տակ, սնվում են արմատները և հղանում սերմերը. այդ ևս հավիտենական և բնական օրենքով է: Հուժկու հովերը ևս, բնական օրենքի զորության տակ, հպատակվում են. մերթ հյուսիս են փչում, մերթ հարավ, մերթ արեելք, մերթ արեմուտք, երկնքի և երկրի դատարկության մեջ, կարծես թե պատերազմելով, մրցում են իրար դեմ և հաղթահարում իրար:

Դավիթը տեսնում է այս և հրավիրում տարերքներին, որ օրհնեն Տեր Աստծուն. «Օրհնեցե՛ք Տիրոջը... Հուր և կարկուտ, ձյուն և սառնամանիք, հողմ ու մրցիկ, դուք, որ նրա խոսքն եք կատարում» (Մաղմ. ՃԽԸ 7-8):

Այսպես էլ ամեն շնչափոր կենդանի նույն բնական օրենքով է վարվում. դու տե՛ս՝ ճնճղուկն իր բույնը ծառի ճյուղի վրա է դնում, տնասեր ծիծեռնակն իր կավակերտ բնիկը տան գերանի կողից է կախում, ընտանի հավը թուխս է նստում, ամենքն էլ իրենց ժամանակին ձագեր են հանում, կաթ տալով են սնում, և երբ նրանք

մեծանում են ու թևեր են բուսնում, ազատ են
թողնում:

Բոլոր կենդանիների իշխող թագավոր հզոր
առյուծի պալատն անտառի խորքերն են, ուր և
ծնվում են կորյունները, որոնք երբեմն քաղցից
աղաղակում են. գուցե Դավիթն իր հովվության
մեջ տեսավ ու լսեց նրանց մոնչյունը, ուստի
ասում է. «Առյուծների կորյունները մոնչում են
ու հոշոտում՝ Աստծուց իրենց ուտելիքը խնդրե-
լով: Արևածագին նրանք հավաքվում են և հանգ-
չում իրենց որջերում» (Սաղմ. ձ՛Գ 21-22):

Կուզե՞ս բնության Արարչի մեծագործ կար-
գագրության վրա սքանչանալ, որը նա գոր-
ծում է բնության օրենքի ձեռքով, հիացած
ոգով կարդա՛ հարյուր երեք գլխի Սաղմոսը,
որն այսպես է սկսում. «Օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ
իմ անձ, Տե՛ր իմ Աստված, անչափ մեծ ես...» (Սաղմ. ձ՛Գ 1): Այս գլուխը ծայրից ծայր բնա-
կան օրենքների մի վսեմագույն նկարագիր է,
որ տալիս է Դավիթը՝ օրհնելով ու փառագորե-
լով մեծագործ Աստծուն:

Բանական և ազատ մարդը ևս, որ իր խելքով
ու հանճարով է իշխում երկրի վրա և մերժ էլ
մրցում է տարեքի դեմ, մեծամտում է, որ հող-
մերն, ամպերը, ծովերն, ալիքները, եղանակն ու
ժամանակն անսան ու հնագանդվեն իրեն, բնա-

կան օրենքների իշխանության տակ է. ծնվում
է, կաթով ու հացով ապրում, աճում ու զար-
գանում. վերջում ծերանում է և մեռնում, հո-
ղից է մարդը և նորից հող է դառնում, ուստի
տիրական մարդը ևս բնական օրենքի հպատակ
ծառան է: Միայն թե իր կյանքը և գործերը վա-
րելու համար մարդը ազատակամ է: Մի՞թե առ-
յուծը ևս ազատ չէ անտառում շրջելու և իր
որսը հոգալու: Արծիվը ազա՞տ չէ օդային թա-
գագործության մեջ ազատաբար սավառնելու և
իր գահը գնելու բարձրագագաթ լեռների վրա:

Բավական է այսքանը, որդյա՛կ իմ, ես բնա-
խոս չեմ, որ բնական օրենքների գիտությունն
ընդարձակ ու հմտորեն ճառեմ քեզ. այժմ
սկսում եմ քեզ համար համառոտել բարոյա-
կան օրենքը, որը միայն բանական մարդուն է
վերաբերվում:

Ինչպես բնական օրենքները, նույնպես և
բարոյական կամ գրավոր օրենքների աղբյու-
րը նույն հավիտենական իմաստությունն է, և
ինձ այնպես է թվում, թե երբ Տե՛ր Աստված նա-
խամարդուն ստեղծեց, նրա սրտում ու հոգում
միմիայն խղճի այս օրենքը դրոշմեց. «Այն ամե-
նը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդ-
պես և դուք արեք նրանց» (Սատթ. է 12): Այս
գերագույն ու կատարյալ օրենքը մարդու հա-

մար շատ բնական ու բավական էր, եթե մարդն անեղծ պահեր այն ու չեղծաներ: Աղամից սկսած մինչև՝ Մովսեսը՝ բոլոր նահապետները, զարմերով ու զավակներով հանդերձ, այս օրենքով վարվեցին և առհասարակ արդար հանդիսացան աշխարհի և Աստծու առաջ:

Իսկ այն ազգերն ու ժողովուրդները, որոնք սույն խղճի օրենքի գիրը քերեցին իրենց սրտից՝ ապականելով ապականեցին ու եղծեցին մարդկության պատիվը: Սրա համար Տեր Աստված մի քանի անգամ ջրհեղեղով լվաց երկրի երեսը, ողողեց ամբարիշտ մարդկանց մեղքերը, միայն մի արդար նահապետ թողեց իբրև նոր սերնդի արմատ:

Գերագույն օրենսդիր Աստված, որ շարունակ հոգում է մոլորյալ մարդկանց ուղղելու համար, պատգամավոր ընտրեց իր ծառա Մովսեսին և նրա ձեռքով շատ բարոյական և գրավոր օրենքներ տվեց իր ընտրյալ ազգին: Այս ընդարձակ և ընդհանուր օրենքներից կան, որ կրոնի պաշտմանն են վերաբերում, այսինքն՝ քահանայական և ծիսական օրենքներ են, կան նաև, որ մասնավոր խրատներ և պատվերներ են, որ սրտի փափկությանը և գթությանն են վերաբերում, ինչպես օրինակ պատվիրում է, որ կաթնակեր գառը մոր մոտ չմորթեն, չդիպ-

չեն ճնճղուկի բնին, երբ նա ձագեր է հանում, կամ գրավ չառնել երկանքի մի քարը, որը տան պետքական գործիք է և այլն:

Իսկ հիմնական և բարոյական մեծ օրենքները Տասնաբանյա պատվիրաններն են, որ բանական մարդկանց ընկերային կյանքի պարտականությունների և իրավունքների սահման են դնում, և այդ բոլոր օրենքները դարձյալ խղճի օրենքի աղբյուրից են բխում:

Մովսեսն իր օրենքով իշխեց մինչև Քրիստոս: Եկավ փրկիչ Հիսուս, որը չնորհ և ճշմարտություն էր. նա ևս իր Ավետարանի ձայնով ու տառով նույն խղճի օրենքը կրկնեց. «Այն ամենն, ինչ որ կամենում եք, որ մարդիկ անեն ձեզ...» (Մատթ. Է 12):

Հիսուս, այս հավիտենական հիմքի վրա հաստատելով իր չնորհական օրենքի բարձրագույն շենքը, ասաց՝ Մարդիկ՝ սիրե՛ք միայն, և բավ է (Հմմտ. Հովհ. ԺԵ 12, 17): Մովսեսի օրենքների ծրագիրը թերի էր, Հիսուսը լրացրեց այն: Եվ գիտե՞ս, թե ինչ զանազանություն կա Մովսեսի և Հիսուսի միջև. մեկի օրենքի գրքից մահ էր բուրում, իսկ մյուսինից՝ ավետարան և կյանք, մեկի մեջ միշտ պատժով հատուցում կար, իսկ մյուսում՝ միշտ շնորհ և ներողամտություն, և որքա՞ն, գիտե՞ս. մինչև յոթանասուն անգամ

յոթ, այսինքն՝ անվերջ և անսահման: Մովսեսը, սուրբ ազգրից կախած, իսկույն կայացրեց հանցափրի վճիռը (Հմմտ. Ելք Բ 11–13), իսկ Հիսուս Պետրոսին ասաց՝ Սուրբ դի՛ր պատյանը (Հովհ. ԺՀ 11), որովհետև ես կյանք տալու համար եկա:

Ծո՛ւնը դիր, որդյա՛կ իմ, Հիսուսի ներող մարդասիրության առաջ, պարանոցդ ծոփ՛ր և ա՛ռ նրա քաղցր լուծը և փոքրողի բեռը: Իմացի՛ր, որ Ավետարանի բարոյական օրենքը մեր աշխարհի վայրի վիճակը հեղաշրջեց, մարդուն ստրկական վիճակից բարձրացրեց, գերության շղթաները խորտակեց և ասաց. «Ազատ եք այսուհետև Հիսուս Քրիստոսով»: Որ այժմ գիտություն և քաղաքակրթություն կա, Ավետարանի ազատության չնորհն է. այսպես են խոստովանում աշխարհի բոլոր ողջամիտ իմաստասերները:

Ծո՛ւնը դիր նաև քո մեծագույն Արարչի առաջ, որ իր ձեռակերտ տիեզերքն այսպես՝ բնական և հավիտենական օրենքով է կառավարում: Եկ դու, քանի դեռ կենդանի ես աշխարհում, կույր թերահավատ մի՛ լինիր, ինչպես աշխարհի անզգամները և անմիտները, այլ Դավթի նման հիանալով՝ գոչի՛ր. «Որքան մեծ են քո գործերը, Տե՛ր...» (Սաղմ. ՂԱ 6): Եթե հասնի

քեզ, որ Նյուտոնի չափ ներհուն լինես ու քննես տիեզերքի օրենքի բնական կարգն ու շարժումը, այնքան առավել զարմացի՛ր և օրհնի՛ր քո զարմանագործ Արարչին: Եթե ուսմիկը սոսկ աչքով է գիտում տիեզերքը, հավատում առանց գրի ու գիտության, ամեն ժամ փառք տալիս և լիաբերան օրհնում իր ստեղծողին, իսկ դու, տիեզերքի օրենքները քննելով, գիտությամբ ես ուզում ճանաչել նրա գերագույն Արարչապետին, քո պարտքն ավելի է մեծանում ու ավելանում, ուրեմն, որդյա՛կ իմ, իմացի՛ր՝ հեթանոս իմաստասերների նման սոսկ աստվածագետ չլինես՝ առանց արժանապես պաշտելու նրան:



ԳԱՍ Գ

ԱՆՀԱՎԱՍԱՐ ԿՅԱՆՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Թեև մարդիկ աշխարհում և արևի տակ
անհավասար են երկում, հողի ու գերեզ-
մանի սովերի տակ հավասարվում են:

*Մարդիկ հավասար ծնվում են, հավասար
ապրում և հավասար մեռնում:*

*Անհավասարությունը ոչ թե միայն մարդ-
կային ընկերության, այլև ողջ տիեզերքի մեջ է
երկում: Աչքդ բաց ու նայի՛ր, որդյա՛կ իմ, որ
ամեն բան զանազան ու տարբեր ես տեսնում
թե՛ երկնքում, թե՛ երկրում, թե՛ ողջ աշխարհի
բնական արարածների մեջ և թե՛ մարդու նյու-
թական և բարոյական կյանքում: Մարդը պետք
է ապշի, հիանա և օրհնի իր մեծագործ Արարչին,
որ ամեն բան զանազան և տարբեր է հորինել և
հորինում է: Մրանից երկում է Արարչի անհուն*

զորությունը, անհուն իմաստությունը և անհուն հանճարը, որ ստեղծեց իրերի թե՛ արտաքին ձևն ու պատկերը, թե՛ ներքին բնական զորությունները. ամեն ինչ իրարից տարբեր, զանազան ու անհավասար են, և այս անհավասարության մեջ ամեն ինչ չափ ու կշռի համեմատ կարգադրելով՝ անհաս և անհավասար Աստված հորինում և դեկավարում է տիեզերքը:

Աչքերդ հասի՛ր, որդյա՛կ իմ, դեպի երկնքի կամարը, ամենարվեստ Արարչի զարմանագործ ձեռքի հրաշակերտ գործերը տե՛ս, բոլոր աստղերը մեծությամբ, լույսով, դիրքով և շարժումով զանազան են, արեւ և լուսինը զանազան են, չգիտենք և ի զորու չենք տեսնել, թե այլևս որքա՞ն անզանազան էակներ կան երկնաշխարհում։ Դարձի՛ր դեպի մեր երկրագունդը, ամեն ինչ նույնպես զանազան և անհավասար կտեսնես. ցամաքն՝ անհավասար, լեռներն՝ անհավասար, դաշտերն՝ անհավասար, աղբյուրները, վտակները, գետերն առհասարակ՝ անհավասար, ծաղիկներն՝ անհավասար, ծառերն՝ անհավասար, գույներով, ձեւերով, համով, հոտով և ներքին զորությամբ բնավ անհավասար։ Այսպիսի նույն անհավասար օրենքի տակ են բոլոր կենդանիները։ Անհավասարությունը դու այնպես չպետք է հասկանաս, թե միայն տարասեռ

իրերի մեջ է երկում, նաև միևնույն տեսակի մեջ է անհավասարության հրաշքը նկատվում։ Ծաղիկների թագուհի վարդն իր տեսակի մեջ գույնով, հոտով, ձևով և նույնիսկ թերթերով անհավասար է, նմանապես՝ բոլոր ծաղիկները։ Խնձորենին իր տեսակի մեջ պտուղների մեծությամբ և գույնով անհավասար է, նույնպես՝ բոլոր պտղատու ծառերը։ Մտի՛ր մայրի անտառը, այնտեղ ևս կտեսնես՝ մեծությամբ, բարձրությամբ և ճյուղերի ընդարձակությամբ իրար անհավասար են, միևնույն ծառի տերևներն անգամ հավասարություն չունեն։

Իսկ մարդը, որ բովանդակ արարածների հրաշակերտն է, այդ անհավասարության հրաշքն ավելի ունի, թե՛ ներքին, թե՛ արտաքին ամեն հանգամանքներով անհավասար է իր ընկերոջ հետ. ուղեղն՝ անհավասար, միտքն՝ անհավասար, իղձն ու ոգին՝ անհավասար, վարքն ու բարքն՝ անհավասար, երեսն ու դեմքն՝ անհավասար, ձեռքը, մատներն ու ոտքերն՝ անհավասար, քայլերն՝ անհավասար, ուժն՝ անհավասար, բոլոր գգայական անդամները՝ ձևով ու զորությամբ անհավասար։ Նույնիսկ մի մարդու վրա է անհավասարության օրենքն ակնառու երևում. աչքերն, ականջները, ձեռքերը, ոտքերն անհավասար են իրար։

Այս ընդհանուր նկարագրից հետո այժմ սկսենք մարդկանց ընկերային կյանքի անհավասարության նկարագիրը տալ, որ մեր այս դասի նպատակն է:

Մարդկային ընկերությունը և քաղաքային աշխարհը նույնպես անհավասար տարրերից են կազմված. աշխարհ՝ աշխարհի, ազգ՝ ազգի, ժողովուրդ՝ ժողովրդի, թագավոր՝ թագավորի, իշխան՝ իշխանի, կառավարություն՝ կառավարության, զորություն՝ զորության, հարստություն՝ հարստության հետ, և այլ շատ բաներ ու հանդամանքներ իրար հետ անհավասար են:

Եվ նույնիսկ մի աշխարհ, մի թագավոր, մի ազգ և լեզու անհավասար տարրերով են կազմված: Կարմանաս, եթե ասեմ քեզ, որդյա՛կ, թե աշխարհի մարդկային ընկերության հզորագույն կապն անհավասարության օրենքն է, որ թագավորին հպատակ ժողովրդի հետ է կապել, իշխանին՝ գավառի, զորավարին՝ զորքի, առաջնորդին՝ եկեղեցու, ամուսնուն՝ ամուսնու, ազգականին՝ ազգականի, բարեկամին՝ բարեկամի, և բոլոր անհատ մարդկանց այդ անբաժանելի կապերով միացնելով՝ մեր ընկերային տարրերն է կազմել:

Կհարցնես՝ արդյո՞ք ավելի բարի և լավ չէր

լինի, որ թե՛ մեր կյանքի պարագաներում, թե՛ մարդկային նյութական և բարոյական զորություններում այդ անհավասարությունը բնակչիներ, այսինքն՝ հավասար ծնվելով՝ հավասար ապրեինք, հավասար աշխատեինք, հայն ու սեղանը՝ հավասար, մեծն ու փոքրը՝ հավասար, մարդիկ և առհասարակ ամեն ինչ հավասար լինեին:

Այո՛, որդյա՛կ իմ, շատ անգամ միամիտ, բարեսիրտ և գորովահոգի մարդիկ քեզ նման են դատում՝ կարեկցելով մեր ընտանեկան թշվառությանը, որ մարդկանց մեծամասնությունը, չարչարված, աշխատանքում մաշված, աղքատության և կարիքի մեջ ստրկացած ու երկաթելծերի տակ կորացած, ապերջանիկ կյանք են վարում աշխարհում:

Այդ քո դատաստանը մի մեղադրանք է, որ մարդիկ մինչև երկնային նախախնամության դեմ են հանում՝ տրտնջալով, որ աշխարհի կյանքն անհավասարության մեջ է դրել, մեկը երջանիկ է, մեկ ուրիշը թշվառությամբ է ապրում, մեկը գլուխ է լինում, մյուսը՝ ոտք, մեկը տիրում է, մյուսն՝ ընկճվում, մեկը մինչև այդ ուտում է, մյուսը՝ սովամահ կորչում և այլն:

Ասեմ քեզ, որդյա՛կ իմ, որ դատաստանիդ մեջ ուղղախոհ լինես: Նախախնամող կարգադ-

ըիչ իմաստությունը կամեցել է, որ այդ անհավասարությամբ մարդկային հասարակությունը կանգուն և կենդանի մնա. Եթե մեր ընկերային կյանքն ամեն բանով միօրինակ, հավասար լիներ, աշխարհում այլևս ընկերային միություն չէր մնա, բոլոր հարակցական կապերը կքանդվեին, և մարդիկ այնժամ պետք է ապրեին այնպես, ինչպես անասուններն են ապրում:

Եթե մեր ընկերային կյանքում հավասարություն լիներ, և մարդիկ երբեք իրար ձեռք մեկնելու կարիք չունենային, ապա մարդկանց կլքեր բովանդակ արդարությունը, կեղծանվեին առհասարակ պարտականություններն ու իրավունքները, կեղծանվեին մարդկանց առաջադիմության ողին և մրցակցությունը, կդադարեր աշխատանքը և մարդկանց ուղեղներում թմրած ու անշարժ կմնար հանճարը: Ազատ մարդը, հարկադրանքի տակ, պիտի ապրեր առանց բանականության: Այնուհետև մարդկային կյանքը խորհրդով, հանճարով ու առաջադիմությամբ չէր բարգավաճի, այլ կտկարանար իր մտավոր կարողությամբ, և մարդն այնտեղ կմնար, ուր Աֆրիկայի և Ամերիկայի հեռավոր վայրենիներն են, որոնց կյանքն անասունների կյանքից վատթարագույն է. ծնվում են իբրև մարդ, կրում մարդու անուն, բայց ապրում են

անասնաբար՝ բարին ու չարը, լույսն ու խավարը չորոշած:

Իմացի՛ր ուրեմն, հանճարե՛ղ որդյակ իմ, որ մարդու Արարիչը մարդուն ընկերային, բանական և ազատակամ է ստեղծել, բնական օրենքով չի՛ կապել նրա լեզուն և ոտքերը, որ չխոսի և չառաջադիմի, առաջ չգնա, ինչպես անասունների սեռը, որ հենց սկզբից ուր որ լինեին, այնտեղ էլ կան ու մնում են: Իսկ մարդու և հասարակական կյանքի մեջ կա մղիչ մի զորություն, որ ամեն կարգի և վիճակի մարդուն մղում և վարում է դեպի առաջադիմություն, և այդ մղիչ ու շարժիչ զորությունն ուրիշ բան չէ, քան թե յուրաքանչյուր մարդու անհավասարության վիճակն ու կյանքը:

Սրա համար բովանդակ մարդկային ընկերության մեջ մեկը մեկով ելևէջ առնելով՝ միշտ նկրտում և ձգտում են ընկերոջից առաջ անցնել:

Թագավորը ձգտում է իր գահն իր աթոռակիցներից բարձր դնել և երբեմն էլ աշխարհակալել: Իշխանը ձգտում է իր իշխանակից ընկերոջից առաջ լինել, զորապետը ձգտում է իր զինակիցներից ավելի հաղթանակ տանել, հարուստը ձգտում է իրեն հավասարից ավելի ևս հարստանալ, աղքատը ձգտում է իր թշվա-

ոռւթյունից ազատվել: Բովանդակ ժողովուրդը ձգտում է աշխարհի հրապարակի վրա ինքն իր ընկերոջն անցնել, կամ հավասար գնալ, իսկ եթե չկարողանա առաջ անցնել՝ չնվազելով գեթ հետ չմնալ: Այդպես նաև գյուտի հանճարները գերազանցել են մրցում, գրքերի հեղինակները մատենագրելով են մրցում, մամուլի ազատ խմբագիրներն ազատաբանելով են մրցում, ճարտասաններն իրավաբանելով են մրցում, վարդապետներն ուսուցանելով և դաստիարակելով են մրցում, ձեզ նման պատահներն առաջադիմելով են մրցում:

Արդ՝ երբ ընկերային անհավասարությունից այսքան առաջադիմության մրցանակներ տանողներ են ծնվում, խելամտորեն նկատել է պետք, որ մեր ընկերային անհավասարությունն իր հոռի ծնունդները ևս ունի: Այնտեղից ծնվում են նախանձ ու չարություն, որի ապացույցը և օրինակը Հովսեփի ծաղկած պատմուճանն է, այնտեղից ծնվում է բռնություն և զրկանք, երբ զորավորը, տկարին միշտ նվաճելով, հաղթահարում է և հարստահարում, այնտեղից ծնվում է անհագ արծաթասիրության մոլեգին ախտը, այնտեղից ծնվում են այլևայլ թշվառություններ և ապականում հասարակական կյանքը: Բայց ինչպես բացատրել եմ ուրիշ դասերի մեջ,

թե ամեն լույս իր խավարն ունի, ամեն գեղեցիկ իր տգեղ մասն ունի, ամեն առաքինության հետ մոլությունը համընթաց է, և առաքինության ծնունդը միշտ երկվորյակ է: Երբ ծնվում է բարին, արդեն գիտես, որ չարը ևս միասին ծնունդ է առնում, ինչպես եսավը: Եվ մի՞թե ծնողները ևս չար ու բարի զավակներին միևնույն արգանդից չեն ծնում: Ուստի բնական օրենքի ուղիղ հետեւանքն է, որ անհավասար կյանքից անհավասարություն ծնվի:

Լիկուրգոս՝ սպարտացի մեծ օրենսդիրը, ուզեց այդ բնական օրենքի դեմ կովել և ջնջել այն. օրենքով ոսկին և արծաթը հալածեց իր աշխարհից, որպեսզի ագահության ընչափաղությունը վերանա հարուստների սրտից, օրենսդրությունը հասարակական սեղան հաստատեց, որ աղքատը և հարուստը հավասար ընկերությամբ միևնույն սակավապետ սեղանից ուսեն հացը: Օրենք դրեց, որ հարուստների հայրենի կալվածքները հավասար լարաբաժնով ողջ ժողովրդին ժառանգություն տրվի: Եվ այսպես՝ ողջ սպարտացի ժողովրդին իբրև մի ընտանիք և գերդաստան կազմելով՝ այդ անբանական օրենսդիրը հավատում էր, թե անհավասարության օրենքը կարող է իսպառ ժխտել իր աշխարհից: Ուստի մտաբերեց գնալ Դելքիս,

պատգամ ընդունել, թե արդյոք իր օրենքները հաճելի՝ են աստվածներին, ու երբ իմացավ, թե աստվածներին խիստ հաճելի են թվացել, նա ինքնակամ սովամահ եղավ, որպեսզի իր օրենքը նվիրագործելով՝ այն կենդանի պահի աշխարհում:

Երանի թե Լիկուրգոսի նման Անդլիայի մայրերը մի նոր օրենսդիր ծնեին, որ եներ, լորդերի աշխարհագրավ կալվածքները հավասար բաժաներ մշակ ժողովրդին, ինչպես Լիկուրգոսը, որ մի օր՝ հնձի ժամանակ, արտում տեսնելով հավասարաբաժին ցորենի խրցերը, ասաց. «Ահավասիկ, եղբայրներիս հավասար ժառանգություն», հանձարեղ օրենսդիրը թերևս ակնարկում էր, թե այլևս կովելու, զրկելու, բաժանելու պատճառ չի մնացել:

Աշխարհն մեծ օրենսդիրներ ծնեց այլևայլ ժամանակներում. ոմանք՝ իբրև հայր ու մայր, ջանացին հայրենի ժառանգությունից ժողովրդին բաժին հանել և չթողնել, որ մշակ ժողովուրդն, անժառանգ մնալով, ստրկանա: Հողային հարստության մեջ թերևս փոքրիշատե հաջողվի միայն հողագործ ժողովրդին, բայց մի՞թե հնարավոր է քաղաքային և առեւտրական հարստությունները՝ իբրև հողային կալվածք, հավասար բաժանել, որ շահավաճառության, արհեստի և

մարդու ինքնաշխատության արդար արգասիք են համարվում. չխոսենք երկրի կառավարության պաշտոնյաներից, որոնցից ամեն մեկն իր բարձրության չափով ունիկ է ստանում:

Թողնենք այս ամենը, որդյունք իմ, ներկայի մարդը պետք է ներկայի մասին մտածի, հին աշխարհն իր հին օրենքով ու ժողովրդով անցել է, Լիկուրգոսի և Սոլոնի ժամանակները ևս անցել են, քանի որ քաղաքակրթությունը նոր դար, նոր օրենք, նոր ժողովուրդ կազմեց, ամեն ինչ իր հնությունից հեղափոխվեց: Քաղաքակրթության ազատ օրենքը թույլ է տալիս, որ յուրաքանչյուր մարդ իր աշխատանքի արդյունքն ինքն ազատապես վայելի, բավական է, որ մարդն արդար լինի իր աշխատանքում: Բավական է, և երջանիկ կլինի ժողովուրդը, եթե երկրի օրենքը և իշխանությունը հսկվեն, որ աշխատող ժողովրդի վաստակն ապահովվի, և նա կարողանա ազատորեն միայն իր վաստակը վայելել, և ոչ թե հարուստի վաստակից բաժին ընդունել: Որքա՞ն երջանիկ կլինի բավականասեր ժողովուրդը, եթե հարուստը ևս իր արդար վաստակով բավականանա և չգովի ու չհարստահարի հասարակ ժողովրդին:

Կրկնելով այս դասը՝ դարձյալ ասում եմ քեզ, որդյունք իմ, քանի դեռ կա աշխարհը, քա-

նի դեռ մարդիկ թե՛ բնապես, թե՛ կրթությամբ իրարից կզանազանվեն, անհավասար կյանքն իբրև մշտնջենական անհեղելի օրենք պիտի տիրի աշխարհին, և դու ևս այս օրենքի տակ պիտի ապրես ու հնագանդվես:

Ուստի հորդորում եմ քեզ, որ ջանաս աշխատանքի մեջ արդար լինել, երբեք աչք չդնել ու չնախանձել ուրիշի վաստակին, այլ բարենախանձ լինելով՝ ձգտես, որ դու ևս հարստանաս. բավական է, որ արդար վաստակիդ հետ զրկանք ու նենգություն չխառնես: Տեր Աստված պատվիրել է, որ մարդն իր ճակատի քրտինքով ապրի, զգուշացի՛ր, որ մի կաթիլ ուրիշի ճակատի քրտինքից չխառնես քո քրտինքի հետ, հիշի՛ր այն առակը, որ պատմում են մեր մամերը, թե մի պառավ կին մի այժ ուներ և նրա կաթը վաճառելով՝ ապրում էր, բայց միշտ խարդախում էր՝ իր կաթին շատ ջուր էր խառնում: Արդար Աստված, չինայելով պառավին, պատժեց նրան, քանի որ կաթին խառնված ջրերը գետ դարձան ու դաշտից քշեցին տարան պառավի այծը:

Դու զարմանո՞ւմ ես այս առակի վրա՝ տեսնելով, որ ներկա աշխարհում բոլոր կաթերը խառնված են: Բայց դու կաթդ արդար ու անարատ պահի՛ր՝ միշտ երկնչելով Աստծու արդարությունից, որ հրահանգում է ամպերին անձ-

րեռվ ու հեղեղով կործանել աշխարհի անիրավ նենգուներին: Զկարծես երեք, թե ես կարող եմ հեղեղից փախչել, եթե տունս հեղեղատի մոտ չեմ շինել: Կուզես, բարձրավանդակի վրա շինի՛ր և ուր կլինես, եղի՛ր, ջուրը կթողնի ու երկրաշարժով կքանդի: Սրա համար Դավիթը վարանելով ասում է. «Ես ո՞ւր փախչեմ, Տեր իմ, եթե երկինք ելնեմ, այստեղ ես դու, եթե դժոխքն իջնեմ, դրան էլ մոտ ես» (Սաղմ. ՃԼ 7-8): Ուրեմն արդարությամբ գործի՛ր, արդար վաստակով առաջադիմի՛ր, այլևս հարկ չես ունենա Աստծու ամենահաս ձեռքից փախչել:

p p

ԴԱՍ Դ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՊԱՏԱԿ ԺՈՂՈՎՈՒԹՅ

Իշխանությունը ժողովրդին և ժողովուրդն
իշխանությանը միշտ պետք են աշխար-
հում, եթե մեկը կամ մյուսը պակասի, կրա-
գարի կամ կիսուորպի ընկերային կյանքը:

Մեր ստեղծող իշխան Արարիչը, երբ ստեղծեց
մարդուն, այնպես է թվում, որ նախամարդու
սենդին իշխանությունը հավասար բաշխելով՝
նրան երկրին տիրող իշխան կարգեց՝ ասելով,
թե՝ «Աճեցե՛ք և բազմացե՛ք և լցրե՛ք ու տիրե-
ցե՛ք երկրին» (Ծննդ. Թ՛ 7), այսինքն՝ ծովին ու
ցամաքին և այն բոլոր կենդանիներին, որ հպա-
տակ էին մարդու իշխանությանը, թեև ոմանք
մարդուց առավել հուժկու և զորավոր էին:

Դավիթը մարդու այս տիրական իշխանու-
թյունը հաստատելով է ասում. «Ամեն ինչ դրիբ

նրա ոտքերի ներքո՝ «չխար, արջառ և ամեն ինչ» (Սաղմ. Ը 8): Թեև Սուրբ Գրքի պարզ իմաստից այնպես է թվում, որ մարդն, իր առանձին իրավունքը ճանաչելով, չպիտի բռնանար ու տիրեր իր ընկերոջը:

Բայց դու հիշի՛ր, խոհե՛մ որդյակ իմ, եթե քաջ ըմբռնեցիր նախորդ դասիդ իմաստը, դու ինքդ կարող ես իմաստասիրել, որ իշխանությունը մարդկանց անհավասար կյանքից, խոռվարար ոգուց, տիրելու բուռն ձգտումից և զորությունից է ծնվել, իսկ ինչպես հայտնի է, մարդիկ հավասար ձիրքով, հավասար ուժով, հավասար խելքով և հավասար տոհմային ազնվականությամբ չեն ծնվում. ոմանք աչքի հետ մտավոր լույս ունեն, ընկերներին են առաջնորդում, ոմանք էլ, որոնց մտքի լույսը նվազ է, ստիպված ուրիշների ետևից են գնում, ոմանք զորություն ստանալով՝ տիրում են, ոմանք տկար լինելով՝ հպատակում:

Աշխարհի պատմությունը ցույց է տալիս, որ իշխանության առաջին խանձարուրն ընտանիքն է, և մինչեւ այսօր, իբրև բնական օրենք, ընտանիքի հայրն է իշխում գերդաստանի վրա, և ինքն, իր տան մեջ նախաթոռին բազմելով, վարում և կառավարում է այն, որպեսզի խաղաղության և երկյուղած հնագանդության մեջ մնա ընտանեկան կյանքը:

Իսկ երբ ընտանիքից ընտանիք կազմելով՝ շատ ընտանիքներ միասին են բնակվում, բնական է, որ զանազան պատճառներից խոռվություն, վեճ ու կոփի առաջանալով՝ մարդկանց հետ աճում է: Այստամ անհրաժեշտությունն ստիպել է, որ բոլոր տանուտերերը հայրերի միջից, իբրև դատավոր և իշխան, մի տանուտեր ընտրեն, որ պատկառելի ծերությամբ, համբավով, զորությամբ ու հարստությամբ առավելություն է ունեցել մյուս տանուտերերից. այսպես է նախապես կազմվել փոքր տանուտիրական իշխանությունը, և որքան մարդիկ տարածվել են աշխարհում, այնքան իշխանության աստիճանը ես, աճելով և մեծանալով, հասել է մինչեւ աշխարհակալության ծայրագույն դիրքը, որի հզոր գալագանի տակ փոքրիկ իշխանությունները կամ իսպառ ջնջվել են, կամ նվաճվելով հպատակվել:

Ուստի քաջահայտ երևում է, որ իշխանության առաջին շավիղը արմատից է բուսել և փոքրինչ մեծանալով՝ ընտանիքից ելել ու ողջ ցեղի վրա է տարածել թերերը, ավելի ևս մեծանալով, այլևայլ ցեղեր իր իշխանությանը հնագանդեցնելով՝ տիրել է շատ քաղաքների և գավառների: Ի վերջո, ավելի շատ զորանալով, բարձրանալով ու թագ կապելով՝ թագավոր է

դարձել կամ այլևայլ իշխանության առանձին գավազաններ իր միահեծան գավազանի տակ նվաճելով՝ իբրև կեսար, կայսրության բարձրագույն տիտղոսն է ստացել:

Եկ այսպես աստիճան առ աստիճան բարձրանալով՝ իշխանությունն իր գագաթնածայրին է հասել: Բայց իշխանասիրության ոգին երբեք ծայր ու սահման չունի. քանի այս աշխարհը կա, իշխանության գավազանները պիտի մըցեն իրար հետ, և ով գիտի, ապագայում գուցե բովանդակ երկրագունդը մի գավազանի տակ նվաճվի: Մի՞թե աշխարհի պատմությունը և փորձը շատ օրինակներով այն չեն ցույց տալիս, որ իշխանության կյանքը ևս իր ծերությունն ու վախճանն ունի և եթե նաբուգողնոսորի ծառի չափ բարձրանալով՝ իր գավազանի շավիղները տարածում է բովանդակ աշխարհի վրա, ի վերջո, կործանվելով տապալվում է գետնին, ինչպես Մակեդոնականը, Հռոմի, Բաբելոնի և Ասորեստանի իշխանությունները, որպեսզի մարդու մեծամտությունը ճանաչի և խոնարհվի, թե Բարձրյալի մշտնշենական զորությունն է տիրողը և ժամանակի ահեղ տապարով պիտի կտրի ու կործանի այն բոլոր իշխանությունների ծառերը, որոնք կբարձրանան երկնքի զորության դեմ և կբարձրանան ու կջախջախեն ժողովրդի կյանքը և զորությունը:

Գուցե մտածե՞ս, որդյա՛կ իմ, ինչպես մտածելով ցանկանում են ծայրահեղ ազատամիտները, թե արդյոք ավելի լավ չէ՞ր լինի, եթե մարդկային ընկերությունն ազատ, անիշխան ապրեր և իշխանության ծանր լուծը չկրեր իր պարանոցին, մարդն ինքնիշխան, ինքնավար լիներ և երբեք պարտավոր չլիներ տուրք, հարկ, զինվոր և այլ բազմապատիկ օրինական և ազօրինի բոնի պահանջներ վճարել:

Լսի՛ր, որդյա՛կ իմ, ես պատասխան տամ քեզ, ամենայն խելամտությամբ ուշք դիր: Մարդկային հասարակությունը բնավ չի կարող առանց իշխանության, առանց օրենքի, առանց դատաստանի և հատուցման այս աշխարհում ապրել և խաղաղ կյանք վարել, ինչպես երկնքի թռչունները և լեռների ազատ վայրի երեները և այլն: Ոչ թե աշխարհի այլևայլ ազգեր, այլ նույնիսկ մի ազգ և մի համազգի ընտանիք հնարավոր չէ կառավարել: Տեսնում ենք՝ եղբայրը եղբոր դեմ սուր է հանում, և արյունակիցն արյունակցի արյունն է թափում, մերթ էլ ստահակ որդիները հոր դեմ են ապստամբում, ո՞ւր մնաց, թե անընտանի օտարն օտարի հետ խաղաղությամբ ապրի ու վարվի:

Կան մարդիկ, որ մտածում են, թե իշխանությունը հին աշխարհի վայրենի հասարակու-

թյանն էր պետք, բայց այժմ, երբ գիտության լույսը և քաղաքակրթության դարը մարդկանց հին կյանքը փոխել է, վայրենի, բիրտ ոգին զգոնացրել է, մարդը ճանաչում է իր պարտականությունները և իրավունքները, ճանաչում է իր ընկերոջ հավասարակշիռ իրավունքը, Ավետարանին հավատալով՝ ճանաչում է նաև Հիսուսի ավանդած մարդկության ընդհանուր խղճի օրենքը. «Այն ամենը, ինչ որ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես էլ և դուք արեք նրանց» (Մատթ. է 12): Այլևս ինչո՞ւ են պետք իշխանության նվաճող գավազանը կամ սպառնացող սաստն ու սուրը. օրենքը և իշխանությունը խաժամուժ ամրոխի համար է, որ ոչ գիր գիտի և ոչ օրենք:

Երանի՛ թե քաղաքակրթությունը մարդուն այդ ծայրագույն կատարելությանը տաներ, սուրը և իշխանությունը վերանային աշխարհից: Բայց դու մի՛ հուսահատվիր, որդյա՛կ իմ, այդ կարծիքը ազատասեր մարդու երևակայության երազն է: Թողնենք ասիական ազգերին, ուր քաղաքակրթությունը դեռևս չի ծնվել, իսկ եթե ծնվել է, տակավին մանուկ է: Գնանք եվրոպա, ուր քաղաքակրթությունը ծնվել և զարգացել է, և եթե այդ ևս բավական չես համարի, անցնենք օվկիանոսը, գնանք Ամերիկա, ուր

կարծվում է, թե ազատ քաղաքակրթությունն իր արբուն հասակն է առել, ուր ժողովուրդն առանց թագի, առանց կայսերական հզոր գավազանի, մի նախագահով և օրենքով է կառավարվում: Այժմ այնպես համարենք, որ այդ աշխարհից վերանա նախագահը, վերանան բոլոր օրենքները, սուրն ու թնդանոթը ժողովվեն դարբնոցում, և միայն հողագործի համար խոփ ու մանգաղ պատրաստվի, և համայն Ամերիկա կիսագնդում այսպես հրատարակվի, թե՝ «Այսուհետ իշխանությունը և օրենքը վերացված է, այլևս դատաստան, հատուցում չկա, յուրաքանչյուր մարդ թող իր ազատակամ իշխանությամբ վարվի, մարդն իր գործերում ազատ է, իր համար հսկող ուստիկան, ատյան և հարցաքննություն չկա» և այլն:

Դու այնժամ կտեսնես, թե ինչ կլինի դրա հետեանքը. այդ քաղաքակրթ աշխարհ Ամերիկան, այդ հասարակապետական օրինասեր ժողովուրդը մի վայրկյանի մեջ վայրենի կդառնա, խուժանը և քաղաքակրթը միաժամանակ զենքի կդիմեն, ընկերային հրապարակն արյան ծով կդառնա, հարուստներն առհասարակ կկողոպտվեն, խաղաղությունը տեղի կտա, խոռովությունը կհուզի, ինչպես օվկիանոսի ալիքները, ով որ բուռն է, կտիրի, ով որ տկար է, կնվաճվի

բոնությամբ, վերջապես ընկերային բոլոր կառույցները կքանդվեն, կապերը կկտրվեն, մարդիկ կովով ու սրով կսպառնան իրար մինչև հետին զավակն ու սերունդը:

Եթե քաղցած առյուծին հանես իր վանդակից և արձակես ժողովրդի մեջ, ի՞նչ կլինի և ի՞նչ կգործի, այդ հայտնի է. իր ժանիքներով ամեն բան կծածի, այսպես նաև մարդկային ընկերությունը, թող քաղաքակիրթ լինի այն, բայց եթե դուրս հանես իշխանության և օրենքների շրջափակ վանդակից և ազատ թողնես, մարդը կգործի նույնը, ինչ-որ կգործի վայրենի առյուծը. թերևս հնարավոր լինի համոզել առյուծին, երբ հագենա, բայց մարդու կատաղությանը երբեք հագուրդ չկա:

Համոզվեցի՞ր այժմ, ազնի՛վ որդյակ իմ, որ աշխարհն առանց իշխանության չի կառավարվի: Մի՞թե կարելի է հավատալ, թե տիեզերքն առանց Աստծու և հավիտենական օրենքների կկառավարվի, նավն առանց նավապետի և ղեկավարի կուղղվի, և կամ ամենի ձին առանց հեծյալի կսանձահարվի: Ո՞վ չգիտի, թե ավելի քան ձին, մարդն է ամենի, և միայն իշխանության և օրենքի սանձն է, որ վարում է նրան, ապա թե ոչ՝ նա, սանձակոտոր լինելով, կգահավիժի: Արա ապացույցը և օրինակը քանիցս

ցույց է տվել Ֆրանսիան՝ այն մեծ ազգը, որ քաղաքակիրթ աշխարհում ինքն իրեն փայլուն մի աստղ է կարծում, և երբ անիշխանություն է տիրում, այդ կրթյալ և ուսյալ ժողովուրդը խուժան է դառնում և ամեն բան տապալում, թեկուզ և այդ բանն իր հայրենիքի փառքն ու պարծանքը լինի: Ես այսպես եմ դատում, որ քաղաքակրթությունը մարդու վայրենության բարքն արտաքուստ պատել է կեղեռվ, եթե վերցնես իր գլխից իշխանի սուրը և օրենքը, նա իսկույն իր բուռն կրքից ժանիքներով կպատռի այդ կեղեր և հին վայրենությունը դուրս կհանի: Ուրեմն իշխանությունը և օրենքը վերին տեսչության հավիտենական կարգադրությունն է, որպեսզի մարդիկ երկյուղածությամբ և բանականությամբ ապրեն հասարակական կյանքում:

Այժմ սկսեմ համառոտել, թե իշխանությունը և ժողովուրդը ինչ պարտականություններ և իրավունքներ ունեն իրար հանդեպ, որոնց արդարությունը չափում է, որ միշտ հավասարակշիռ լինեն, և երկուստեք վճարվեն պարտքերը, և պահանջեն իրավունքները:

Իշխանության առաջին պարտականությունն է ճանաչել և հավատալ, որ իշխանությունն իբրև ավանդ է տրված աստվածապետական գո-

բությունից, ինչպես Հոգին է խոսում Սողոմոնի բերանով. «Տիրոջից տրվեց ձեզ հարստություն և իշխանությունը Բարձրյալից»: Իշխանությունն իր հաշիվն ու համարը միայն Աստծուն չի տալիս, այլև ժողովրդին, եթե ինքը սահմանադրուեն է ընտրված: Իշխանության մեծ և նվիրական պարտականությունն է արդարություն սիրել և օրենքի իրավացի վճիռն արդարությամբ գործադրել. այս է հորդորում Սողոմոնը, որ դատավոր և թագավոր էր Աստծու ժողովրդին. «Միրեցե՛ք արդարությունը, երկրի՛ դատավորներ» (Խմաստ. Սող. Ա. 1): Իշխանության պարտականությունն է հսկել երկրի խաղաղությունը, անդուլ հոգալ ժողովրդի բարօրության, բարգավաճման և առաջադիմության համար՝ ուղղապես խորհելով, որ իշխանության աթոռը հաստատված է պատվանդանի վրա, և երբ ժողովուրդը կործանվի, անշուշտ, իշխանությունը ևս կանգուն չի մնա: Իշխանության իրավունքն է չափով և արդարությամբ ժողովրդից հարկեր պահանջել, բայց երբեք իրավունք չունի ծանր-ծանր բեռներով ժողովրդի թիկունքը մինչև գետին կորացնել: Եթե այսպես ջլատի ժողովրդի ուժն ու ոգին, ինքը ևս իր զորությունից կզրկվի, որովհետև ո՞վ չգիտի, որ ժողովուրդը համարվում է կառավարության

գործող անդամ, երբ անդամներն ուժաթափվում են, գլուխը ևս նրա հետ ուժաթափվում է, այնուհետև կորցնում է իր խորհուրդը, հիվանդանում է առաջնորդող գլխի առողջ ուղեղն, ու այնժամ նույնպես սպառվում են ժողովրդի և իշխանության զորությունը, և երկրին հասնում և տիրում է աղետաբեր վիճակ:

Իշխանությունը երկրի և ժողովրդի երաշխավորող հավատարիմ ավանդապահն է, և այդ սուրբ ավանդն այնպես պետք է պահեն, ինչպես իրենց կյանքը, իրենց փառքը և իրենց կենդանատու ոգին և զորությունը:

Իշխանության զորությունը և հաստատունությունը արդար և հավասար օրենքն է, ուստի իր ամենամեծ պարտականությունն է, որ երկրի օրենքն անաչառ ճշտությամբ հավասարապես գործադրի տկարի և զորավորի վրա, իշխանի և ժողովրդի վրա, չժողնի, որ զորավորներն ըմբռութանան օրենքի դեմ, և նրանք, որ կարգված են օրենքը պաշտպանելու, եղծանեն օրենքն ու ոչինչ համարեն այն:

Իշխանությունն, իբրև օրենքի վրեժինդիր և նախանձավոր, պարտավոր է երկրի, ժողովրդի և առավել բարձր պաշտոնյաների միջից օրենքի զեղծումներն առհասարակ վերացնել, ապա թե ոչ՝ զեղծումները, հաճախակի դառնալով, ի

վերջո, իշխանությունը կվերացնեն և կմատնեն այն օտարի ձեռքը, որովհետև ներքին զեղծումներից հայրենիքն ավելի կվտանգվի, քան թե օտար թշնամուց:

Իշխանությունը պետք է առաքինության պաշտպան հանդիսանա և մոլությունը սանձահարի, իր մեծ, նվիրական պարտականությունն է երբեք չթողնել, որ ժողովրդի կյանքը և բարքը ապականող գեղծումները տարածվեն երկրի մեջ իբրև վարակիչ հիվանդություն, որ, ի վերջո, մահ և կորուստ է սպառնում երկրի ընդհանուր իշխանությանը: Միայն կրոնի պաշտոնյաների քարոզը և խրատը բավական չեն հետող ժողովրդի կամքը նվաճելու, պետք է նաև իշխանության սաստնու սուրբը, որոնցով ձեռնհաս կլինի զեղծումները քաղաքային օրենքով բառնալու:

Իշխանության պարտականությունն է մեծ իմաստությամբ տնտեսավարել երկիրը, չթողնել, որ իր հարստության գետերը գնան թափեն օտար ծովերի մեջ, այլապես, ի վերջո, երկրի ջուրը կցամաքի, կդառնա ծարավ մի անապատ. երկրի հարստության գետերը երկրի մեջ պահելու համար պետք է այն շրջապատել օրենքով և այն միջոցներով, որ քաղաքային տնտեսությունն է ուսուցանում:

Եթե իշխանության գորությունը կհավելի երկրի հարստությունը և բարգավաճումը, ուրեմն իր ձեռնահասության պարտականությունն է ժողովրդին առաջնորդել առաջադիմության ճանապարհով, վերացնել ամեն խոչընդոտ ու խութ, որից ժողովուրդը խուսափելով հետ է կանգնում շահավաճառությունից, այն է՝ նավարկություն բացել, լեռներ և ձորեր հարթել, արհեստը և արհեստավորներին քաջալերել, հողագործ ժողովրդին ազատություն և ապահովություն տալ, որ երկիրը մշակելով արդյունավորի: Քանի գեռ շահավաճառության մեջ իր երկրի բերքն ուրիշ երկրներից ընդունված բարքերի հետ հավասարակշռություն չունի, պետք է օրենքով հաստատել և զապել ժողովրդի վայելչասիրության ցանկությունը, որ սակավապետ կյանքին վարժվելով՝ իր երկրի բարիքով գոհանա, թեև ընդհանուր վաճառականության օրենքն ազատ է, բայց յուրաքանչյուր իշխանության ազատ իրավունքն է իր երկրի շահն առավել պաշտպանել:

Իշխանության պարտականությունն է միշտ խաղաղություն սիրել, խաղաղությամբ կառավարել, ամեն հնարավոր միջոցներ գործի դնելով՝ պատերազմ չսկսել ո՛չ ուրիշ իշխանության դեմ, ո՛չ պատճառ տալ մեկ ուրիշ իշխանու-

թյանը իր դեմ: Բայց երբ դաշինքը եղծվի, մի ուրիշ իշխանություն բռնանա իր վրա, և երկրի շահը վտանգվի, այնժամ իր պարտքն է և իրավունքը պատերազմ հայտարարել, որ թշնամին չոտնահարի երկրի ազատությունն ու իրավունքը: Միայն թե պատերազմող իշխանությունն այստեղ պիտի հիշի Քրիստոսի առակը, որ նախատեսություն է ուսուցանում: Նախ պետք է հաշվի իր ծախսերը և իր զորությունը թշնամու զորության հետ կշռելով՝ հասու լինի, թե կարո՞ղ է տաս հազարով պատերազմ տալ նրա դեմ, որ իր վրա քսան հազարով է գալիս, ապա թե ոչ՝ մեծ խոհեմություն է պատվիրակություն առաքել և հաշտություն առաջարկել, որովհետև բարի է և երկրին շահավետ թե՛ մեծ և թե՛ փոքր զոհողությամբ խաղաղություն հաստատել, քան թե պատերազմով երկրավեր լինել. բացի այն, որ երկրի գանձը կսպառվի, այլև արյունով և մահով ժողովրդի կայտառ որդիները կզոհվեն ու կկոտորվեն պատերազմի դաշտում, որով ինքը պարտական ու պատասխանատու կմնա. «Որովհետև թագավորը ոչ միայն իր պարտքը պիտի տա, այլև նրանց, ում մահվան պատճառ դարձավ»:

Իշխանության առաջին և վերջին մեծ պարտականությունն է լույս, գիտություն և կրթու-

թյուն տարածել ամբողջ երկրում, իշխանության աթոռից սկսած՝ մինչև խոնարհ ժողովրդի իրանիթը, հավասարապես լույս ծավալել՝ հավատալով, որ երկրի բարգավաճումը ժողովրդի լուսավոր կրթությունից է ծնվում, ինչպես որ թշվառությունը՝ նրա տգիտությունից:

Շատ մեծ սխալ և անիրավ քաղաքականություն է, եթե իշխանությունն ասի, թե ժողովրդին տգիտության և անզգա թմրության մեջ պահեմ, որպեսզի նա կույր մնա, անսաստ չլինի իշխանության դեմ, և ես առանց կասկածի և դյուրությամբ իշխեմ: Որքան հոռի և հետադեմ է այս դրույթը քաղաքակիրթ աշխարհի այն գաղափարի առաջ, որ միշտ ջանում է, ժողովրդի մտավոր զարգացումն առաջ տանելով, լուսավորել նրան՝ հավատալով, որ երկրի առաջադիմությունը և բարգավաճ կյանքը ժողովրդի լուսավորությունից է, ինչպես թշվառությունը՝ տգիտությունից. մի՞թե ինքնին երջանիկ կլինի իշխանությունը, երբ ժողովուրդը թշվառանա, և ի՞նչ փառք ու պարծանք է թշվառին իշխելը: Թշվառ ժողովրդի կյանքն անշուշտ մի վախճան ունի. նա վաղ թե ուշ պիտի մեռնի և երբ մեռնի, իշխանությունն այլևս ո՞ւմ վրա կիշխի. անշեն և անապատ երկրի վրա՞։ Եթե իշխանությունը ջանա ժողովրդին նախ թշվառության

գերեզմանի մեջ թաղել և բռնության ծանր կափարիչով փակել նրա բերանը, նույն ժողովրդի թաղված գերեզմանի մեջ էլ կթաղվի ինքը:

Այսքանը և այսպիսին են, սիրելի՝ որդյակի իմ, իշխանության պարտականությունները, որ գրեցի փոքրիչատե միայն, տակավին կան նաև ուրիշ պարտականություններ, որոնք թողեցի, որ դու ինքնուրույն իմաստասիրես։ Երկրի իշխանությունը կեղծանվի, եթե այդ պարտականությունները չկատարելով՝ ընդհակառակն անի, եթե թողնի օրենքի արդարությունը և միայն բռնությամբ և սրով իշխի, եթե մեղկանա, թե թշնամին քաղաքը պաշարել է. եթե ժողովրդի և իշխանության շահն իրար հետ չկապի, որ երկրի ընդհանուր շահն է, այլ միշտ ջանավարվել՝ իշխանության շահն առանձնացնելով, կամ անգիտությամբ և խորամանկությամբ։

Իշխանությունը կեղծանվի իր գործունեության մեջ, երբ անընտրող լինի, արժանավորի և անարժանի հարգը մի կըոռվ չափի. Երբեմն պատիվ և աթոռ է ընծայում նրան, որ երկիրը կառուցելու հիմքում մի քար չի գրել, թողնում է լավին ու ունակին և ժողովրդին կառավարիչ է զնում այնպիսիներին, որոնց միտքը դատարկ է կառավարության ուսմունքից և օրենքից, որոնք առավել կարոտ են կառավարվելու, քան թե կառավարելու։

Իշխանությունն անիրավությամբ կեղծանվի, եթե դատաստանի առաջ նվիրական չհամարի օրենքի հավասարությունը, աչառելով խաբի տիրոջ և ծառայի դատաստանը, զորավորի և տկարի դատաստանը, և թողնի, որ դատարանում, իբրև օրենսդիրք, վճռի դատավորի կամքը։

Իշխանությունը չարապես կեղծանվի, եթե երկրի չարերին չպատժի պարզապես, այլ թողնի, որ չարերն աճելով բազմանան ու խեղամահ անեն բարիներին, նույն կերպ մեծապես կեղծանվի, երբ բարիներին՝ նրանց, որ երկրի առաջադիմությանն անձնվեր են լինում, որ հավատարմության ուժան անդրժելի են պահում, թողնի անվարձ, անպատկ։

Իշխանության զեղծումները շատ և բազմադիմի են, դժվար և երկար աշխատանք է պետք դրանք նկարագրելու համար, բայց եթե դու հետաքրքրվես, հետազոտես երկրի իշխանության և ժողովրդի կյանքը, զեղծումների պատկերը դիմացդ կտեսնես։

Այլևս, որդյակի իմ, ինձ մնում է ասել, թե ի՞նչ պարտականություններ և իրավունքներ ունի ժողովուրդն իշխանության հանդեպ, և բովանդակել այս դասը, որ բավական ընդարձակվեց, և դու գիտես, որ դրա պատճառը նյութի և առարկայի մեծ կարևորությունն էր։

ինչ որ իշխանության պարտականությունն է, ահավասիկ այն է ժողովրդի իրավունքը, և ինչ որ իշխանության համար իրավունք է, այն է տիրապես ժողովրդի պարտականությունը:

Ժողովրդի առաջին պարտականությունն է ճանաչել և հավատալ, թե իշխանության գավազանը երկնքից դեպի երկիր է ձգված. նրա վերին ծայրը կցված է տիեզերքը վարող պետական աթոռին, մյուս՝ ներքին ծայրը, հաստատված է աշխարհում: Արա մասին Սուրբ Պողոսն ասում է, թե իշխանությունն Աստծուց է, և ովքեր իշխանավոր են, Աստծուց են կարգված: Բացի այս՝ Պողոսից ավելի մեծ Հիսուս վարդապետը Պոնտացի դատավորի առաջ վկայեց, երբ Պիդատուն ասում էր. «Ես իշխանություն ունեմ քեզ խաչ հանելու կամ ազատ արձակելու» (Հովհ. ԺԹ. 10), Հիսուսը պատասխան տվեց. «Դու իմ վրա ոչ մի իշխանություն էլ չէիր ունենա, եթե քեզ ի վերուստ տրված չլիներ» (Հովհ. ԺԹ. 11): Քրիստոս և քրիստոնեական կրօնի ուսուցիչներն առհասարակ պատվիրում են ճանաչել իշխանությունը, պատվել, հնագանդվել, երկնչել, տալ կայսրինը կայսրին և այլն:

Ժողովրդի պարտականությունն է իշխանության հետ ճանաչել նաև երկրի ընդհանուր օրենքները, քաղաքային օրենքները, դատա-

կան օրենքները, հարկուտուրքի օրենքները, կալվածական օրենքները և այլն, քանի որ իր պարտականություններն ու իրավունքներն այս օրենքներն են որոշում, և օրենքն է, որ չափում է և կշռում ժողովրդի և իշխանության իրավունքներն ու պարտականությունները: Ուստի ժողովուրդն ամենայն խնամքով պետք է սովորի երկրի օրենքները, որպեսզի օրինապահները ժողովրդի անդիտության և անուշադրության պատճառով չհամարձակվեն այդ նույն օրենքով հարստահարել նրան, որի օրինակները բազում անգամ և բազում տեղ տեսնում ենք աշխարհում: Ժողովուրդը, երբ իր հպատակության պարտականությունները կատարում է սրտի մտոք և անթերի, նա իրավունք ունի իշխանությունից պահանջել բոլոր այն պարտականությունները, որ գրեցի վերը, և երբ մի իշխանություն ժողովրդից լիովին ստանում է իր իրավունքը և ժողովրդի հանդեպ ունեցած պարտականությունները մոռանում, այլևս ժողովուրդն ի՞նչ միջոցով կարող է այդ չտրված և մոռացված իրավունքը ձեռք բերել:

Իսկ դու, ազնիվ որդյակ իմ, որ իշխանության ենթակա ես ծնվել և ժողովրդի կրթված զավակն ես, պարտականություններդ սրտիդ մտոք կատարի՛ր, իբրև քրիստոնյա ուշադրու-

թյուն դարձրու Պողոսի խրատին, որ հորդում է Հնազանդ լինել իշխանություններին և հատուցել պարտքի դիմաց պարտք, պատվի դիմաց պատիվ և այլն: Նույն Պողոսն ասում է, թե՝ «Իշխանությունն իգուրը չի սուրն իր մեջքին կապել, որ աշխարհի չարագործներին հարվածել սպառնա, իսկ եթե դու կուզես իշխանությունից չերկնչել և ազատ վարել կյանքդ, բարիք գործի՛ր, որովհետեւ բարությունը և բարեգործը, առաքինությունը և առաքինին միշտ ազատ են այդ երկյուղից և հարվածից» (Հռոմ. ԺԳ 3-4):

Բայց եթե բարությանդ փոխարեն ապիրատություն ստանաս, այնժամ հիշի՛ր Պետրոսի խոսքը, որ ասում է. «... քանզի ի՞նչ երախտիք կունենաք, եթե մեղանչելուց հետո տանջվեք և համբերեք: Իսկ եթե բարիք գործեք և չարչարվեք ու համբերեք, այդ չնորհ է Աստծու մոտ, որովհետեւ այդ բանի համար իսկ կոչվեցիք... » (Ա. Պետ. Բ 20-21):

Քանի աշխարհը կա, չարչարանքներն աշխարհից չեն վերանա, միայն կարող են պակասել. ժողովուրդը և մարդիկ անհրաժեշտորեն պիտի կրեն չարչարանքներ՝ թե՛ առավել, թե՛ նվազ, թե՛ իշխանության ձեռքից, թե՛ նույնիսկ իր ձեռքից, թե՛ իբրև մեղապարտ՝ հանցավոր դատվելով, թե՛

իբրև անպարտ՝ հանիրավի պատժվելով:

Փափագում եմ քեզ համար, որդյա՛կ, որ ո՛չ դու անձիդ համար քո ձեռքով չարչարանք պատրաստես, և ո՛չ էլ հանցապարտ լինես, որ իշխանությունը չարչարի քեզ, բայց եթե աշխարհի ծանրացող ձեռքը քեզ և ժողովրդին հավասար չարչարի, այդ ևս քո քրիստոնեական պարտականությունն է, որ պետք է հոժարաբար տանես ու համբերես, մինչև վերջ համբերես՝ հավատալով, թե վախճանը կյանք է:



ԳԱՍ Ե

ԺՈՂՈՎՐԴԻՉ ԵՎ ԱՇԽԱՋԻ ԱԶՆՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ճշմարիտ ազնվականության նշանը հոգու մեծությունն է, ոչ հողն է և ոչ ոսկին, ով որ այն ունի: Նա է աշխարհի տիրապես ազնվականը, որի փառքը միայն ժողովրդասիրության մեջ է փայլում:

Աշխարհի խոնարհ ժողովրդից և ազնվական կոչված բարձրագույն կարգի դասից պիտի ասեմքեզ, անտոհմիկ որդյակ իմ: Դու գյուղական ժողովրդի մի զավակն ես, ժողովրդի մեջ ես ապրում, բայց պետք է գիտենաս ու ճանաչես նաև այն բարձրագույն դասի մարդկանց, որոնց կյանքն ու վիճակը հասարակ ժողովրդի կյանքից շատ բարձր է ու շատ զանազանություն ունի:

Դու պետք է լիովին գիտենաս ժողովրդի կյանքը և գործերը, և թե որո՞նք են հարուստ

ազնվականների դասը, նրանց կյանքը և գործերը և յուրաքանչյուրի պարտականությունները և իրավունքը աշխարհում:

Ողջ երկրագնդի երեսին բնակվող մարդկային հասարակության ամենամեծ մասը միշտ ժողովուրդն է, և նա է ծնել ամեն կարգի ազնվականների և իշխանավորների դասը. կայսր, թագավոր, իշխան, պայազատ՝ բոլորն էլ ժողովրդի զավակներն են, որովհետև ժողովուրդն է բուն արմատը և մայրն ամեն կարգի և վիճակի մարդկանց:

Աշխարհը կառուցողների մեծագույն մասը ժողովուրդն է, դաշտային գյուղերի բնակիչ, աշխատավոր և հաց վաստակող մշակը ժողովուրդն է. նմանապես քաղաքների բնակիչների մեծ մասը ժողովուրդն է: Խիստ փոքրագույն մասն է կազմում ազնվականների կարգը, որ, ընդհանուրապես, մայրաքաղաքների և քաղաքների մեջ է բնակվում: Ժողովուրդը մարդկային հասարակության մեջ մարդկանց բուն կյանքը և պահանջմունքները բավարարող, ամենաաշխատող և պիտանի, օգտակար մասն է: Ժողովուրդն է, որ իբրև երկրագործ մշակ՝ արդյունավորում է երկրի բարեբերությունը և մատակարարում աշխարհին: Նա է, որ հաց, միս, յուղ և այլ կաթնեղենն նպարներ է հանում մեր սեղա-

նին: Նա է, որ այգեգործությամբ մեր խնջույքի բաժակները պատվական գինով է լցնում: Ժողովուրդն, իր տնկած պարտեզից բազմազան ազնիվ պտուղներ հանելով, առհասարակ քաղաքացիների և ազնվականների սեղանն է զարդարում: Նա է, որ բրդով, փափկասեր այծենիով, բամբակով, վուշով և այլ բազմատեսակ բուսական նյութերով ժողովրդի պարզ հանդերձն ու ազնվականների պերճանքներն է պատրաստում: Ժողովուրդն՝ իբրև արհեստավոր, բազմատեսակ արհեստներով աշխատելով, մեր կյանքի անհուն-անհամար կարիքներն է հոգում, մանավանդ քաղաքակիրթ աշխարհում, ուր միշտ նորասիրության պերճանքներն են գերակշռում: Նա է շինում ու զարդարում թագավորի պալատը, իշխանների ապարանքը և այն ամենը, ինչ վերաբերում է նրանց ճոխ կյանքին ու վայելմանը:

Ժողովուրդն՝ իբրև գյուտերի և արհեստների հնարյող, իր արդյունքով և առաջադիմությամբ շատ առաջ է երբեք համեմատելի չէ ուրիշներին և միշտ առավել է ազնվականների դասից:

Ժողովուրդն՝ իբրև աշխատանքի մայր, բոլոր ծովագնաց նավերի համար նավապետ և նավաստի է տալիս, բոլոր մեծամեծ գործարանների համար գործավոր մշակ է տալիս, բոլոր

Հանքերի համար գետնի տակ՝ անարև, անլույս խորքերում, աշխատող հանքահաններ է տալիս, համայն երկրագունդը բեղմնավորելու համար հողագործ աշխատավորներ է տալիս:

Ժողովուրդն՝ իբրև գրականության անխոնջ մշակ, իբրև մատենագիր հեղինակ, իբրև լուսավորության և առաջադիմության առաջնորդ, աշխարհը թղթերով, գրքերով ու թանգարաններով լցրեց, մարդու մտքից փարատեց մութն ու խավարը և լուսավորեց մարդու մտավորական աշխարհը:

Հասկանո՞ւմ ես, որդյա՛կ իմ, թե աշխարհի մարդկային հասարակության գոյությունը պահողը և արդյունավորողը ժողովրդի աշխատանքն է: Բացի այդ ամեն արտաքին կողմերը, որ ժողովրդի աշխատանքից է բխում, աշխարհը նաև նրա վաստակով է հագենում և ճոխանում: Ժողովուրդը նաև իր ներքին՝ ամուսնական և ընտանեկան կյանքում, շատ պտղատու և բարգավաճ է. գյուղերը և քաղաքները նրա զավակներով են լցվում: Դրախտի օրհնությունն իսկապես ժողովուրդն է վայելում, որ միշտ աճելով, բազմանալով՝ լցնում է երկիրը, և աշխարհն իր որդիներով է շեն մնում:

Բայց դու, ժողովրդասեր որդյակ իմ, արդյո՞ք նեղանում կամ անիրավություն ես համարում,

երբ տեսնում ես աշխարհի կարգն ու դատաստանը: Ժողովուրդը մեր ընդհանուր հասարակական կյանքում այսքան մեծամեծ պարտականություններ է կատարում, անդուդ ու չարաչար տքնում է և քրտինք թափում մարդկային առաջադիմության համար, բայց որքա՛ն դառն ու դժվար է, որ իր ստեղծած անբավ արդյունքից խիստ նվազ ու հոռի մասն է վայելում: Ազնիվ ցորենն ու պատվական հացն ազնվականներին է տալիս, իսկ ինքը գարի ու կորեկ է ուտում: Գեր կենդանիները նույնպես նրանց բաժինն են. ժողովուրդը թանապուրով և ցամաք հացով է ապրում, անուշահամ գինին նրանց բաժինն է. ժողովուրդը պարզ ջրով է իր ծարավը հագեցնում, բեհեզն ու ծիրանին և տարագագործ կերպասները ազնվականին է տալիս. ինքը պարզ կտավ կամ շալ է հագնում, շքեղ ու փառավոր ապարանքներ է շինում նրանց համար. ինքն անշուք տներում կամ խրճիթներում է ապրում:

Ժողովրդի մեծագույն մասը միշտ կարոտ ու չարչարված կյանք է վարում: Ժողովրդի մեծ մասը տակավին մաշվում է ծանր աշխատանքի և կարոտության մեջ ոչ միայն արևելքում, այլև արևմտյան քաղաքակրթության մեջ, ուր լուսավորությունը տարածված է: Ես լսել եմ և հարցնելով գիտեմ, թե եվրոպայի բանվորների կյանքը շատ դառն է,

նրանց ապրուստը միայն օրական պարենն ու հացն է, բանվորի համար գանձ ու ապագա չկա, բանվորը միշտ բանվոր է մնում, իսկ գործարանատերն անհուն հարստության տեր է լինում:

Այդչափ և այդպիսին են, ազնի՛կ որդյակ իմ, ժողովրդի գործունյա կյանքը և ընդհանուր աշխարհին մատուցած մեծամեծ արգասիքը, որ հարևանցի տեսությամբ անցանք, և պետք է խոստովանել, որ քաղաքակիրթ աշխարհում ժողովուրդը մեծ տարերք է կազմում, և առաջադիմության ընդարձակ ասպարեզը ժողովրդի աշխատանքով է չափել:

Այժմ դառնանք և նկարագրենք ազնվական դասին, որի դիրքը, կարգը, աստիճանը, պաշտոնը, պարտականությունները և կենցաղավարությունն աշխարհում խոնարհ դասից շատ վեր է համարվում:

Այս վերակարգ դասին է պատկանում աշխարհավարությունը, աշխարհաշինությունը, քաղաքագիտությունը, դատավորությունը և այլն: Իրենք ժողովրդից առավել պետք է կրթված լինեն, քանի որ երկրի կառավարության սանձն իրենց ձեռքն է, երկրի շահն ու վնաս կշռող նժարը իրենց խելքն է: Այդ վարիչ իշխանական կարգն է, որ խորհում է, կարգադրում, առաջ տանում քաղաքակրթության կառքը:

Թողնենք ազնվականական դասի այդ աշխարհավարական մասը, որի համար արդեն նախագլխի մեջ գրել եմ, թե ինչ է իշխանական պաշտոնը և պարտականությունները: Այժմ խոսենք ազնվականական դասի այլևայլ հանգամանքների և պարտականությունների մասին. Նրանք, որոնց բախտը բերել է հարուստ և մեծատուն լինել աշխարհում, մեծ պարտականություններ ունեն կատարելու. «... նրան, ում շատ է տրված, նրանից շատ էլ կպահանջվի», – ասաց Քրիստոս (Ղուկ. ԺԲ 48):

Բայց դու հարցասեր եղի՛ր, որդյա՛կ իմ, քննենք, թե ովքե՞՞ր են աշխարհում իրոք և ճշմարիտ ազնվականները, ինչպես Աբրահամը, Հակոբը և Հոբը, որոնց արդար վաստակին ուրիշի զրկանք չէր խառնված, և ովքե՞՞ր են անարդար և նենգող ազնվականները, որոնց հարստության հողն ու ոսկին անիրավությունից է գոյացել, կա՛մ զրկելով ու հարստահարելով և կա՛մ նենգության բյուր հնարքներ գործի գնելով են աշխարհում մեծատուն, իշխան, պայազատ և ազնվական դարձել: Այս անարդար ազնվականների նկարագիրն իր ժամանակին եսային է հանել. «... ձեր վաճառականները գինուն ջուր են խառնում, ձեր իշխաններն ապստամբներ են և գողերին գողակից, կաշառք սիրող են և

վրեժինդիր, որբերի իրավունքը չեն պաշտպանում և ուշադրություն չեն դարձնում այրիների դատին» (Եսայի Ա. 22–23), որով մարդարենցույց է տալիս, թե որքան մեծ անիրավություններ էին գործում իսրայելի իշխանները։ Նրանք շատ անդամ խիստ խորամանկ միջոցներ գործի դնելով էին կալվածատեր դառնում, ինչպես դարձյալ նույն մարդարեն է հայտնում. «Վա՛յ նրանց, որոնք տանը տուն են կցում և ագարակին ագարակ միացնում, որպեսզի ընկերոջն արտաքսեն. բայց մի՞թե երկրի վրա մենակ դուք եք ապրելու» (Եսայի Ե. 8)։ Աստված այսպես է դատում աշխարհի անիրավ ազնվականներին, բայց աշխարհի դատաստանն այդպես չէ, որովհետև ով որ ոսկե գանձ ունի, ով որ կալվածատեր է, ով որ իշխան է և տիրում է, աշխարհի աչքին դատաստանով նա միշտ ազնվական է համարվում։

Իսկ արդար վաստակով և ուղիղ աշխատանքով հարստացած ազնվականները շատ հազվագյուտ են աշխարհում, եթե որոնենք, ավելի շատ կտտնենք վաճառականների, արհեստավորների և հողագործների մեջ։ Դու այնպես չըմբռնես, թե իրոք մեծահարուստ ազնվական լինելու համար պետք է անգլիացի լորդերի չափ անհուն ոսկի և հող ունենալ, որով-

հետև ճշմարիտ ազնվականության հատկանիշը միայն հողն ու ոսկին չեն, որ սոսկ նյութական հարստություն են կազմում, այլ առավել մեծ է հոգու և բարքերի ազնվականությունը, որ բարոյական առաքինության օրենքներն է պահում, որ ժողովրդասեր է և անբարեհաճ լինելով՝ չի մեծամտում, որ ագահ և ժլատ լինելով՝ ձեռք չի կծկում, այլ իր հարստության ոսկին հասարակության բարիքի համար առատ սփոռում է, որ առանց փառասեր ոգու՝ ուղիղ և բարի նպատակով մեծագործում է ժողովրդի առաջադիմության համար, որ լուսավորության տներ ու դպրոցներ է կանգնեցնում, գրատներ և թանգարաններ է հաստատում, մատենագիր հեղինակներին է քաջալերում, գործարաններ է բացում, ազգի աղքատ ու պարապ որդիներին գործ է գտնում, բարեպաշտ ու մարդասիրական ոգով աղքատանոց, հիվանդանոց շինելով՝ ազգի թշվառներին է պատսպարում, Հոբի նման իր ոչխարների բրդից բաժին հանելով՝ մերկերի թիկունքն է տաքացնում. այսպես է կատարում իր պարտքը ճշմարիտ ազնվականը, նա շարունակ խորհում է Աստծու և աշխարհի առաջ միայն մեծագործ առաքինությամբ բարձրանալ՝ միշտ հիշելով Հիսուսի պատվերը՝ աջով գործում է և ձախը չի իմանում (Հմմտ. Մատթ.

Զ Յ), իր փառքն ու սրտի հաճույքը միայն իր առաքինությամբ է շատանում:

Ցույց տանք նաև, թե անիրավությամբ ու զրկելով հարստացած ազնվականների գործն ի՞նչ է:

Այդպիսի սուտանուն ազնվականների ճանապարհը շատ բազմադեմ է աշխարհում: Ոմանք հարստահարելով, հափշտակելով են հարստանում, ոմանք դիպվածով են հարստանում, որ բախտ են համարում, և հանկարծ մի օրում մեծանալով՝ ազնվական են դառնում, միայն թե այն հարստության գանձերը, որ մարդ առանց աշխատանքի, դյուրությամբ գտնում է, շատ բնական է, որ նույն դյուրությամբ էլ կորցնում է: Այսպիսիների օրինակներ շատ կան աշխարհում, և մենք մեր ժամանակի մեջ տեսանք ու տակավին կտեսնենք: Ո՞ւր են Պոլսի մեր հին հարուստ ու հայ դրամափոխները, որոնց վստահությանն էր հանձնված Տերության գանձը. այսօր նրանց որդիներից շատերը հայրենի ժառանգության մեծագանձ հարստության հետ կորցրին նաև ազնվականի պատիվը: Ոմանք էլ հնարագետ և ամեն խարդախ միջոցներ գործն դնելով են հարստանում, իսկ ոմանք, կարծես թե բնությունից արծաթաեր բարք ունենալով, անհնարին ագահությամբ և ամենախիստ

խնայողությամբ կյանք վարելով են հարստանում: Զմոռանանք այս կարգի հետ հիշել նաև այն կալվածատեր ազնվականներին, որոնց հարստությունը կարծվում է, թե հողն է, բայց հողից առավել հողագործ մշակների ճակատից թափված քրտինքն է: Այդ անգութ և խստաբարով կալվածատերերն իրենց վաստակավոր մշակներին շարունակ մաշեցնում են աշխատանքում. կամ կիսավարծ և կամ վարձահատ լինելով՝ խեղճ մշակները միշտ մշակ են մնացել, իսկ կալվածատերերը դարձել են ազնվական: Թողնենք վարձահատության զրկանքը, ուրիշ առավել սոսկալի զրկանքներ քեզ պատմեմ, որոնց ես ինքս եմ ականատես եղել և հարցուփորձով տեղեկացել:

Մի անգամ մայրաքաղաքի հայ ազնվականներից մեկի ագարակը գնացի, որտեղ շատ ծառայող մշակներ կային, և ես այն պահին պատահեցի, երբ մշակներն, աշխատանքից հոգնած, նստել, հաց էին ուտում: Տեսա, որ իրենց կերակուրը միայն սև հաց և խաշած լոբի էր, ուրիշ ոչինչ: Ես այնպես կարծեցի, որ այդ օրը դա պատահականություն էր, ուստի հարցուփորձ արեցի ագարակատեր ազնվականին, թե.

– Զեր մշակների կերակուրը միշտ աշխատ է, մանավանդ Զատկի այս մեծ օրերին:

– Այո՛, – ասաց, – տարին բոլոր դրանց կերակուրն այդ է միայն, մշակների համար Զատիկի, Բարեկենդան չկա, այլ միշտ միօրինակ հացն ու լորին է նրանց կերակուրը:

Հոգիս խռովվեց, կրկին հարցրեցի.

– Մի՞թե այս աշխատավոր մշակները, որոնց ձեռքից բուն ագարակից ելած բազմապատիկ բերք եք ընդունում, մի՞թե դրանք կաթից, մածունից, յուղից, պանրից և այլ զանազան բերքից մասնաբաժին չունեն:

– Ո՛չ, պատասխանեց ազնվականը, – եթե ագարակի մշակներն այդ բերքից ուտելու իրավունք և բաժին ունենան, այլևս մեր ագարակը ոչ մի շահ չէր ունենա, քանի որ մեր գլխավոր շահը պետք է նրանց խիստ ու սակավապետ կյանքից գոյանա:

Ահավասիկ ագարակատեր մեծատուն ազնվականության փառքը, դու մտքիդ մեջ ինքնին դատաստան արա՛, ազնի՛վ որդյակ իմ, Ասիայի և մեր հայաբնակ աշխարհի մշակները երջանիկ ու բախտավոր են, որոնք կաթով, յուղով և այլ կերակուրներով են սնվում: Փողոցի աղքատներն էլ տարվա նավակատյաց օրերին են մատաղ ուտելով մսի համ առնում, իսկ այդ ազնվականների մշակները չգիտեն, թե միսն ինչ համ ունի:

Աստված վերեկից տեսնում և մշակներին զրկող ու հարստահարող կալվածատերերի համար մարգարեի բերանով ասում է. «Հնձվորների բողոքն իմ ականջին հասավ» (Հակ. Ե 4) և այլն:

Մեծատուն Հոբը, որ հին աշխարհում մի ճշմարիտ ազնվական նահապետ էր, առաջ էր բերում իր ազնվականական պարտականությունները, որ անթերի կատարել էր, մինչդեռ իր բարեկամները վիճելով կասկած էին հարուցում: Ազնվական նահատակը մեծ համարձակությամբ ցույց էր տալիս իր առաքինությունը և ասում. «Իրավունքն արդար թե անտեսել եմ ես իմ ծառայի կամ իմ աղախնի, որ մոտ է եկել իմ դատաստանին, ի՞նչ եմ անելու, եթե հարցուփորձ անի ինձ Տերը, կամ թե դատ անի, ի՞նչ պատասխան եմ ես տալու նրան: Զէ՞ որ ինձ նման նրանք էլ մի օր պտղավորվել են ինչ՝ որ արգանդում. նույն որովայնում ենք գոյացել մենք: Իսկ այն խեղճին, որ կարիքի մեջ էր, աղյոք երբեւէ օգնության չեկա՞։ Թողեցի՞ արդյոք, որ այրու աչքերն ողբալուց մաշվեն: Կամ թե պատառս մենա՞կ կերա ես ու չհանեցի՞ բաժին որբերին: Իմ երիտասարդ օրերից հոր պես սնունդ տվեցի, մորս արգանդից ուղի ցույց տվի: Կորած մերկերին անտեսեցի՞ ես ու

չհագցրի՞։ Զքավորներն ինձ չօրհնեցի՞ն միթե,
նրանց թիկունքը խաշներիս բրդով էլ չտա-
քացա՞վ։ Թե որբի վրա ձեռք եմ բարձրացրել՝
հաշվելով, թե շատ են օգնականներս, ապա թող
ուսս թափվի անրակից, իսկ բազուկս էլ պոկվի
արմունկից» (Հոբ ԼԱ 13-22) և այլն։

Ահավասիկ ճշմարիտ ազնվականության
գործն ու պարտականությունները, որ մեծանձն
Հորբ վեհանձնաբար ճառում է ու վստահու-
թյամբ արդարանում Աստծու առաջ, թեև բա-
րեկամ դատավորները մեղապարտ էին համա-
րում իրեն՝ կարծելով, թե Հոբն իր պատճառած
զրկանքների երեսից է պատուհասվել։

Է՛, ազնվամի՛տ որդյակ իմ, դու այժմ համե-
մատի՛ր հին աշխարհի և մեր դարի ազնվական-
ների գործն ու կյանքը և կհասկանաս, որ աշ-
խարհի բոլոր հարուստ մեծատունները չեն, որ
ազնվականության տիտղոս են ստացել և իրոք
ու ճշմարիտ ազնվականներ են։ Եթե մարդու
հոգին ստրկացված է ընչափաղցությամբ և
զուրկ է մեծանձնական առաքինությունից, մի՛
կարծիր, թե ընդարձակ հողն ու սոկին և անու-
նը մարդուն ստույգ ազնվական են դարձնում։
Կան մարդիկ, որոնք թեպետ մեծահարուստ չեն,
բայց իրենց չափավորության մեջ առավել են մե-
ծագործում, քան համբավավոր ազնվականը։

Իսկ դու, անանո՛ւն որդյակ իմ, որ ազնվա-
կան չես ծնվել, այլ շինական ժողովրդի մի հա-
սարակ զավակն ես, ջանացիր փոքրիկությանդ
մեջ փոքրիկ ազնվական լինել. ո՛չ գանձ ունես և
ո՛չ մեծ կալվածատեր ես, որ սոկով և հարստու-
թյամբ մեծագործես, բայց դու գրով, ուսումով
և կրթությամբ մեծագործի՛ր։

Սիրի՛ր նաև բարքերի ազնվությունը, անկեղծ
կենցաղավարության ազնվությունը, ամեն ին-
չից առավել՝ ընկերասիրության ազնվությունը։
Եթե աշխարհի դեպքերը նպաստեն քեզ, կամ
գիրը և աշխատանքը քեզ ոսկի բերեն, և դու,
հանկարծ խոնարհ ժողովրդի վիճակից բարձ-
րանալով, ձգտես դեպի ազնվականության դա-
սը, մի անարդիր գիրն ու գրիչը, այլ ջանա, որ
գրով ու սոկով միաժամանակ ազնվանաս։

Ես գիտեմ, դու ևս գիտես՝ Քրիստոսը, որ աղ-
քատ և ժողովրդասեր էր, վկայեց, թե մամոնան
անիրավ է, անիրավ են և նրանք, որ սոսկ կեղծում
են մամոնայի ազնվականությունը, բայց արդար
և ժողովրդասեր ազնվականը գիտի բարվոք գոր-
ծի դնել այն և քիչ թե շատ շահն ավելացնել իբրև
հավատարիմ ծառա Աստծու տնտեսությանը։

Փափագում եմ քեզ համար, որդյա՛կ, որ դու փոք-
րուց, այսինքն՝ այդ քո այժմյան վիճակի մեջ միշտ
հավատարիմ լինես, որպեսզի շատին արժանանաս։

Որքան կարող ես, կյանքն ազնվացրո՛ւ աշխարհում, մի՛ ասա, թե մարդկանց կյանքում և նրանց աչքին առանց ոսկու ու մեծության միշտ նվաստագույն կհամարվես: Կողովեմ քեզ, եթե անձնաճանաչ լինելով՝ խոնարհամտես, բայց չեմ ների քեզ, եթե այնքան նվաստանաս, մինչև մոռանաս մարդկային հավասար պատիվը: Իմացի՛ր նաև, որ Աստված մարդկանց հավասար ազնվական է ստեղծել և այնպես է համարում, որ ոչ մի զանազանություն չկա ազնվականի ու ժողովրդի միջև, միայն աշխարհի աչքն ու դատաստանն է խսրություն դնում և այդպես նայում, իսկ Աստծու մեծության առաջ աստվածապատկեր մարդը հավասար ազնվական է, մանավանդ եկեղեցու հավատացյալ ընկերության մեջ, որոնց համար Քրիստոսն ասաց, թե՝ «Դուք բոլորդ եղբայրներ եք» (Մատթ. հԳ 8):

Մի վերջին խրատ էլ Սողոմոնից քեզ ավանդեմ, և քո խնդրանքը թող միշտ սա լինի Աստծու առաջ. «Հարստություն և աղքատություն մի՛ տուր ինձ, այլ ինձ համար կշռի՛ր արժանին, որ բավական է: Զլինի թե հարստանամ և ուրանամ քեզ ու ասեմ. «Ո՞վ է ինձ տեսնում». կամ աղքատանամ ու բան գողանամ և երդում ուտեմ իմ Աստծու անունով» (Առակ. Լ 8-9):

ԴԱՍ 2

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՀԱՅ

Աշխատանքը մարդու կյանքն արդյունավորող Աստծու օրհնած սերմն է, եթե այն հույսով ցանես, շահութաբերությամբ կհնձես, կյանքդ լիասեղան հացով և բարիքով կցվի, եթե չցանես, ոչինչ չես հնձի և սովամահ կլինես:

Մարդու աշխատանքին և գործունյա կյանքին պիտանի և օգտակար դաս պիտի տամ քեզ, ժիր ու գործասեր որդյա՛կ իմ, ականջդ բա՛ց և ինձ տո՛ւր քո միտքը, որովհետեւ այս կենսական դասն է, որ քո կյանքը կբեղմնավորի, դու անպետք, անպտուղ ծառ չես լինի մարդկային ընկերության դրախտի մեջ, որ պտուղ չտալով՝ միայն հող են զբաղեցնում, որ իրավամբ հատել է պետք՝ ըստ Քրիստոսի հայտնի առակի (Ղուկ. ԺԳ 6-9): Եթե մարդն ինքնին ազատ իրավունք ունի իր տնկած և դարմանած պարտեզի ան-

պտուղ ծառերը հատելու, որքա՞ն առավել տիրական իրավունք ունի դրախտ տնկագործող Արարիչը հատելու այն ապարդյուն մարդատունկերը, որոնք ոչ միայն հակառակ են վարդում տիրական վճռի, այլև տիեզերքի բնական օրենքի դեմ: Շատ մեղապարտ է լինում մարդը, եթե դիտում ու տեսնում է, որ երկինքն ու երկիրը շարժվում և գործում են՝ անդադար, միշտ արդյունավորելով այս մեծաշահ դաստակերտը թե՛ մարդու պետքերի և թե՛ բարեխնամ Արարչապետի փառքի համար:

Տեսողությամբ ու մտքով կույր և կորահայց մի՛ եղիր, որդյա՛կ իմ Սամվել, գլուխող բարձրացրո՛ւ, ավագ աչքով դիտի՛ր և տե՛ս բովանդակ տիեզերական գործունեության հանդեսը, որ գիշեր-ցերեկ շարժման և փոփոխության մեջ անվրեալ կատարում են իրենց սահմանված ընթացքը՝ միշտ հպատակ լինելով հավիտենական օրենքին: Եվ նույն ինքը՝ տիեզերակալ Արարիչը, մի՞թե անգործ հանգչում է: Ո՛չ, որովհետեւ Քրիստոսն ասաց. «Իմ Հայրը մինչև այժմ գործում է, ուրեմն և ես գործում եմ» (Հովհ. Ե 17): Եվ ի՞նչ է նրա գործը. դու տես, թե ինչ է: Իր աներեւույթ գահից տիեզերքի սանձը բոնել ու վարել, նախախնամել արարած էակներին, որ գոյությունից դեպի չգոյություն չդառնան, մեռելներին հողին

հանձնել, հոգիներն անմահության կոչել և նորածիններին նոր հոգի տալով, մարդու կյանքը վերանորոգելով պահպանել: Զմոռանանք նաև նրա գերագույն արդար դատավոր լինելը, որով դատում է աշխարհը. իսկ մարդիկ նույնիսկ չգիտեն, թե հողմը որտեղի՞ց է դալիս և ո՞ւր է գնում (Հմմտ. Հովհ. Գ 8):

Երանի թե մեր աչքը պարզապես զորեր և մենք տեսնեինք, թե այն կապուտակ երկնակամարի անհուն-անհամար մարմինների մեջ ի՞նչ աշխատանք և տքնություն կա: Արեւ, լուսինը, մոլորակները և բոլոր համաստեղությունները թեպետ մարդու նման ազատ էակներ չեն և կարծես թե ինքնավար, ինքնաշարժ են, բայց մղվում և կառավարվում են արարչապետ օրենքով:

Իսկ մեր աշխարհը, որ մեր աչքի առաջ է և մեր ոտքի տակ, մարդկային իմաստամիրությունը շարունակ հետազոտում ու տեսնում է, թե ինչպես ծովն ու ցամաքը, բոլոր բուսական խոտերն ու ծառերը, անշունչ և չնչավոր էակները, տարերքը, ժամանակը, եղանակները և առհասարակ բովանդակ երկրագունդն անդադար շարժման և աշխատանքի մեջ են, որոնց արդյունքն ու նպատակը մեզ լավ հայտնի են. մարդու կյանքը, նրա հետ և բոլոր կենդանիների կյանքը մի օրվա մեջ կչքանա, եթե երկիրը

ցորեն չտա մեզ համար, եթե խոտ չբուսեցնի անասունների համար, ծառերը չպտղաբերեն և արեն իր լույսով ու ջերմությամբ չկենդանացնի մեր աշխարհը։ Այս ամենի հետ եթե արարչական խնամքն իր երեսը դարձնի, ի՞նչ կլինի մարդու և բոլոր չնչավորների կյանքը. այդ խոստովանում է Դավիթը. «Երբ շրջում ես երեսդ նրանցից, խոռվում են նրանք, երբ նրանցից հանում ես նրանց շունչը, սպառվում և հող են դառնում» (Սաղմ. ՃԳ 29):

Իսկ մարդու աշխատանքի մասին ասում է. «Մարդը մինչև երեկո գնում է իր գործին ու վաստակին իր ձեռքերի» (Սաղմ. ՃԳ 23): Որովհետև մարդին այս աշխարհում մի աշխատող մշակ է, քանի որ կյանք ունի, աշխատանքն իր բնական ու բարոյական պարտականությունն է:

Մարդկային հասարակական աշխարհը՝ թագավորից սկսած մինչև գյուղական մշակը, ամենքն էլ անդադար աշխատանքով են զբաղվում: Բայց դու պիտի տեսնես, որդյա՞կ իմ, թե աշխարհում ամեն մարդ աշխատանքի իր բաժինն ունի:

Հին աշխարհում մարդկանց աշխատանքը խիստ պարզ և անձուկ վիճակի մեջ էր, բայց նոր աշխարհը և քաղաքակրթությունը մարդկանց աշխատանքի ասպարեզը շատ-շատ ըն-

դարձակեց, և այսօր մարդկային հասարակությունը հազարավոր գործերով է զբաղվում: Այդ ևս բավական չէ, մարդիկ տակավին անդուլ-անդադար տքնում են, որ նորանոր արհեստներ և գործեր հնարեն զբաղասեր մարդու համար: Բայց գիտե՞ս՝ մարդը իր կյանքում որքան պետքեր է հնարում, բազմապատկում, այնքան ևս իր ցանկությունն է գրգռում և երբեք շատ չի համարում: Ո՞վ գիտի՝ թերեւս նախախնամությունը մարդու ցանկությանը չափ չդրեց, որպեսզի մարդը հնարասեր, գործասեր լինի և հայթայթի իր կյանքի պետքերը: Բայց ինչո՞ւ ոմանց ամենաածանը և ոմանց ամենաթեթև աշխատանքը բաժին հասավ. մի՛ զարմացիր, այդ ևս անհավասարության օրենքից է: Բայց թե՛ ծանր և թե՛ թեթև, թե՛ մտքով ու թե՛ մարմնով մարդիկ ընդհանրապես աշխատանքի են դատապարտված: Թագավորը ևս, որին մենք անշխատ ենք համարում, աշխարհի հոգսերի մասին մտածելով է աշխատում, իշխանը, դատավորը աշխարհավարությամբ են աշխատում, զորականը, զինվորը պատերազմի դաշտում արյամբ են աշխատում: Այսպես նաև վաճառականն՝ իր վաճառականության մեջ, արհեստագորն՝ իր արհեստի մեջ, իմաստասերն՝ իր կարասի մեջ, մատենագիր հեղինակն՝ իր մտավոր

ու գրավոր աշխատանքի մեջ, և բոլորից առավել հողագործ մշակը՝ արևակեղ դաշտի մեջ:

Ես այն բազում գործերից ո՞ր մեկը թվեմ, որոնց մեջ հետ մարդը հոգով ու մարմնով տառապում է ու տառապում: Եվ դու գիտե՞ս, թե ո՞րն է իր նպատակը և ջանքը. Սողոմոնը բացարում է քեզ այդ. «Մարդու բոլոր ջանքերն իր բերանի համար են» (Ժող. Զ 7), այսինքն՝ թե մարդն այս աշխարհում իր բերանի ու փորի համար է ջանում և աշխատում: Երանի թե յուրաքանչյուր մարդու աշխատած հացն իր բերանին հասներ, որովհետև կան մարդիկ, որ բյուրավոր մարդկանց աշխատած հացն իրենք են ուտում, և ես չեմ հիշեցնում քեզ, դու ինքդ գտի՛ր, թե ովքեր են այդ կարդի մարդիկ աշխարհում:

Այս անհավասար բաժնի ու կյանքի դասը պետք չէ կրկնեմ քեզ, որդյա՛կ, աշխատանքի մասին խոսեմ միայն, որ մարդու և իր կյանքի ճակատագիրն է, մարդը չի կարող քերել ու եղծել այն: Մեծն Սողոմոնն իր գահից կարեկից աչքով տեսավ մարդու քաշած վշտակիր ու տառապալից կյանքը, ասաց. «Աստված դաժան զբաղմունք է տվել մարդու որդիներին, որ նրանցով զբաղվեն» (Ժող. Ա 13): Չիստորվե՛ս, որդյա՛կ իմ, այլ ուղիղ մտքով հասկացի՛ր Սողո-

մոնի խոսքը, որով պարսավում է ունայնամիտ և չարարհեստ մարդկանց անշահ աշխատանքը և ագահության ընդունայն դեգերանքը: Քա՛վ, թե այնպես կարծեմ, թե բարեխնամ Արարիչը բարի աշխատանքն իրու չար զբաղմունք տվեց մարդուն: Եթե այսպես կարծենք, ուրեմն Աստված մարդուն ստեղծեց, որ նրան չարազբաղ աշխատանքով ջախջախի և ինքն ուրախանա կամ զվարճանա: Բայց ոչ, նա մարդուն աշխարհի ագարակի մեջ դրեց, որպեսզի գործի ու վայելի իր արդար վաստակը, երախտապարտ լինի, օրհնի ու փառավորի իր Արարչին:

Այժմ գրենք, թե ո՞րն է մարդու նյութական աշխատանքի արդյունքը: Այդ ինքնին լավ հայտնի է մեզ, որ մարդկանց աշխատանքի արդյունքը հացը և հարստությունն է, և հարստության առաջին և մշտնջենավոր աղբյուրը հողն ու երկիրն են, որ մեծատուն Աստված տվեց մարդկանց իրու օժիտ կամ իրու ժառանգական կալվածք, որ աշխատեն ու պահեն: Մարդու այս ամենահարուստ կալվածքն իր ծոցից և ակունքից, իրու անհատահոս աղբյուր, շարունակ բխում է, և հորդացած գետերի պես անսպառ և անհատնում հորդում են հարստության գանձերը, ոչ միայն հաց կամ ուրիշ արմտիք, որ մեր կյանքի բուն սնունդն են, այլև հանքային

գանձեր՝ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, անագ, կապար և այլ շատ պես-պես մետաղներ, որ արհեստավորների ձեռքով դարձյալ մեր կյանքին են ծառայում և բազմապատիկ հավելում մարդու հարստության մեծությունը:

Սակայն երկրին այս բնական հարստությունը բավարար չէ, այլ պետք է հողի ու գետնի հետ: Քրիստոսն ասում է, թե՝ հողն ինքն իրենից պառուղ է տալիս (*Մարկ. 7:28*), այո՛, շատ բաներ կան, որ առանց մարդու աշխատանքի երկիրն իր ինքնաբերությամբ մատակարարում է, օրինակ՝ անմշակ անտառները և այլ անձեռատունկ շատ վայրենի ծառեր՝ չհաշված լեռների և դաշտերի բուսականությունն ու խոտերը: Քրիստոսի խոսքը մասնավորապես ցորենաբույսի համար է, բայց այն ևս, մինչև մշակը հողը չհերկի և չցանի սերմը, արտն ինքնին ցորեն չի տա:

Ուստի եթե հարստության առաջին ամենաբուխ աղբյուրը հողն է, պետք է համարենք, որ այդ աղբյուրը առատացնող ձեռքը մարդու աշխատանքն է:

Հանճարեղ մարդը շատ պես-պես վայրի բույսեր, կենդանիներ ընտելացրեց, որոնք այսօր առհասարակ մեր կարիքներին են ծառայում: Հողասեր մշակն իր աշխատանքով բազ-

մատեսակ հունդեր է ցանում, մատաղ տունկեր է տնկում և բյուրապատիկ բերքեր ստանալով՝ հարստանում: Վաստակասեր մարդը սոսկ երկրի երեսն՝ իբրև իր անդուլ աշխատանքի ասպարեզ, բավ չհամարեց, այլ փորեց հողը, մտավ մինչև երկրի սիրտը, կրկտեց, գտավ ոսկին ու արծաթը, հանեց, ճոխացրեց իր հարստության գանձարանը: Երկաթ հանեց, հողագործի խոփ ու մանգաղի հետ սուրը ևս կոփեց իր ընկերոջ կյանքն առնելու համար:

Մարդու հարստության երրորդ ամենամեծ աղբյուրը, որ միանում է հողի և աշխատանքի հետ և որով ահագին օվկիանոսի չափ հարստության ծով է կազմում, ի՞նչն է, գիտե՞ս: Հարցրո՞ւ, որդյա՞կ իմ, և ես կասեմ քեզ. գիտությունը և արհեստն է, որ այնքան և անհամար նորանոր հարստության աղբյուրներ բացեց, որ չեմ կարող թվել և ճառել:

Դու պետք է գիտենաս, թե կի՞ն դարերում, երբ գիտությունը և արհեստը իրենց խանձարուրի մեջ էին, մարդու հարստության գլխավոր աղբյուրները միայն հողագործությունը և խաչնարածությունն էին, դեռ չէին զարգացել ու չէին ծնվել այն մեծ և աշխատավոր հանճարները, որոնք նորանոր գյուտեր և արհեստներ ծնեցին:

Իսկ վերջին դարերում՝ մանավանդ տասնիններորդ առաջադիմական դարում, որում տքնող հանճարներն իրենց գյուտտերով հորդեցրին, ընդարձակեցին հարստության աղբյուրի ակները, այդ մշտաբուխ աշխարհի ակներից վտակներ, գետեր բխեցին, առհասարակ ողողեցին Արևմտյան Եվրոպա աշխարհը, նաև մեր արևելյան աշխարհը, որ նա կարողանա առաջադիմել:

Խոսենք այժմ անգործ և անաշխատ կյանքի մասին, որի հետևանքն աղքատությունն է: Անտարակույս աղքատությունը ևս իր սկզբնական պատճառներն ունի. եթե հարստության պատճառը համարում ենք, որ մարդու աշխատանքը և ժրագործ ձեռքն են, ուստի պետք է ուղիղ հասկանանք, թե ապա ուրեմն անգործ ձեռքը և անաշխատ կյանքը մարդու չքավորության բուն նախապատճառներն են: Ասիայի արևելյան աշխարհը, ուր մենք ենք բնակվում, երկրի բնական հարստությամբ ծածկված ամենաճոխ գանձարանն է: Մեր լայնածավալ, արդավանդ դաշտերը, որ ամեն տեսակի սերմերի և տնկագործության պիտանի են, եթե մշակվեն՝ իրենց բարեբերության և առատության արդյունքն աշխարհին կբավականացնի: Մեր լեռներն ու հովիտները եթե ապահովեն, արդյո՞ք

Շվեյցարիայի չափ կովեր ու եզներ, անթիվ-անհամար ոչխարի հոտեր չեն կերակրվի: Հապամեր ինքնաբույս, անմշակ անտառները, մեր բազմագանձ հանքերը, որ այնպիս անկրկիտ, կուսական մնացել են հողի տակ՝ անգործ և ապարդյուն:

Ինչպես գրեցի վերը, հիշի՛ր, որդյա՛կ իմ, որ երբ աշխատանքը չի միանում բնական հարստության հետ, իրեւ ծածկված գանձ՝ հարստությունը մնում է հողի ծոցում, և մարդիկ՝ անհաց, անգանձ, միշտ աղքատ և կարիքի մեջ, անտեղյակ շրջում են ոտքի տակ թաղված գանձերի վրայով:

Ուրեմն՝ մեր աղքատության աղբյուրի մի ակը մեր անաշխատ ձեռքի և թմրած ոգու ծուլությունն է: Մի մարդ, մի ժողովուրդ, մի աշխարհ, որ իրեն աշխատանքի չի նվիրել, նա միշտ հացի կարոտ կմնա, քանի որ աշխարհում հացն ու գանձը միայն աշխատող ազգի ու ժողովրդի բաժինն են, և սրա ծշմարիտ ապացույցը Եվրոպայի ժողովուրդն է:

Բայց ի՞նչ է պետք և ո՞րն է զորավոր դարմանը, որ անաշխատության մեջ բթացած ու թմրած ժողովրդի միտքն ու հոգին մեռելությունից հանի ու մղի դեպի գործունեության կյանք: Այն է պետք, ինչ որ պետք եկավ

արևմտյան ազգերին, այսինքն՝ լույս ու գիտություն։ Լույսն ու գիտությունը մեր գործող զգայարանները և աշխատանքային կյանքը ուղղում և մեր առաջադիմության քայլերի համար ճանապարհ են բացում և ապահովում մեր արդյունքը և հարստությունը։ Արևելյան ժողովուրդները գուրկ են այս առաջնորդող լույսից և մղիչ զորությունից և մնում են այնտեղ, որտեղ որ են՝ բեղմնավոր երկրում՝ միշտ կարոտ, քանի որ հեղգամիտ եղան, աշխատանք չփրեցին, ուսումն ատեցին, հանճարն անպատվեցին, գրասերն անոթի մեռավ, արհեստավորն առանց քաջալերության մնաց. եթե կային մեծամեծ խոչընդոտներ, վեր ելան. մեր հասարակական կյանքը դարձավ մի անշարժ դիակ. տեսանք՝ առաջադեմ աշխարհը և իր անթիվ գործունեության օրինակները մեր աչքի առաջ են, մեր միտքն ու հոգին տակավին չնորոգվեցին, մնացինք այդպես հնության և հեղդության մեջ։ Մենք բանական մարդ ծնվեցինք, բայց մեր ոտքի տակ աշխատող չքոտի մրջյունի ժիր գործունեությունը չտեսանք։ Մեծն Սողոմոնն իր խրատով աշխարհի ծույլերին հղում է դեպի մրջյունի բույնը։

Եվ դու, որդյակ իմ, երբ մրջյունի բնից կանցնես, կանգնի՛ր մի պահ ու գննի՛ր, տե՛ս ու

զարմացի՛ր, թե որքա՞ն աշխույժ է այդ նկուն կենդանին. իր բնից մինչև քառասուն քայլից ավելի ուղղագիծ ճանապարհ է բացում, քարավան-քարավան անդադար գնում-գալիս է. միշտ մի հատիկ պարենով բեռնավորվում է, բերում է, ամբարում իր բնում, եթե պատահմամբ կոխես ու ճմլես իրեն գետնին, եթե սայլի անիվն իր ճանապարհի վրայով անցնի, հազարներով ջախջախվեն, նա տակավին իր աշխատանքը չի կասեցնի և երբեք չի թողնի իր բացած արյունոտ ուղեգիծը, այլ կոխի ու կանցնի դիակների վրայով՝ իբրև աշխատանքի աննկուն շահատակ։

Մրջյունը մարդ չէ, բայց նախատեսում է, ամուանը ժողովում, ամբարում է իր պաշարը, ձմռանը վայելում է՝ ազատ մնալով սովից։ Մարդը մրջյուն չէ, նախատեսող միտք ունի, և երբ չի նախատեսում, անգործ կյանք է վարում, ձմեռն, անշուշտ, սովամահ է լինում։

Թողնենք մրջյունի բույնը, գնանք դեպի մեղուն. նայի՛ր ու տե՛ս, թե որքան գործասեր է. երամ-երամ գնում են, ծաղկավետ հովիտներում շրջում, մեղրանյութ են ժողովում և գալիս են, փեթակի մեջ գործում, որի արդյունքը թագավորների սեղանն է զարդարում և մեղրամոմն Աստծու սեղանին է վառվում։

Հապա չտեսնե՞նք մեր պատերի վրայի սարդի գործունեությունը, որի համար ասում են, թե կտավագործության արհեստի հեղինակը լինելով՝ օրինակ է տվել մարդուն. տե՛ս՝ ինչպես է անդուլ ճգնում իր աշխատանքում, անդադար մանում է, հյուսում է՝ իր որսի ցանցը պատրաստելու համար։ Եվ ո՞րն է իր նպատակը՝ գիտե՞ս. միայն մի ճանճիկ որսալ և իր կյանքը պահել։

Թող մտածեն բանական մարդիկ և մեր աշխարհի ծույլերը, եթե սարդի համար մի ճանճիկ է պետք, ո՞վ չգիտի, որ իրենց համար էլ հաց է պետք, որովհետև մարդու կյանքը պահպանողը հացն է, մարդն առանց հացի կչքանա։ Մարդկային հասարակական կյանքը աշխատանքով է ապրում և հարատեռում։

«Եթե կա աշխարհի, երկրագնդի վրա ծայրագույն և անտանելի մի բեռ, այդ ծույլերի կյանքն է»,— հարցրին մի իմաստասերի, և նա այսպես պատասխանեց։

Այժմ, ինչպես տեսանք, սիրելի՛ իմ Սամվել, որ հարստության ծնողն աշխատանքն է. սրանից հետեւում է, որ աղքատության ծնողը ծուլությունն ու անգործ կյանքն է. երկուսից մեկի առաջնորդը միայն գիտությունը և լույսն է, իսկ մյուսինը՝ տգիտությունը և կուրությունը, քա-

նի որ մարդու թշվառության բուն աղետաբեր արմատը մտավոր կուրությունից է սկսվում և աճում։

Դու հիշո՞ւմ ես՝ Եվրոպայի գիտության կաճառից առաջ մեր իմաստասեր Եղիշեն ճշտությամբ նկարագրում է մարդու կույր կյանքը, երբ հազար երեք հարյուր տարի առաջ նա տեսնում է Հայոց աշխարհի թշվառությունը և անկատար կյանքը, այսպես է վճռում, թե՝ «Կուրությունը զրկում է ճառագայթից արեգակի և տգիտությունը զրկում է կատարյալ կյանքից»։

Այո՛ կուրությունը կյանք չունի, նա միշտ պետք է խարխափի աշխարհի հրապարակի վրա և մերթ էլ պատեպատ զարկելով՝ իր գլուխը ջախջախի։

Այլևս համառոտենք այս դասը, աշխատասեր և լուսասեր որդյա՛կ իմ. եթե բաղձում ենք, որ աղքատությունը և կուրությունը մեր աշխարհից վերանան, թշվառության աղբյուրի ակները խցանվեն, և հարստության ու երջանկության ակները բացվեն, աշխատանքը սիրենք ու պատվենք, հեղգամտությունը և ծույլ կյանքը ատենք ու հալածենք մեր անձից և մեր ընտանեկան սրահից։

Իսկ դու, իմ ջանասե՛ր որդյակ, որ մեր հայ-

ըենիքի մի պանդուխտ զավակն ես, երբ քեզ
կհաջողվի վերադառնալ քո հայրենի երկիր,
գործասիրություն և աշխատանք քարոզի՛ր,
ժրագործ եղի՛ր, կյանքու բեղմնավորի՛ր և բարի
օրինակ հանդիսացի՛ր քո հասակակից պատա-
նիներին: Թո՛ղ ոսկի ու գանձ, տա՛ր աշխատա-
սիրության իմ այս դասերը, տա՛ր, ավանդի՛ր
մեր հայրենիքի անուս, անդպրոց մանուկներին,
ասա՛նրանց, թե մեր հայրերը պանդիստություն
սիրեցին, օտարության մեջ մաշվեցին ու մեռան,
դուք ձեր հայրենիքի քաղցր ծոցից ու գրկից,
հողից ու ջրից բնավ մի՛ հեռացեք: Ասա՛, թող
աշխատեն, գործասեր լինեն և իրենց դառը
քրտինքը հայրենի հողի վրա թափեն: Այն հողն
ու ջուրը, որ օրհնել է Աստված, շատ հաց ու
հարստություն կտա իրենց: Հիշի՛ր դու և հի-
շեցրո՛ւ նրանց Սողոմնի օգտակար առակը.
«Ով մշակում է իր հողը, կկշտանա հացով, իսկ
ով հետևում է դատարկ բաների, տնանկ կմնա»
(Առակ. Ի՛՛ 19):

ԱՅԱ

ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻԴ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅ ԵՎ ԲԱՆ

Մարդիկ կան, որ միայն հացով են ապ-
րում, մարդիկ կան, որ հրեշտականում են,
ուզում են անհաց ապրել. երկու դասն էլ
միապես խոտրովում են ուղղությունից:
Արդար ու տնտես մարդը նա է, որ միա-
ժամանակ հացով և Աստծու խոսքով է
ապրում աշխարհում:

Ուղիղ տնտեսությունը մեր նյութական և բարո-
յական կյանքում այն իմաստուն և խոհեմ տնտե-
սող ձեռքն է, որ գիտի հացիվ ու բանիվ միաժա-
մանակ իր կյանքի պետքերը հոգալ, և Քրիստո-
սի խոսքի համաձայն՝ «Կայսրինը կայսրին տալ,
Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. Ի՛՛ 21, Մարկ. ԺԲ
17, Ղուկ. Ի 25):

Այդ տնտեսող ձեռքը պետք է արդարության
ու չափավորության մեջ պահել, որովհետև եթե

խիստ ընդարձակես այն, շռայլ ու գեխ կլինես, և եթե սաստիկ կծկես, ագահ ու ծլատ կլինես, եթե միայն քո անձին տաս և ընկերոջդ մոռանաս, զրկող կլինես, եթե կայսրինը տաս և Աստծունը մոռանաս, ապերախտ կլինես, եթե միայն նյութական կյանքիդ համար հացի պետքերը հոգաս և մոռանաս Աստծու խոսքը և բարոյական պետքերը, այնժամ դու թերահավատ և նյութապաշտ կլինես՝ կարծելով, թե մարդը սոսկ հացով կարող է ապրել: Եվ կապրի, այո՛, եթե մարդը հանձն առնի հավասարվել անսուններին և միայն խոսով ապրել:

Գիտենք, որ հացը մեր մարմնի անունդը և աճումն է, բայց հոգին ևս իր սնունդը և աճումն ունի, և դա Աստծու խոսքն է: Ուստի արդար տնտեսող ձեռք և միտք է պետք, որ նախ երկու ծայրահեղ կյանքից զգուշանա, ո՛չ ավելանա և ո՛չ նվազի, դրա հետ միասին ո՛չ հացը թողնի և ո՛չ Աստծու խոսքը, այլ իր կյանքի այդ երկու մեծ ու կենսական պետքերն առանց զրկանքների, արդար բաժնով հոգա՝ դիտելով նաև, թե մեր կյանքի բուն կենդանարար մասը հոգին է, որովհետև Քրիստոսն ասաց. «Հոգին է կենդանարար, մարմինը ոչ մի բան չի կարող անել» (Հովհ. Զ 64):

Սամվել, որդյա՛կ իմ, եթե դու հացը և խոսքը միաժամանակ սիրես, ուշադիր լսի՛ր այս դասը,

որպեսզի կարողանաս ուղիղ տնտեսությամբ կառավարել քո կյանքը, քանի որ առանց ուղիղ տնտեսության՝ մարդու կյանքն իր չափավորությունից կիսանդարվի, գանձը գանձարանից կսպառվի, և ցորենը՝ շտեմարանից: Մրա հետ միասին կսպառվի խոսքը հոգուց, կրոնը և հավատը՝ սրտից: Բայց խոսեմ նաև հացի և նյութական կյանքի տնտեսության մասին, քանի որ մարդիկ հացն ավելի են գնահատում, խոսքի և հոգու կյանքը որպես վերացական գաղափար համարելով՝ դժվարանում են ըմբռնել այն: Բայց անհնար է հացն ու խոսքը զատել իրարից. սրանք այնքան սերտ կապակցություն ունեն իրար հետ, ինչպես հոգին՝ մարմնի:

Խոհակա՛ն որդյակ իմ, ինչպես դու նախորդ դասի մեջ սովորեցիր, թե հարստության բուն աղբյուրը մարդու գործունյա աշխատանքն է, այսպես նաև հարստության գանձարանի հսկող պահապանն արթուն տնտեսությունն է: Աշխարհում յուրաքանչյուր մարդ իր կարգի և վիճակի մեջ առանձին-առանձին տնտեսապետ է, ամեն մեկը հաշիվ ու համար, պարտականություններ և իրավունքներ ունի. թագավորն իր աշխարհի տնտեսապետն է, իշխանը՝ ժողովրդի, հարուստն՝ իր կալվածքների, աղքատն՝ իր տնակի, քաղաքացին՝ իր արհեստի և շահավա-

ճառության, գյուղացին՝ իր հողագործության, և յուրաքանչյուր գերդաստան ու ընտանիք՝ տնային տնտեսության:

Երկրի միասնական տնտեսական վիճակը՝ ե՞րբ է խանգարվում, գիտե՞ս. երբ այդ կարգի մարդկանց մեծ ու փոքր դասերն առհասարակ խոտորվում են ուղիղ տնտեսության և պարտականությունների ու իրավունքների հավասար չափից:

Բայց պետք է նկատենք, որ այս խոտորումը միշտ բարձրագույն աստիճանից է սկսվում և զնում հասնում է մինչև ստորին աստիճանը, այսինքն՝ թագավորի պալատից մինչև հետին գյուղացու տունը: Այս տեսությունը շատ ճշմարիտ է և լավ հայտնի է մեզ, դրա բազում օրինակներն աշխարհում տեսնում ենք մեր աչքի առաջ:

Այսքանը բավական եմ համարում և անցնում, մտքինս այն չէ, որ խոսեմ մեր քաղաքային տնտեսության մասին, և եթե խոսեմ, ո՞վ պիտի լսի, և ուզում եմ խոսել յուրաքանչյուր մարդու կյանքի և տնային տնտեսության մասին, որ իմ պաշտոնի և չափավորության պարտականությունն է՝ լինելով Աստծու եկեղեցու անարժան տնտես:

Հիշե՛ր, որդյա՛կ իմ, «ԴՐԱԽՏԻ ՀՆՏԱՆԻՔ» կոչված աշխատության մեջ այս պարտքը

փոքրինչ վճարել եմ, բայց դարձյալ անձանձը ույլի կրկնում եմ այն այս դասի մեջ, որպեսզի անտնտես հայ ժողովուրդն, առավել քաղաքացիները և մայրաքաղաքացիները, գեթ մեր գրածը կարդալով, ուշքի գան, թեև նեղելով ժամանակը խրատում է նրանց, իսկ նրա ձայնը և խիստ խրատն ավելի կրթիչ ու զորավոր են, քան մեր գիրն ու քարոզը:

Բայց մարդիկ զարմանալի են. անցյալը շուտ են մոռանում, իսկ ժամանակը, միշտ փոփոխական լինելով, բազում անգամ և շատ մարդկանց համար տնտեսության և նախատեսության վարժապետ չի լինում, մանավանդ երբ հանկարծ երկրի կամ առանձին այս կամ այն մարդու համար բախտը բերելով՝ ընդարձակվում է հաջողությունը, կարծես թե այնժամ առավել շուայլության և զեխության դասեր է ուսուցանում: Մենք մեր ժամանակի և կյանքի մեջ դրա փորձը և ապացույցը տեսանք, որ այդ անստույգ, խալքով ժամանակը քսան տարի շարունակ հոռի ու կարճամիտ դասեր սովորեցրեց ասիական և առավել Պոլսի ժողովրդին:

Խրատ եմ տալիս քեզ, որդյա՛կ իմ, ժամանակի բարեկամությանը երբեք մի՛ վստահիր, նա միշտ խաբուսիկ է, երկու երես ունի, այսօր խնդում է և վաղը խոժոռվում: Միշտ մտքումդ

պահի՛ր Սողոմոնի խրատը. «Լալու ժամանակը և ծիծաղելու ժամանակը» (Ժող. Գ 4): Մինչ գանձարանդ գանձով, շտեմարանդ ցորենով լի են, մինչ շահավաճառությունդ հաջող է, և դու՝ առատ, և ուրախանում ես անկասկած. ահավասիկ այս է քո ծիծաղելու և բախտի ժամանակը: Իսկ երբ բախտի անվտանգ բարեկամությունը հանկարծ իր երեսը դարձնում է քեզանից, շտեմարանդ և գանձատունդ դատարկվում են, բազմանոխ սեղանդ վերանում է, դրանից հետո մտերիմ բարեկամներդ, որ քո խրախճանակիցներն էին, հեռանում են, և դու այնժամ մնում ես ապշած, թե դա ինչպե՞ս պատահեց քեզ հետ: Ահավասիկ, սա էլ քո լալու և դժբախտության ժամանակն է: Ես քեզ պատմեմ, թե ինչպե՞ս է պատահում, և որքա՞ն են աշխարհի և մարդկանց կյանքի պատահարները, մանավանդ մեր ժամանակ և մեր բնակեցրած աշխարհում:

Հարուստ ու մայրաքաղաքի մեջ հռչակված ճոխ գերզաստանի մի հայր եմ ճանաչում. մի օր տեսա իրեն, որ հոգոց հանելով՝ զրուցում էր իր բարեկամի հետ, ես լուռ ունկնդրում էի: Նկատեցի, որ նրա երեսն այնպես զվարթ և ուրախ չէր, ինչպես որ երեկ էր եռանդուն, թախծագին դեմքով նստել ու ծանր հոգածությամբ խորհում էր:

Իր զրուցակից բարեկամը հարցրեց դրա պատճառը, նա զարմանալով պատասխանեց նրան.

– Մի՞թե դու չգիտես, մի՞թե իմ պատահարը քեզ հետ չպատահեց:

– Ո՛չ, – ասաց բարեկամը, – չգիտեմ:

– Ուրեմն երուսաղեմում միայն դու ես...

Ապա սկսեց մի այլաբան ոճով պատմել:

– Ես, – ասաց, – մի պողպատե գանձապահարան ունեի, այնքան կուռ ու զրահավորված էր, որ ամեն տեսակի ճարտար գողությանը կարող էր դիմանալ, և որի մեջ իմ ողջ հարստության դանձն էր ապահովված, և ես բնավ կասկած չունեի: Մի օր բացեցի իմ այդ երկաթաղուռ գանձարանը, ասացի՝ փոքր-ինչ զբաղվեմ և խաղամ գանձերիս հետ: Ո՛հ, ո՛հ, ի՞նչ. առանց բանալիի, առանց որևէից ձեռքի ճարտարության՝ գանձապահարանս փակված տեղը ինքնին պարպած էր: Հաշվեցի կրկին ու կրկին, տեսա՝ քանակությունը նույնն էր: Բայց ի՞նչ օգուտ, զորությունը սպառված էր, ոչ մի արժեք չունեին ոսկիներս, կարծես թե ամբողջը ժանտաշը մեջ թաթախվելով՝ հարյուրից տասը հազիկ իրեւ ոսկու մաս էր մնացել: Այս մնացորդի մասին գուրգուղելով մտածում եմ, գուցե այն ևս առնի տանի նույն ոսկեհան ժանտաջուրը:

Ես սկզբում ապուշի պես լսում էի այս պատիպատ պատմությունը, հետո հասկացա այդ գանձատեր մեծատունի միտքը: Եվ ես մտքումս դատեցի իրեն՝ հիշելով եզովալուի իմաստուն առակը, թե՝ «Դու մսագործ էիր, քո ինչի՞ն էր պետք պայտառությունը», որովհետև այդ անձը հայրենի արհեստով վաճառական էր, բայց շահի ցանկությունը հրապուրել էր իրեն՝ դրամափոխների նման տոկոս առնելով դյուրաշահությամբ ևս հարստանալ:

Այս փորձառու պատմությունից խրատ ա՛ռ, որդյա՛կ իմ, որ առավել շահի ցանկությամբ արհեստափոխ չլինեն: Իմացի՛ր նաև, որ ամեն ժամանակն իր ժանտաջուրն ունի և այնքան ճարտարաձեռն գող է ժամանակը, որ առանց բանալու գանձարանդ կկողոպատի: Անհոգ, անկասկած մի՛ եղիր, այլ դու միշտ վախեցի՛ր ժամանակի դժպատեհ վարմունքներից, ինչ որ այսօր է, վաղը նույնը չէ. «Օրվա հոգսը բավ է օրվա համար»,՝ ասաց Հիսուս (Մատթ. Զ 34):

Զգայթակղվես, որդյա՛կ իմ, եթե ես Ավետարանի պատվերի դիմաց քեզ հակառակն եմ ուսուցանում, այն է, թե՝ «Այսուհետև հոգ մի՛ արեք վաղվա մասին, որովհետև վաղվա օրը իր մասին կհոգա» (Մատթ. Զ 34) և այլն: Բացատրեմ քեզ Ավետարանի միտքը, որ ուղիղ մտքով

հասկանաս նրա հոգին և իմաստը, և դու այնպես չդատես, ինչպես իմաստակներն են դատում, որ ես լսեցի, ու հոգիս վշտացավ, իբրև թե Ավետարանն իր այդ պատվերով մարդուն արգելում է մտածել ու հոգալ ապագայի մասին:

Ո՛չ, այդպես չէ, բարեկա՛մ իմ որդյակ, երբ Հիսուս իր հավատացյալներին այս աշխարհից հետո երկնային արքայություն խոստացավ, կամեցավ, որ իր հավատացող ծառաները հեթանոսաբար բազմահոգ նյութապաշտ չլինեն՝ իրենց հույսը միայն աշխարհի վայելքների վրա դնելով այն անձնապաշտ մեծատան պես, որ ասում էր. «Ո՛վ մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, կեր, խմիր և ուրախ եղիր» (Ղուկ. ԺԲ 19):

Այս անձնապաստան ոգուց հայտնի է, թե նա մի խիստ անիրավ տնտես էր, որ միայն իր անձի համար էր գանձել և իր մեծության մեջ Աստծով չէր պարծեցել: Նա չուներ այն երկյուղած հավատը, թե մարդն ամեն բարիք Աստծու ձեռքից է ընդունում: Բարերար Աստված, ում շատ է պարզեռում, կամենում է, որ նա արդար տնտեսությամբ մատակարարի՝ գեթ իր ավելորդ ինչքից կարոտ ընկերոջը բաժին հանելով:

Դու ուշադիր եղա՞ր՝ ո՛չ Ավետարանը, ո՛չ Սուրբ Գիրքն ուրիշ բան չեն պատվիրում, որ

մարդը չկանխատեսի, քանի որ մտածող մարդուն բնությունից հատուկ է կանխատեսությունը: Թողնենք բանական մարդուն, աշխատության դասի մեջ գու անշուշտ տեսար մրջյունի և մեղվի օրինակը, եթե այդ չնչին կենդանիներն այդքան գոհ են իրենց աննշան պարենի համար, անշուշտ, մարդը մեծ է մրջյունից, նա առավել պարտավոր է, որ կանխատեսի ու հոգա իր կյանքի պետքերը:

Բայց դարձյալ արժի նկատել, որ երկու ծայրահեղ անչափավորությունից հեռու մնա մարդը, ոչ այնքան կանխատեսության խորքերի մեջ սուզվի և ոչ այնքան անհոգ, անկանխատես լինի, որ շռայլության ու գեխության հեղեղներով նույնպես գլորվի։ Ուստի մեծ իմաստության չափ ու կշիռ է պետք՝ ուղիղ տնտեսության մեջ այդ միջին ճանապարհը գտնելու, ո՛չ գեպի ձախ, ո՛չ դեպի աջ խոտորվելու համար։

Այս՝ աշխարհին, ժողովրդին, եկեղեցուն,
ընտանիքին և նույնիսկ մարդուն իրենց առան-
ձին կյանքը տնտեսելու համար իմաստուն խո-
հականություն է պետք, գիր ու հաշիվ է պետք,
ուղիղ ճշտություն է պետք, և այս ամենի հետ
արդար խղճմտանք և Աստծու խոսք է պետք, որ
մարդը կարողանա ուղիղ բաժանել թե՛ կայսրի,
թե՛ Աստծու բաժինը:

Բայց որովհետև այս աշխարհում մարդկանց
կարգը, վիճակը ու կյանքը շատ զանազան են
իրարից, սրա համար ամեն մարդ առանձին-ա-
ռանձին տնտեսության պարտականություններ
ունի՝ առավել կամ նվազ։ Աշխարհի իշխան-
ներին և մեծատուններին փառասեր չենք հա-
մարի, եթե նրանք իրենց համբավի, անվան և
ճոխության համեմատ վայելուչ պերճությամբ
կյանք վարեն։ Նրանք մեծ զրկանք կդորձեն ըն-
կերությանը, եթե ամենագծուծ կյանք վարելով՝
խիստ ժատությամբ կծկեն իրենց ձեռքը և գե-
տի նման հորդացած գանձի ճանապարհու գոցեն,
որ չվազի ժողովրդի հրապարակ։ Նրանք եթե
չշինեն չքեղ տուն և մեծամեծ ապարանքներ,
տան ճարտարապետները, շատ արհեստավոր և
գործավոր մարդիկ իրենց վաստակից կզրկվեն։
Նմանապես, եթե նրանք թանկագին մատանի-
ներ չդնեն իրենց մատներին, եթե ամեն օր տա-
րագ-տարագ հանդերձներով չպճնազարդվեն,
եթե բազմախորտիկ սեղանով չլիանան, եթե
հրապարակի մեջ շրջելու համար չպերճանան
և թողնելով այդ ճոխապանծ կյանքը՝ հասա-
րակության անշուր ու սակավապետ կյանքով
ապրեն, ում կհամնի այդ վնասը, գիտե՞ս ո. բո-
լոր արհեստներին և շահավաճառության այ-
լայլ ճյուղերին, որոնց բախտն ու իրավունքն

էր այդ ամեն մեծածախ պետքերը պատրաստելու տալ և այս փոխանակության միջոցով հարուստների կուտակած ավելորդ գանձը հանել ժողովրդի հրապարակ, որպեսզի ամեն մեկն իր աշխատանքի բաժինն ընդունի:

Եվ դու գիտե՞ս, որ մեր ընկերային կյանքի նժարների հավասարակշռություն պահողը փոխանակության օրենքն է, քանի որ որտեղի՞ց կամ ո՞ր աղբյուրից են ժողովում ու ծովանում աշխարհի մեծատունների և արքունական գանձերը, այդ մեզ լավ հայտնի է. դրանց մշտահոս վտակները ժողովրդի աշխատանքի աղբյուրի ակներից են վազում:

Իրավունք է և մեծ իրավունք, որ գանձի այդ վտակներն այնտեղից իրենց ակունքներին վերադառնան և այդպես միշտ շրջան առնեն, որով թե՛ ժողովրդի և թե՛ մածատունների ծառաստանն ու տունկերը, միշտ ջրարբի լինելով, զվարթ ու պտղաբեր կմնան:

Ուստի ուղիղ տնտեսության օրենքի դեմ մեծապես մեղանչում են այն մեծատունները և, առանց բռնացող հափշտակության՝ հարստահարիչ են համարվում նրանք և միաժամանակ առաջադիմության խափանարար են լինում, երբ ժողովրդի վաստակների և շահերի աղբյուրները փակելով՝ արհեստների առաջադիմությունն

էլ են խափանում, քանի որ աշխարհի գեղարվեստի այնքան անհուն, անհամար պետքերը, որ միշտ արվեստագետ հանճարների ձեռքն է ստեղծում, իրենց ամենամեծ մասով մեծատունների վայելման համար են:

Իրավունք տվեցինք աշխարհի մեծատուններին, որ ճոխ ու փառավոր կյանք վարեն՝ միայն թե չափավորության ու վայելչության սահմանից չանցնելով: Բայց եթե նրանք այդ իրավունքը ճանաչեն միայն որպես իրավունք և ըստ հաճույքի օգտվելով՝ մոռանան ու երբեք չհիշեն մյուս բազմադիմի պարտականությունները, այսինքն՝ միայն հաց տնտեսելու մասին հոգալով՝ թողնեն Աստծու խոսքը, թողնեն բարեգործության պարտականությունները, երբեք չհիշեն ժողովրդի աղքատներին, որբերին, հիգանդներին, անօգնական թշվառներին և իրենց դուների առաջ ընկած վիրավոր Ղազարոսներին, եթե նրանք մոռանան իրենց մեծամեծ պարտականությունները եկեղեցու, ազգի և ազգային դպրոցների հանդեպ, եթե ազգի առաջադիմության արահետ ու ճանապարհ բացելու համար իրենց գանձարանի դուռը չբացեն, եթե հայրենիքի բարգավաճման համար հայրենասիրության մեծ պարտականությունները չկատարեն, եթե բախտը հաջողի, և նրանք երկրի կառա-

վարության մեծ պաշտոնյա և նախարար լինեն, ինչպես առաքինի Հովսեփը, որ հիշեց Հակոբի տունը և լաց եղավ, և հացը մինչև հագենալն ուտեն ու երբեք չհիշեն Հայկի քաղցած տունը, եթե նրանք վերջապես իրենց մեծության գանձն ու գութը փակեն մարդկային հասարակության թշվառության առաջ, միայն ու միայն վայելեն Աստծու տված բարիքները, նստեն մեծահաց սեղանին, բեհեզ հագնեն ու ծիրանի և գեթ սեղանի փշրանքներից և կտավից մի պատառ չտան աշխարհի փողոցներն ընկած Ղազարոսներին, որպեսզի հոգեպահիկ հաց ուտեն և այդ պատառիկ կտավով իրենց մերկությունը ծածկեն կամ իրենց վերքերը փաթաթեն, ամեն, ամեն ասեմ քեզ, որդյա՛կ իմ, այդպիսի մեծատուններն անիրավ են իրենց տնտեսության մեջ, անիրավ են երկնքի և երկրի առաջ, այսօր և հավիտյան, որոնց համար Քրիստոս իր Ավետարանով սպառնաց. «Վա՛յ ձեզ՝ հարուստներիդ, որովհետեւ դուք ձեր միմիթարությունը ստացել եք» (Ղուկ. Զ 24):

Այսքան դատեցինք աշխարհի մեծատուններին: Բայց մեծապես կանիրավենք, որդյա՛կ, եթե արդար տնտեսության բեռները միայն մեծատունների վրա բարդենք: Այժմ սկսենք ժողվրդի մյուս դասերի կյանքը դատել, որոնց

կարգը, վիճակը և աստիճանը շատ բազմատեսակ են, և ամեն կարգի մարդիկ և ընտանիքներ, յուրաքանչյուրն իրենց ունեորության չափով, պարտական են պահելու ուղիղ տնտեսության օրենքը:

Ինչպես իրավունք տվեցինք մեծատուններին, որ իրենց աստիճանին պատշաճ պերճությամբ ապրեն, նույն իրավունքը տալիս ենք ժողովրդական դասերին, որ իրենց վիճակի ու վաստակի համեմատ՝ չափավոր պարկեցածությամբ ապրեն, բայց երբեք իրավունք չենք տա ժողովրդական կարգի այն դասերին, որոնց շահն ու վաստակը շատ չափավոր է, և նրանք ևս ցանկության տենչով ձգտում են մեծատունների պես ճոխ կյանք վարել՝ ոչինչ համարելով նախատեսության և չափավորության տնտեսող կշիռը: Թեպետ քաղաքային օրենքն ազատություն է տալիս ժողովրդին, որ բոլոր մարդիկ, իրենց գույքին և ինչքին բացարձակ տեր լինելով, ազատաբար վարվեն, ազատաբար տնտեսեն իրենց կյանքը, բայց երանի թե դրա համար ևս չափ ու սահման որոշեր երկրի կառավարությունը, որով թերեւս անչափասեր ժողովուրդն օրենքով ու սրով ճանաչեր իր չափավորությունը: Բայց մի՞թե դրա համար օրենք էր հարկավոր, քանի որ թե՛ աշխարհում և թե՛ տնային տնտեսության մեջ այդ օրենքը

շատ բնական է մարդու կյանքի համար և յուրաքանչյուր մարդու կյանքից, գույքից և գանձից է բխում: Խոհեմ ու բանական տնտեսությունը ուսուցանում է, որ մարդն իր շահերի չափով կենցաղավարի:

Իսկ եթե ճոխասեր լինելով՝ իր չափից դուրս նկրտի, աշխարհը նրան կդատի ու կմեղադրի: Եթե մարդը, որ մի պարզ քաղաքացի է ու չափավոր շահի տեր, մի պարզ տունն իրեն բավական չի համարում, պերճասիրության ցանկությունից գրգռվելով՝ ձեռնարկում է իշխանին վայելուչ ապարանք շինել, ծանրագին կահ-կարասիներով զարդարել, հետիոտն քայլելը նույնպես նվաստություն է համարում, իշխանի կառք է նստում, հրապարակով անցնում և ցուցադրում է իրեն աշխարհի առաջ, չարաչար եղծանում է անչափավոր տնտեսության մեջ:

Ո՞վ չգիտի ու չի ճանաչում, թե այդպիսիներն այն ընտանիքներից են, որոնց հացը առավոտից մինչև իրիկուն է տեսում, այսինքն՝ թե օրական աշխատանքով ու շահով են ապրում: Ուստի հայտնի է, թե պճնասիրության այդ անհարկի պետքերը թե՛ պարտքով և թե՛ խարեական միջոցներով էլ են հայթհայթվում, երբեք չեն մտահոգվում, թե այդպիսի անտնտես կյանքի ապագան ընտանեկան կյանքի կործանումն է:

Ահավասիկ այսպես է գեղծանվում ուղիղ տնտեսության օրենքը, ուղղասե՞ր որդյակ իմ, երբ ժողովրդի դասերն անցնում են իրենց չափից և սահմանից՝ թողնելով պարզությունն ու սակավապես կյանքը, չխնայելով իրենց դառն ու չարաչար աշխատանքը, մոռանալով, թե մարդը որքա՛ն տաժանելի քրտինքով է հայթայթել իր հացն աշխարհում:

Ազգ, ժողովուրդ, քաղաքացի, գյուղացի, տեր, ծառա, հարուստ, աղքատ, առհասարակ ամեն կարգի մարդ, երբ կյանքի տնտեսության ուղղությունից խոտորվում են, նրանց ճանապարհը դեպի կորուստ է գնում, նրանք միշտ իրեց հարստությունից զրկվում են, և աղքատությունը չուտ է համարում նրանց, ինչպես մի արագոտն սուրհանդակ: Այդպես հասավ Բյուզանդիայի մայրաքաղաքին, նույն օրինակը պիտի հասնի ողջ գավառացի ժողովրդին, եթե անցյալի փորձերից և բյուզանդացիների տնափեր օրինակից ողջամտելով՝ չխրատվեն:

Է՛, սիրելիդ իմ Սամվել, լավ հասկացա՞ր տնտեսության այս դասը, դու, որ գեռ ուսանող ես և տակավին տնտեսական կյանքի մեջ չես մտել: Բայց որդիական քո մեծ պարտականությունն է գիտենալ և երախտագետ լինել, թե ուսմանդ ու դաստիարակությանդ համար

որքա՛ն անխնա ծախսեր եմ արել. այս մասով տնտեսության հաշվի իմ չափն անցա ապագա- յի այն հույսով, որ կյանքիդ պտղաբեր արդ- յունքը բազմապատիկ պիտի քաղեմ:

Սովորի՛ր, որդյա՛կ իմ, սովորի՛ր այժմվանից, որ այն ապագայում, որում ես գուցե գերեզման իջած լինեմ, դու, ողջ մնալով, բարվոք տնտեսես քո կյանքը և հայրենի ընտանիքը: Ես հարուստ, վաճառաշահ քաղաքացի չեմ, որ քեզ մեծ գանձ ժառանգություն թողնեմ: Մի պանդուխտ գյու- ղացի հայր եմ ես, և քո ժառանգությունը մեր գյուղի հողն ու դաշտն է: Ես միայն հող կթողնեմ քեզ, որ սոկե գանձից հազար անգամ անսպառ, անկողոպուտ գանձ է, որը ես քո պապից ժա- ռանգեցի, և այդ անգին ավանդը ամբողջապես պահել եմ մինչև օրս: Յոթն անգամ պանդիտու- թյան ելա և չուզեցի բնավ, որ մի թիզ հող վա- ճառեմ, մինչև իսկ երբ անձկությունը նեղում էր ինձ և պարտատերերն ինձ բանտ էին տանում: Միշտ աշխատեցի ամեն բան զոհաբերել ու հո- ղային կալվածքներս պահել:

Ուխտով քեզ պարտավորեցնում եմ, որդյա՛կ, որ հորդ օրինակին հետևես, ողջ կյանքովդ ջա- նաս գյուղական տնտեսության մեջ առաջա- դիմել: Ես քո միտքն այս դասերով մշակեցի, որպեսզի դու ևս քո հողերն ու դաշտերը լավ

մշակես: Այնժամ դու տես՝ մեր արգավանդ հո- ղերը որքա՛ն առատ խոտ ու ցորեն պիտի տան- քեզ:

Եթե ողջ մնամ ու քեզ հետ դեպի հայրենիք վերադառնամ, վա՛, որքա՛ն պիտի հրձվի հոգիս, երբ տեսնեմ քո առաջադիմությունը գյուղական տնտեսության մեջ, որով դու բարի օրինակ պի- տի լինես այն խեղճ գյուղացիներին, որ հողա- գործության արհեստի մեջ դեռ մանուկ են մնա- ցել: Մի՛թե իրավունք ունենք մեղադրել իրենց, երբ ուսում չունեն: Իմ և քո սեփական պարտքն է գյուղացի մանուկներին զարգացնել և կարեոր կրթություն տալ: Փորձով կտեսնես դու, թե ինչ- պես մանկակիցներդ չուտով կառաջադիմեն: Դու չգիտե՞ս, թե գյուղական դաշտի ազատ մանուկ- ները որքան աշխույժ և կորովամիտ են:

Մի վերջին խոսք, վերջին մի քանի խրատ ևս ավանդեմ քեզ, որդյա՛կ, և այսպես ավար- տեմ այս կրթական դասդ. աշխարհում կյանքդ ուղղավարողը ուղիդ տնտեսության դեկն է: Այդ դեկը քո հողագործության մաճի պես ու- ղիդ բռնի՛ր և երբեք մի՛ թողնիր, որ խոտոր- վի, որովհետեւ դա է միայն, որ կյանքիդ բոլոր ակոսներն ուղիդ կվարի, և մինչև գերեզման քո հացն ու հարստությունը չի պակասի: Զգո՛ւյշ, զգո՛ւյշ, Աստծու խոսքը չարհամարհես և դու

միայն հացով ապրես, այնժամ կմոռանաս մարդկային շնորհն ու պատիվը, անասուններին կհավասարվես, կապիրատես նաև նախախնամող Երկնային Հոր դեմ, երբ նրա հացն ուտես և այն չօրհնես: Սոսկ բերանի օրհնությունը բավական չէ, այլև պարտական ես արդյունքով փառավորել այն: Երբ այգիդ քաղում ես, ճռաքաղ մի՛ անի, երբ արտերդ հնձում ես, թափած ու մնացորդ հասկերը թո՛ղ, որ այրիները, որբերն ու աղքատներն այն ժողովեն: Այսպես է պատվիրում Աստծու օրենքների Սուրբ Գիրքը: Ամեն արմտիքից բաժին տո՛ւր Աստծուն. «Պատվի՛ր Տիրոջը քո արդար վաստակից և քո արդար արմտիքից պտուղ հանի՛ր նրան, որպեսզի լցվեն քո շտեմարանները հացով, և հնձաններում քո գինին առավել կրխի» (տե՛ս Ղետ. իէ 30–33): Ագահ Կայենի նման անուղիղ մի՛ բաժանիր, այլ արդար Աբելի պես պտուղդ հաճոյապես նվիրի՛ր Աստծուն:

Այս է ահավասիկ հացի և խոսքի ուղիղ տնտեսությունը, և ես օրհնում եմ քեզ, որդյա՛կ իմ, ողջ կյանքումդ հացն առանց Աստծու խոսքի չուտես, այլ հացն ու խոսքը միասին խառնելով՝ կե՛ր, որպեսզի կյանքդ կատարյալ լինի, և դու, կատարելով պարտականություններդ թե՛ Աստծու և թե՛ մարդկանց առաջ, ապ-

րես աշխարհում որպես արդար ու հավատարիմ տնտես: Հիշի՛ր Ավետարանի առակը, քեզ հանձնված քանքարը շատացրո՛ւ, որովհետեւ Տիրոջ առջև պատասխան կունենաս տալու, եթե անհոգության վարչամակի մեջ ծրարելով այն՝ պահես անշահ, իսկ եթե տոկոսով հանդերձ հատուցես, Փրիստոս քեզ կգովիի. «Ապրե՛ս, բարի՛ և հավատարի՛մ ծառա, որովհետեւ այդ քչի մեջ հավատարիմ եղար, շատի վրա կկարգեմ քեզ, մտի՛ր քո տիրոջ ուրախության մեջ» (Մատթ. իԵ 21):



ԳԱՍ Ը

ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքնաշխատությունը՝ մարդու բնական պարտականությունն ու արդար քրտինքն է, իր կյանքը պահող ամենից առավել պատղաբեր հույսն է։ Անիրավ է մարդը, եթե ուղիշի քրտինիքի ու ձեռքի հացին է սպասում. «Դու քո ձեռքի վաստակը պիտի ուտես, երանի՛ քեզ, դա լավ պիտի լինի քեզ համար», – խրատում է Դավիթը (Սաղմ. Ճիշտ 2):

Սիրելի՛ իմ Սամվել, մարդու ընդհանուր աշխատանքի դասը և նույն աշխատանքի արդյունքն ուղիղ տնտեսելու դասը սովորեցիր, այժմ հերթն եկավ, որ ժողովրդի ինքնաշխատության դասն սկսեմ քեզ տալ, շատ ուշադի՛ր եղիր, քանի որ սա ամենակարևոր դասն է, աշխարհիս և այլ ժողովուրդների առաջադիմության և բարգավաճման միակ պայմանն ու ճանապարհը:

Քաջ գիտեցի՞ր, որդյա՛կ իմ, և ես թվեմ քեզ,
թե որո՞նք են ժողովրդի ինքնաշխատության
պարտավորությունները, որ նա պետք է իր ողջ
կյանքում ջանա կատարել:

Աշխարհում ամեն մի ազգ և ժողովուրդ
իր կյանքը պահող, տնտեսող ու բարփոքող
քրտնաջան մշակն է, իր արտ վարող մաճկալն
է, իր սերմ ցանող ու հնձող ինքնավարձ աշխա-
տավորն է, իր դրախտն ու դարաստանը տնկա-
գործող պարտիզանն է, իր տուն շինող ճար-
տարապետն է, իր ընտանեկան կյանքի պետքեր
հոգացող հայրն ու տնտեսն է, իր հաց ու սեղան
պատրաստող մատակարար ձեռքն է, իր արվեստ
հնարող հանճարի աղբյուրն է, իր գործարանի
մեքենաները շարժող, մղիչ շոգին է, իր անձի
մերկությունը պատսպարելու կտավագործն է,
իր ողջ շահավաճառության վաճառականն ու
խանութպանն է, իր դպրոցները շինող ու կար-
գագրող ընկերական հանգանակությունն է, իր
մանուկներին գրկող դաստիարակն է, իր ներ-
կայի մեջ գործող ձեռքը և ապագան նախա-
տեսող աչքն է, վերջապես, այս աշխարհում իր
առանձին առաջադիմության համար ժողովրդի
ինքնաշխատությունն ամեն ինչ է:

Ժողովուրդը պետք է խելամտի ու ճանա-
չի, որ իր կյանքն արդյունավորողը միմիայն

իր ինքնաշխատության ձեռքն է, և իմանա, թե
որքան է շահութաբեր: Մի ազգ և ժողովուրդ,
եթե իր կյանքը և բախտը ուրիշից է ակնկա-
լում, շատ բնական և հայտնի է, որ իբրև երա-
զահույս՝ մի պահ կխայտա գիշերվա ծանր քնի
մեջ և առավոտը ոչինչ չի գտնի:

Մշակ ժողովրդի անժխտելի ու բնական պար-
տավորությունն է, որ իր հացն ինքը հոգա, իր
արտն ինքը քաղի, ապա թե ոչ՝ արտն առանց
քաղելու կմնա, կկծղեն ու կթափվեն ցորենա-
հատերը, եթե նա դրացուն կամ բարեկամին
սպասի: Այս ճշմարտությունն իմ կյանքի փոր-
ձով եմ ճանաչել. դու, որ գեռ անփորձ ես, ու-
շադի՛ր եղիր, ես մի հին առակ պատմեմ քեզ:

Արտույտ թուչունը, որ թերևս արտ ուտե-
լուց է առել այս հարմար անունը, իր բույնը
հասկավոր արտի մեջ դնելով՝ ձագեր է հանել:
Հեռատես ձագամայրը միշտ ապսպրում էր իր
ձագերին, որ ականջ դնեն արտի տիրոջը, թե
ի՞նչ է խոսում, երբ նա իր տղայի հետ գա տես-
նելու, թե արտի հնձելու ժամանակը հասե՞լ է:
Առաջին անգամ ձագերը լսում ու պատմում
են իրենց մորը, թե հայրն իր տղային ասում է.
«Որդյա՛կ, արտը հասնելուն մոտ է, գնա՛, խո-
սի՛ր, մեր դրացիները թող մեզ օգնելու գան,
արտը միասին քաղենք»:

Արտույտը պատասխանում է. «Դեռ անհոգ կացեք, քանի որ արտի տերը դրացիների օգնությանն է սպասում, այս արտը չի քաղվի»: Երկրորդ անգամ մտիկ տալով՝ ձագերն այս են պատմում, թե գյուղացին իր տղային ասում էր. «Դրացիները չեկան, գոնե բարեկամներին հրավիրի՛ր»:

Խելացի արտույտը դարձյալ նույն է կրկնում. «Հանգի՛ստ եղեք, ձագե՛րս, թե գործը բարեկամներին է մնացել, արտը հավիտյան չի քաղվի»:

Երրորդ անգամ ձագերը պատմուն են, թե արտի տերը, վա՛շ-վա՛շ անելով, իր տղային ասում էր. «Որդյա՛կ իմ, ես ու դու առնենք մեր մանգաղները, և մենք քաղենք մեր արտը. այլևս դրացիներին, բարեկամներին սպասելն ընդունայն է»:

Ուշադիր ձագերը երբ այս վերջին խոսքը պատմում են իրենց մորը, մայրը պատասխանում է. «Այժմ ստույգ հավատում եմ, որ արտը պիտի քաղվի, պետք է ձեզ տեղափոխեմ»:

Արդյո՞ք այս կրթիչ օրինակից չպիտի հասկանա ու խելաքերի յուրաքանչյուր առանձին մարդ և ժողովուրդ, թե դրացիները և բարեկամները ևս իրենց արտերն ունեն քաղելու: Եթե այս այսպես է, ուրեմն թող ժողովուրդն իր հույսը միայն իր ինքնաշխատության վրա դնի.

Եթե ջուր է պետք իր չորացած արտը ոռոգելու համար, թող խցված աղբյուրների ակերը բանա, վտակների լցված առուները հորդի: Եթե հանդերձի և այլազան պետքերի համար կտավ է հարկավոր, թող բամբակ ցանի, կտավ գործի, իսկ եթե փափկության պերճանք սիրելով՝ կերպաս է ցանկանում, թող շերամագործության արհեստին հետևելով՝ այն առաջ տանի:

Եթե նախանձելով եվրոպական ազգերի գեղեցիկ օրինակին՝ ուղղում է գիտություններ և արվեստներ հանճարել, թող նախ դպրոց գնա, գիտություն սովորի, ինքնաշխատության մեջ տքնի, ինչպես նրանք:

Իսկ եթե ասում է. «Ես ինչպե՞ս ինքնաշարժ ինքնաշխատ լինեմ և առաջ գնամ...»:

Դրա դարմանը և ճարն ո՞րն է, գիտե՞ս. դպրոցն է: Դպրոցն է և անհուսահատ ինքնաշխատությունը, ուրիշ ոչինչ: Ես տեսնում եմ քեզ, այդ քո վիճակի նկարագիրը շատ ճշգրիտ է: Բայց դու պետք է անպարտելի մնաս հոգով, առաց հուսահատվելու շարունակես ինքնաշխատություն՝ գիտենալով, որ առաջադիմության ուղին ինքնանվեր շահատակությամբ է բացվում: Ես գիտեմ, որ խոչեր ու խութեր կան քո ճամփին, մի՛ սպասիր, որ ամբողջովին փոխվեն դրանք, և դյուրանան քայլերդ: Դու

մի՛ սպասիր, ինչպես այն ապուշ ու բժամիտ ճամփորդը, որ գետավին կանգնած սպասում է, մինչև անցնի գարունը, անցնի ամառը, աշունը գա, ցամաքի գետի ջուրը, և ինքն առանց թրջվելու ոտքով անցնի:

Ժողովո՛ւրդ, զու ինքնին գիտես, մեր աշխարհը հորդ անձրևներ և ձյուն շատ ունի, մեր գետերի ջրերը, ով գիտի՝ երբ կցամաքեն. ուրեմն սրունքդ բա՛ց, անվախ մտի՛ր գետը, մինչև պարանոցդ ջրաթաղ եղի՛ր և անցի՛ր մյուս կողմը:

Իսկ եթե ուզում ես գետերի հորդ ջրերից, աշխարհի ծովերից անկասկած անցնել, քաջ սուվորի՛ր լողալու արվեստը, և որտե՞ղ. այդ ես դպրոցի լճում՝ թղթով, գրով և ինքնաշխատ կրթությամբ:

Թերեւս դու այնպես ես կարծում, որ արևմտյան ժողովուրդների առաջադիմության քայլերի դեմ ծովեր ու գետեր չեղան: Ո՛չ, դու կարդա՛ այդ ժողովրդի պատմությունը և կապշես ու կզարմանաս, որ նա ջրի և ծովի հոսանքներից անցավ, մինչև առաջադիմության և գիտության հաղթանակ տարավ: Դու մի՛ վհատվիր, երբ տեսնում ես, որ ուղիներդ դժվարին առապարներ են. ինքնաշխատությամբ այդ ամենը ոտքիդ առաջ կհարթվեն ու կդյուրանան, միայն թե դու մի՛ վատասրտիր:

Զեռքերդ ծոցիցդ հանի՛ր, մի անգամ ինքնաշխատություն սկսի՛ր. իզուր է, որևէ տեղից օգնություն մի՛ սպասիր, մի՞թե փորձով չտեսար, որ աշխարհում քեզ ոչ ոք օգնական չէ, ուստի բերանդ ա՛ռ Դավթի այն խոսքը և աչքերդ դեպի երկինք բարձրացնելով՝ աղոթի՛ր. «Աչքերս դեպի լեռները բարձրացըի, որտեղից ինձ օգնություն պիտի գա» (Սաղմ. Ճի 1): Դու ասա. «Ինձ օգնություն պիտի գա Տիրոջից, որը ստեղծեց երկինքն ու երկիրը» (Սաղմ. Ճի 2): Մի՛ մոռացիր, կարդա՛ նաև Դավթի մյուս խրատը. «Հույս մի՛ դրեք իշխանների՝ մարդկանց որդիների վրա, որովհետև նրանցից փրկություն չկա» (Սաղմ. Ճի 3): Եվ թե՝ «Երանի՛ այն ազգին, ում օգնականը Հակոբի Տեր Աստվածն է, և ում հույսը Տեր Աստծու վրա է» (Սաղմ. Ճի 5):

Ուրեմն հույսդ Աստծու և քեզ վրա դի՛ր, վհատվա՛ծ ժողովուրդ, և գոնե իմացի՛ր այսուհետեւ, թե դու ինքդ ես միայն քեզ օգնական:

Այո՛, քո ձեռքն է քեզ օգնական, երբ գործես, արվեստահնար լինես. քո աչքն է քեզ օգնական, երբ նայելով՝ շուրջդ՝ հեռատես լինես, ներկայիցդ քո ապագան չափես ու տեսնես. քո միտքն է քեզ օգնական, եթե այն լուսավորես և թողնես տգիտության մտքի ու կամքի կուրու-

թյունը. քո դպրոցներն են քեզ օգնական, եթե մանուկներիդ կրթես գիտությամբ. քո հայրենի հողն է քեզ օգնական, երբ դու այն, արհեստով մշակելով, բեղմնավորես. քո բազմարոտ լեռները և զովասուն հովիտներն են քեզ օգնական, եթե խաչնադարման լինես և հիշես այդետունկ որթերդ. պարտեզի ծառերն են քեզ օգնական, եթե քաջ մշակելով՝ գինով ու պտղով լցնես վաճառանոցը. քո տնտեսական ճարտարամտությունն է քեզ օգնական, որ դաշտի մեջ հող սիրես և քաղաքի մեջ՝ արվեստ ու վաճառականություն. քո հայրենյաց միության սերն է քեզ օգնական, եթե իբրև մայր գիրկդ բանաս, պանդուխտ ու գաղթական որդիներիդ հեռուներից ժողովես և չժողնես, որ այլքս գրկիցդ հեռանան. քո հայրենի կրոնը, հավատն ու եկեղեցին են քեզ օգնական, եթե չմեղկանաս կրոնի հանդեպ, չլինես հավատուրաց, այլ պինդ պահես հայրենի կրոնի սուրբ ավանդը, որ քո նախնիները անկորուստ ավանդեցին քեզ արյունով ու մահով. վերջապես քո ընկերասեր հոգին է քեզ օգնական, եթե այն ուխտով պահես և դուրս վանես երկպառակության ոգին, որ ավերիչ է ազգին ու հայրենիքին:

Է՛, անձկալի՛դ իմ Սամվել, մի պահ թողեցի քեզ, խոսքս ուղղեցի ժողովրդին, և դու մտքերի

մեջ ընկար: Ափսոսում եմ աշխատությանս համար. որքա՛ն այսպիսի ոգետու հորդորներ, խոսքեր եմ գրել հայ ժողովրդի համար: Նա միշտ ուշադիր լսեց ու կարդաց, բայց դեռ տատամսում է, վարանում, չհամոզվեց, թե իր հացը, իր կյանքն ու բարեկեցությունը, իր փառքն ու առաջադիմությունը միմիայն իր ինքնաշխատ ձեռքով, ոտքով ու մտքով կլինի, իր ճակատի քրատինքի վաստակով կլինի, իր առանձին խելքով ու խորհրդով կլինի: Ընդունայն է օտարի ձեռքից ու սեղանից հաց սպասել: Ինքնաշխատության հաջող ժամանակը միշտ ներկան է, ինքնաշխատ մշակը ներկայի մեջ լիաբուռ ցանում է, որ ապագայում առատապես հնձի:

Թո՛յլ տուր այժմ, որդյա՛կ իմ, այժմ ողբամ, թե հայ ժողովուրդն այս դասերը սրտի մտոք չի լսում. ժամանակն աշխարհի մեծ վարժապետն է, դժպհի գավազանով պիտի լսել տա իրեն, և նա այնժամ, իբրև գալորոցի բթամիտ մանուկ, պիտի նատի ու լա՝ հեկեկալով ու կոծով սերտի այս դասերը:

Իսկ դու, սրամի՛տ որդյակ իմ, ականջդ բա՛ց, առանց գավազանի լսի՛ր իմ դասերը, հիշի՛ր, որ քեզ երբեք ոտնապիրկ գանով չխրատեցի. հիշի՛ր, թե ես իմ հայրական պարտքը լիովին կատարեցի, թե՛ հացով, թե՛ ուսմունքով, միապես ու հավասար, անկարոտ կյանքդ զարդացրեցի: Այսու-

Հետեւ քեզ ազատ կթողնեմ, որպեսզի դու ինքնին
քո ինքնաշխատ ոտքով առաջադիմես դեպի լա-
վագույն ապագան, որքան մտքիդ կորովը և հա-
րատեղ ջանքդ քեզ ասպարեզ կտան:

Դու մինչ մանուկ էիր, իմ ծնողական պարտքն
էր, որ ձեռքդ բոնելով՝ օգնեի տկար քայլափո-
խությանդ: Այժմ մկաններդ ու սրունքներդ զո-
րացան, ուժեղ կտրիճ դարձար, այլևս ազատա-
քայլ եմ թողնում քեզ: Ես բնավ չեմ ցանկանում
նմանվել այն կարճամիտ հայրերին, որոնք մինչև
մահ ուզում են խնամակալ լինել իրենց արբուն-
քահասակ որդիներին: Այս հոռի դաստիարա-
կությամբ ջլատում ու ճնշում են նրանց գործու-
նեության ոգին և հետո գանգատվում, թե մեր
զավակները անգործ, անպիտան են:

Խորհելու և գործելու ինքնաշխատության
ազատ իրավունք եմ տալիս քեզ, բայց երբեք
չեմ կամենա, որ դու այդ ազատության մեջ
եղծանվես, անձնապաստան լինես, անխորհուրդ
վարվես և բարձրությունիցդ վայր գահավիժես:
Այժմվանից խրատ եմ ավանդում քեզ, որ ինք-
նաշխատ գործերիդ մեջ հարգես ու պատվես
ծերերի խոհական խրատն ու խորհուրդը, քա-
նի որ նրանք կյանքի փորձառության դասերը
քաջ սովորել են, մինչդեռ դու անփորձ և խակ
ես, միայն խոսքով և գրքով գիտես:

Գնա՛, զորացի՛ր, որդյա՛կ իմ, գյուղական
կյանքի ինքնաշխատ, արդար մշակությանդ
մեջ ձեռքովդ ցանի՛ր, ձեռքովդ հնձի՛ր, հացդ
ու սեղանդ ձեռքովդ պատրաստի՛ր, նստի՛ր,
քրտինքիդ իրավունքով կե՛ր քո ձեռքի վաստա-
կը. Թող այս լինի միշտ քո բարեվայել կյանքը,
քանի դեռ կենդանի եմ, տեսնեմ քո աշխատան-
քային առաջադիմությունը, և հոգիս հրճվի: Ես
քեզ մրցանակ եմ տալիս միայն հայրական օրհ-
նությունս, և աշխարհից ոչ մի բան մի՛ սպա-
սիր, իմացի՛ր, որ քո ճշմարիտ մրցանակն ինք-
նաշխատության արդյունքն է, քո ձեռահյուս
պսակը, և այն բավական է քեզ:



ԴԱՍ Թ

ՀԱՆՁԱՐ ԵՎ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

Ինքնաշխատությունը, հանճարը և ընկերային զորությունը՝ այս երեք հզոր, միացյալ դաշնակիցները, աշխարհի կյանքը հեղարջելով, առաջադիմության հրաշքներ գործեցին, և մարդ նույնիսկ ինքն իրեն զարմանում է, թե ի՞նքն է արդյոք գործողը:

Ինքնաշխատության նախորդ դասով, որդյան իմ, սովորեցիր, թե աշխարհում՝ մարդկային ընկերության մեջ, իր ինքնաշխատ զորությամբ մարդու ձեռքը կարող է առանձին առաջադիմել: Իսկ այս դասով պիտի սովորես, թե ի՞նչ է ընկերային միության զորությունը, որի առաջ աշխարհի զորությունները դյուրանում են, և ինչ որ չի կարող գործել մի մարդու ձեռքը, ընկերային հոգին միությամբ մեծագործում է: Եթե մարդու ինքնաշխան զորությունն ընկե-

բային միության ուժին չմիանա, եթե առանց հաղորդող տարածության իր զորության արգասիքը միայն իր մեջ ամփոփելով՝ պահի, այնամ այդ առանձնական զորության սերմը ո՛չ կածի, ո՛չ բեղմնավորվելով կրազմապատկի, կմնա նույնքան, որքան մի անհատ մարդ իր ինքնաշխատությամբ ձեռք է բերել:

Սրա մասին մի պարզ ու համոզիչ օրինակ տամ քեզ: Եթե շոգիի մեծ զորությունը գտնող հեղինակն, այդ աշխարհաշեն գյուտն իր մտքի և տան մեջ թաքցներ ու չհաներ այն ընկերային հրապարակ, ի՞նչ արդյունք կընծայեր աշխարհին. ոչինչ: Ինքնաշխատ հեղինակն իր հանճարած գյուտի հետ կմեռներ, և շոգին իր մաշած ուղեղի հետ կցնդեր գերեզմանում, և այդպես հանճարն ու գյուտը միասին կկորչեին:

Այս մի օրինակը քեզ բավական է, ոու ինքնին իմաստահրի՛ և կիմանաս, թե մարդկային զորության հետ պետք է միանա ընկերային միության զորությունը, ապա թե ոչ՝ հանճարի սերմն ապարդյուն կմնա, կամ շատ-շատ միայն իր սերմնագյուտ մշակի առօրյա հացը կհայթայթի:

Մի մարդը, մի զորությունը, մի հանճարը թող, որքան ուզում է, ինքնաշխատ լինի, մեր ընկերային աշխարհը չի շինի: Դու տեսե՞լ ես, որ մի մարդը մի քաղաք կամ մի գյուղ շինի,

կամ թագավորն ինքն առանձին մի տերություն կազմի առանց ժողովրդի:

Ե՛լ, որդյա՞կ իմ, քեզ հետ պարտեզ գնանք, ես ցույց տամ քեզ ընական օրինակները: Դու տե՛ս ձեռատունկ ծառերը, փորի՛ր հողը, դիտի՛ր արմատները, նայի՛ր դեպի վեր, դիտի՛ր դեպի արել բարձրացած աճեցուն ճյուղերին. կա՞ մի ծառ, որ մի արմատով և մի ճյուղով աճի ու պտղաբերի: Դաշտ գնանք. դու տեսե՞լ ես, թե մի մշակ մի եղով կամ մի լծով կարող է գութան լծել և հող վարել, մանավանդ, երբ կորդացած լինի, կամ սերմնացան, որ մի հատիկ ցորենով մի ամբողջ արտ ցանի:

Շատ ճշմարիտ է հների առածը, թե մի ծաղիկը գարուն չի բերի, մի մեղուն մեղը չի շինի, և ոչ էլ մի պուտ ջուրը ջրաղացի ծանր քարը կպտտի, մի կաթիկ անձրեւ մի աղբյուր և մի վտակը գետեր չեն կազմի:

Այս ամենի պատճառը մի՛ հետազոտիր, ինքնին հայտնի է, երբ փոքրիկ զորությունն առանձին, առանց ընկերային զորության, մի մարդու մեջ է մնում, թե՛ հանճարով և թե՛ բազկով հուժկու մարդն ապիկար է դառնում: Նա մի խելքով և ուժով ոչինչ չի կարող գործել աշխարհում. խեղճ ինքնաշխատ մարդը վարանում է ինքնին, մարում է նաև հանճարի լույսը՝ առանց իր շուրջը լուսավորելու:

Այո՛, հանճարի զորությունը գաղափարի աղբյուրն է, որ բխում է մարդու մտավոր ակունքից. Եթե ջրի վտակների պես վազելով՝ չծավալվի ընկերային հրապարակում, կամ նախանձուտ հանճարը չանա իր ջրով միայն իր պարտեզը ջրել և չիմանա, որ հանճարի փոքրիկ աղբյուրը որքան վազի ու տարածվի, գետի պես կառատանա, եթե թումբ կանգնեցնես դիմացը և արգելես, այն իր տեղում կցամաքի և կչքանա:

Աշխարհի բոլոր գյուտերի ինքնաշխատ հեղինակներն իրենց նորանոր գյուտերը միշտ փոխանցեցին ընկերությանը, և դու տե՛ս, թե ինչ գործեց ընկերային զորությունը: Հանճարներից մի փոքրիկ աղբրակ կամ լույսի մի նշույլ առնելով՝ այնչափ ծավալեց և ընդարձակեց, մինչև բովանդակ աշխարհը ողողեց ջրով և լույսով և այսպես առավել ևս պայծառ պսակեց հանճարի արդյունքը և փառավորեց այն:

Եթե հանճարի սերման գյուտը նմանեցնենք մանանեխի հատիկին, որքա՞ն կհարմարվի Ավետարանի այն առակին, որ Քրիստոսն օրինակ բերեց՝ այսպես ասելով՝ մանանեխի հատիկը բոլոր սերմերից փոքր է, սակայն երբ ցանում են այն, բուսնում և աճելով այնքան մեծ ծառ է դառնում, որ թռչունները գալիս են և նրա ճյուղերի վրա հանգստանում (Մատթ. Ժ 32, Մարկ. Դ 31-32):

Այսպես նաև եթե հանճարի հատիկը առանձին մնա, իր ինքնաշխատ մշակի պարտեզը ոչինչ առավելություն չի ունենա, բայց երբ ընկերության դարաստանի մեջ ցանվի, իսկույն կրումնի և աճելով ահագին մեծ ծառ կդառնա, կսփորի իր ճյուղերը ողջ աշխարհի վրա, և իր անհուն, առատ պտուղները մարդկային ազգը կվայելի:

Խոսեմ ու պատմեմ քեզ, որդյա՛կ իմ, թե հանճարի փոքրիկ զորությունն, ընկերային զորության հետ միանալով, ի՞նչ գործեց և ի՞նչ արդյունք տվեց արևմտյան աշխարհում, որոնք արևելյան ժողովուրդներին թվում են գերմարդկային հրաշքներ. ընկերային միացյալ զորությունը, շոգիի և մեքենայի ուժն իրեն միացնելով, ծովն ու ցամաքն հնազանդեցրեց իր ոտքերի առաջ:

Դու կարո՞ղ ես թվել անթիվ-անհամար շոգենավեր, որ այսօր շրջում են աշխարհիս ծովերում: Ծովամայր օվկիանոսի տարածությունը, որ մարդիկ անծիր ու անսահման էին կարծում, շոգին ու մեքենան այն մի քանի օրում են չափում: Խեղճ կոլումբոս, այն, ինչ տարիներով դեգերում էր նա նոր աշխարհ գտնելու համար, այսօր Լոնդոնից մինչև Ամերիկա տասն օրում են չափում: Ծովի մեծ կետը՝ վիթխարի

լեիաթանը, զարմացավ, երբ տեսավ, որ իրենից մեծ հազարավոր փայտաշեն, մարդաշեն լեիաթաններ են, ծովի թագավորությանը տիրելով, ազատաբար լողում, և իր գլուխն ու տուտը սոսկալով քաշեց ու մտնելով ծովի խորության մեջ՝ ծածկվեց:

Հոքն ասում է, որ այդ մեծ ծովային վիշապին մեծագործ Արարիչը հրեշտակների համար ստեղծեց, որ զբաղվեն և խաղան նրա հետ: Թող այժմ այդ զվարճասեր հրեշտակները մարդկանց հնարած լեիաթանների հետ խաղան ու ճանաչեն, որ աշխարհի որդիները, ավելի քան իրենք, իմաստուն և հնարագետ են, ինչպես վկայեց Հիսուսը:

Դու գիտես և չկարծես, թե շոգենավի գյուտը միայն մարդկային շահավաճառությանը շահաբեր եղավ, այլև դրա հետ ապահովեց նաև մարդու ծովագնացության կյանքը. այնինչ սրանից դրեթե մինչև վաթսուն տարի նավապետ, նավաստի, ուղևոր, առհասարակ ծովն ալեկոծող ահեղ փոթորիկների պատահելով, շատ անդամ կուր էին լինում ծովին ու ձկներին՝ խոր անդունդի մեջ ջրաթաղ լինելով՝ անհող ու անգերեզման:

Մարդն իր հանճարով և ընկերային զորությամբ ծովի հոսանուտ կոհակներին հաղթանակեց, ապա ցամաքին դառնալով՝ ասաց, թե՝

կարո՞ղ եմ արդյոք սար ու ձոր հավասարեցնել, հարթել այնպես, ինչպես ծովի մակերևույթն է:

Այո՛, մարդն Աստված չէր, բայց ասաց և եղավ: Իր հանճարով և ընկերային ուժով այդ ամենը գործեց, հողի վրա երկաթե ուղիներ հարդարեց, հնարիչ ճարտարագետի մի ձեռք շոգեկառք շինեց, ընկերության զորավոր ձեռքը նրա ետևից հազարավոր կառախմբեր կապեց ու շարեց: Մարդիկ այն օրից, գիտես, որ թռչնի թև առան, աշխարհից աշխար, քաղաքից քաղաք թռչելով՝ անդադար գնում-գալիս են:

Թե հարմար կհամարես, բե՛ր և հաշվի՛ր, թե այդ միացյալ զորությունները՝ շոգին ու մեքենան, ի՞նչ մեծ արդյունք ընծայեցին աշխարհին: Եթե այսօր ասիացին, եվրոպացին, ամերիկացին, ճապոնացին և հնդկացին իրար կարող են տեսնել և ճանաչել, այդ հանճարի և ընկերային զորության շնորհիվ է, որոնցից մեկը շոգենավ և շոգեկառք հնարեց, մյուսը՝ իրեւ զորավիդ, ձեռնարկեց ու գործի դրեց, այդպիսով՝ աշխարհ առ աշխարհ, ժողովուրդ առ ժողովուրդ, իբրև մի քաղաքացի և դրացի, կապեց:

Ո՞վ գիտի, թերևս ապագա աշխարհում մեր բնակավայր հողագունդն այնպես լինի, ինչպես մի քաղաք, զանազան ազգեր և լեզուներ միա-

նան, մի ազգ, մի ժողովուրդ կազմեն, աշխարհը իր նախնական վիճակին վերադառնա և գնա հասնի միազգության նախադար, երբ մարդիկ մի երկիր, մի լեզու ունեին, ինչպես Մովսեսն է պատմում. «Մի երկիր էր և մի լեզու» (Ծննդ. ԺԱ. 1):

Թողնենք հաղորդակցության դյուրությունը, թողնենք շահավաճառության ամենամեծ արդյունքը, որով աշխարհի ազգերն ու ժողովուրդներն են զբաղվում՝ մեր անհագ կյանքի անհուն պետքերը հոգալու համար, թողնենք այն ամեն նյութական շահաբերության արգասիքը, որ մարդու ցանկությունն իր ճարտարապետական արվեստով հնարեց, խորհենք, առաջ բերենք ու հաշվենք բարոյական մեծ շահը:

Թե՛ չոգենավը և թե՛ չոգեկառքը՝ այս երկու արագընթաց գորությունները, եթե թե չտային մարդկանց ընկերային հաղորդակցությանը, հեռավոր երկրների վայրենի և կիսավայրենի ժողովուրդներն այդպես էլ կմնային իրենց հնության մեջ, որին տիրում էր տղիտությունը, թշվառությունը և խավար կյանքը: Այն օրից, երբ չոգին լույս տարագ նրանց, այն օրից սկսեցին լուսավորվել և կամաց-կամաց մոտենալ քաղաքակիրթ աշխարհին:

Քաղաքակիրթությունն, ուր որ ծնվեց, իր անձուկ հորիզոնի և խանձարուրի մեջ էր մնում,

նա չէր կարող իր լույսը մինչեւ հեռավոր և անծանոթ տեղեր տարածել, լույս տալ ու քաղաքակիրթել բարբարոս ազգերին:

Հանճարի և ընկերային ուժի գորությունը միայն այդ հրաշքները չգործեց, այլև շատ և անհամար արվեստական հրաշքներ առաջ տարավ, և այնչափ, որ ես չեմ կարող թվել: Արվեստի ծնունդներն այնքան բազմապատիկ են, որ մարդու միտքը հիանում է, ապշում ու չի հավատում, թե ինքնաշխատ մարդու հանճարն է ծնել նրանց:

Եվրոպայի բյուրատեսակ արվեստներից են այն հսկա, մեծագործ շենքերը, որոնք կարծես թե մի-մի մեծագործ քաղաքներ և պալատներ են. այն անդուլ, անդադար, չոգեշարժ ահագին մեքենաների ահագին գորությունը, որոնց միայն ուժը, հազար ասեմ, երկու հազար ասեմ, մարդու կամ ձիու ուժին հավասար է: Հապաայն բյուրավոր, միլիոնավոր գործավորների աշխատանքը, որ չոգիի հետ միանալով՝ անբավ և անչափ արդյունք են արտադրում և պատրաստում բովանդակ աշխարհի մարդկանց կյանքի պետքերը, որոնց չափն ու քանակությունն անհնար է կշռել ու չափել:

Ես ցանկացա, բայց բախտն ինձ չհաջողեց, որդյունք իմ, երանի թե քեզ մի անդամ հաջող-

վեր ու գնայիր Եվրոպա՝ այն հրաշք աշխարհը, կենդանի աչքով տեսնեիր, զարմանայիր, թե ինչպե՞ս է մարդու հանճարը և ընկերային զորությունը, ձեռք-ձեռքի տալով, գիտությամբ, ճարտարապետությամբ, արվեստով մարդկային հին կյանքը, որ երեմն ունայն և դատարկ էր, լցրել և լիացրել բերներան, և ավելորդը հորդյալ գետերի և հեղեղի նման աշխարհին չորս կողմն է վազում ու տարածում այդ անհուն շահավաճառության հոսանքը:

Քաջ խելամտեցի՞ր, որդյա՛կ իմ, որ ինքնաշխատ հանճարն ընկերային միության հսկայաքայլ ոտքով արագապես առաջադիմեց աշխարհում: Ճարտարագետի հանճարն, իր մի ոտքով միշտ կաղ կմնար, և չէր կարող գեթ դանդաղ կրիայի չափ ծանրաքայլ շարժվել, եթե ընկերային ուժն օժանդակելով՝ առաջ չվարեր այն:

Քա՛վ, թե այսպես դատելով՝ ես ուրանում եմ հանճարի իրավունքը, և դու այդպես չկարծես, հանճարասե՛ր որդյակ իմ, այլ ես ինքս եմ խոստովանում, որ մեծ մրցանակն ու փառքը հանճարին է վայել, քանի որ առաջադիմության առաջին տարեքը, առաջին հիմնաքարերը հանճարներ են համարվում, իսկ շենքն ընկերությունն է ավարտում, երբեմն էլ մի հանճարի պակասը մյուս հանճարով է լրացնում:

Ինչ-որ հանճար մի տաղանդ է տալիս, ընկերությունն, այն գործի դնելով, անհատնում շահերով է բազմապատկում:

Բյուր օրհնության և հիշատակության արժանի Գուտենբերգը տքնելով-տքնելով վերջապես հանճարեց տպագրության գյուտը, որն առաջին անգամ շատ փոքր ու անկատար էր, եկան վերջին հանճարները և կատարելագործեցին այն: Ելան նաև ընկերություններ, որ հսկայաշեն տպագրական տներ հաստատեցին, մեծամեծ շոգեշարժ մեքենաներ դրեցին դրանց մեջ և այնչափ առաջ տարան ու զարգացրին տպագրական արվեստը, որի նյութական ու բարոյական շահաբերությունը, թե ասեմ՝ օվկիանոսի չափ ծովացավ, դու հավատա:

Այն երկաթե հրաշալի մամուլը թե՛ ոսկով, թե՛ լույսով միանգամայն փայլեցրեց աշխարհը: Թե չլիներ լուսասփյուռ մամուլը, ի՞նչ կլինեին այնքան գրագիր հեղինակների հանճարի երկասիրությունները, ոչինչ այնպես անլույս, անհոգի կմնային ու կմեռնեին, ինչպես վիժած մանուկն իր մոր արգանդի մեջ: Այո՛, եթե մամուլն իր գրերով, իր թևերով հանճարի ստեղծած գաղափարի լույսը չտարածեր իմացական աշխարհի հորիզոնի վրա, այլևս լույսն ու գաղափարը ո՛չ կենդանի կմնային, ո՛չ կարդ-

յունավորեին մարդկային լուսավորության համար, ապա մի ափ մոխիր կդառնար հանճարը, մարդու հետ կմեռներ և կլցվեր գերեզմանի սափորի մեջ:

Այդպես չեղա՞ն մեր նախնիների հանճարից ծնված անգյուտ ձեռագրերը և հնության հիշատակարանները: Ո՛հ, կա՛մ բարբարոսների ձեռքով հրո ճարակ եղան, կա՛մ իբրև վարձք և բարեպաշտություն, անգետ մարդկանց ձեռքով, իբրև մեռած դիակներ, հողի մեջ թաղվեցին: Մեծ գովության և ազգի երախտագիտության արժանի են Միհթարյան ուխտի գրավաստակ Հայրերը, որոնք ինքնաշխատ ջանքով, այստեղից-այնտեղից մեր հին գրական մնացորդ նշխարները ժողովելով, լույս ընծայեցին: Փտած ու փոշոտված ձեռագրերը, որոնք, իբրև գրվանի տակ դրված ճրագ, անլույս և ապարդյուն մնացել էին վանքերի մութ խորշերում, տպագրության լույսով ելան, կենդանի ժողովրդի մեջ մտան և այսուհետև անմահ են:

Եթե մի Գուտենբերգ ևս քսան դար, երեսուն դար առաջ Մասիսի տակ ծնվեր, մեր աշխարհի վեպերը, մեր քաջ դյուցագումների գործերը, թե՛ գրական և թե՛ մեր հին հայրերի կենդանի ավանդությունները և ինչ որ մեր հայրենի անունը և փառքն են պատմում ներկայումս, անշուշտ, ողջ

անցյալի ստվերի կրծատ բևեռագիր արձանագրություններին չէինք դիմի, որոնց դժվարագույն վերծանության համար աշխարհի հնագետների ուղեղներն են տանջվում:

Ուրեմն խոստովանենք, որդյա՞կ իմ, թե մի հանճար իր կապարյալ գրերով և տպագրության մամուլով գրական մշակների վաստակն անմահացրեց, և դրա փոխարեն գրական հանճարներն էլ Գուտենբերգին անմահացրին: Եվ սա արդեն զարմանալի է, քանի որ հանճարների հոգիներն իրար անմահություն են ներշնչում, և մեկը մյուսի գործն ու հիշատակն են փառավորում:

Մենք ևս պարտական ենք միշտ հիշել ու փառավորել հանճարների հիշատակը, քանի որ նրանք ևս իրենց տոնացույցն ունեն, և իրենք են տոնախմբում քաղաքակիրթ աշխարհը: Եվ մի՞թե արժանի չեն նրանք, որոնք իրենց ինքնաշխատ կյանքը գյուտերով արդյունավորեցին, ոմանք էլ նույնիսկ հացակարոտ, անձնագոհ մեռան: Այո՛ հանճարի այդ նահատակները մարդ էին ու մեռան, բայց իրենց պտղաբեր կյանքի անմահ և անսպառ արդյունքն այսօր բովանդակ աշխարհն է վայելում:

Քրիստոսն Ավետարանի քարոզության ինքնաշխատ մշակներին օրհնեց ու ասաց. «Որ

դուք գնաք և պտղաբեր լինեք, և ձեր պտուղը մնա» (Հովհ. ԺԵ 15): Այո՛, խաչից մինչև այսօր հազար ութ հարյուր այսչափ տարի է, այդ խաչակիր մշակների պտուղը գնալով աճում է և մնում: Մի՞թե կմեղանչեմ, կամ դու չափազանց կհամարես, եթե ես հանճարներին քաղաքակրթության առաքյալներ կոչեմ, որովհետև եթե հանճարները քաղաքակրթության մնուցիչ և դաստիարակ չլինեին, քաղաքակրթությունն՝ իբրև մանուկ, իր խանճարուրի մեջ կմնար առանց աճման:

Ինչպես գրեցի վերը, հանճարները ևս մանուկ կմնային, եթե նրանց օժանդակությանը չհասներ ընկերային քաջալերիչ ոգին և զորությունը: Ինքնին ի՞նչ պիտի աներ այն կորովի ու նկատող աչքը, որ փոքրիկ կաթսայի վրա եռացող ջրի վերմղիչ բուռն շոգիից շարժվող ու վարող մի ահավոր զորություն գտավ. մի՞թե կարող էր նրա չքավոր ձեռքը վիթխարի մեքենաներ ձուլել կամ ահազին շոգեկաթսաներ կազմել: Ի՞նչ պիտի աներ այն քողարկված էլեկտրականության հայտնաբերողը, որով անբարեառ երկաթե թելին խոսել տվեց. մի՞թե նրա ձեռքը բավական էր, որ այստեղից մինչև Հնդկաստան, մինչև Ամերիկա երկաթե թել գցեր: Մեր լեռնցի ճարպիկ քրդերն այնպես են

հավատում, թե այդ երկաթե թելերի մեջ սատանա կա, բայց գիտե՞ս դու, սատանան իրենք են, քանի որ չեն հաղորդում իրենց գողության լուրն ու չեն հայտնում կառավարությանը:

Այսպես ահա, ցանկալի՛դ իմ Սամվել, հանճարն ու ընկերային զորությունը դաշնադիր եղան, մեկը միայն սերմ տվեց, իսկ մյուսը ցանեց այն և ծրագործ ձեռքով ու մեծ տնտեսական գիտությամբ մշակեց: Ամենայն բարությամբ լցվեց, լիացավ, բարգավաճեց արևմտյան աշխարհը: Այսօր իր որդիներն, ամենառատ սեղանին նստած, կշտապինդ վայելում են հանճարի և ընկերային ձեռքի պատրաստած բարիքները:



ԴԱՄ Ժ

ԱՇԽԱՎՐՀԻ ԵՐԶԱԿԱԿ ԵՎ ԱՊԵՐՁԱԿԱԿ ԿՅԱՆՔԸ

Երջանկության ծաղիկները և ապերջանկության փշերը մարդկության դարաստանի խառնաբույսերն են, որ բերում են բարին և չարը:

Իսկ ի՞նչն է հապա բարու և չարի աղբյուրն ու արմատը. մարդկանց սիրտն է, որ տեսալ չիտու և ասաց. «Բարի մարդը իր սրտի բարի գանձերից հանում է բարի բաներ, իսկ չար մարդը իր սրտի չար գանձերից հանում է չար բաներ» (Մատթ. ՃԲ 35):

Սիրելի՛դ իմ Սամվել, աշխարհի երջանկության և ապերջանկության դասը պիտի պատմեմ քեզ, խելամտությամբ ո՛ւշ դիր, դու, որ ծաղկատի հասակիդ մեջ մտադիր ես միայն աշխարհի երջանկության ծաղիկները քաղել և ապերջանկության փշերից հեռանալ:

Խոսենք՝ ի՞նչ են երջանկության ծաղիկները, և ի՞նչ են ապերջանկության փշերը, որոնք խառնաբույս աճում են մարդկության ագարակի մեջ. դրանք դաշտի խոտերի պես ինքնաբույս են և մարդու ձեռքը չի նրանց մշակում։

Եթե ողջամիտ տեսությամբ դատենք, պիտի տեսնենք, որ այդ ծաղիկների և փշերի մշակն ինքը մարդն է, յուրաքանչյուր անձն է, ընտանիքն է, ժողովուրդն է, ազգն է, աշխարհն է, տերությունն է, որոնք, առհասարակ, աշխատում են աշխարհի ագարակի մեջ, կամ ծաղիկներ են մշակում և կամ փշեր, այդ երկու բույսերի սերմերն իրենց ազատ կամքն ու սիրտն են։

Արդ՝ եթե մարդու ձեռքն է երջանկության և ապերջանկության թե՛ ծաղիկների և թե՛ փշերի մշակը, ուրեմն, աշխարհում քանի դեռ կան մարդիկ, մարդկության դարաստանի մեջ երջանկության և թշվառության ծաղիկներն ու փշերը հավիտենական, անհրաժեշտ օրենքով պիտի մշակվեն։ Եթե միայն փշերն ուզենք խլել, ոչ մի օգուտ չունի, դարձյալ այնտեղից կբռւնեն, քանի որ նրանց բուն արմատը մարդն է։ Հարկավոր է մարդուն խլենք աշխարհից, թե՛պետ կան մարդիկ, որ դժնիկն ու ծաղիկը միասին են ուզում խլել՝ առանց խնայելու կանաչն ու չորը, վարդն ու ծաղիկը։

Եթե կարողանանք միայն փշերը խլել և ծաղիկները թողնել, այսինքն՝ թշվառությունը վերացնել, երջանկության ծաղիկներն այլևս կմնա՞ն, կամ երջանիկ կարծված մարդն իր երջանկությունը կզա՞՞ առանց իր թշվառ վիճակը տեսնելու։ Վերցրո՛ւ աղքատ Ղազարոսին մեծատան դռան առջեկից, և ահա նա այլևս իր երջանկությունը չի զգա և ոչինչ կհամարի իր այնչափ հաճելի և փափկասուն կյանքը։ Վերցրո՛ւ նաև մեծատունին և իր շքեղ ապարանքը Ղազարոսի աչքի դիմացից, ծածկի՛ր նրա բեհեղն ու ծիրանին, մեծահաց սեղանն ու ծառաներին, և ահա նա այլևս չի զգա իր թշվառությունը, նա ինքնին մեծատուն կլինի, բարեկամների հետ ուրախ և գոհ կյանք կվարի։

Այո՛, լսում ենք ու հավատում, թե մարդասեր քաղաքակրթությունն անտերունչ, անկյալ Ղազարոսներին ժողովեց աշխարհի հրապարակից, հիվանդանոց, դարմանոց և պատսպարան պատրաստեց նրանց համար, կույրերին, համրերին և խուլերին անգամ գործունեության մեջ դրեց, մինչդեռ մեր աշխարհի խեղանդամներն անդարձան, անպատսպար թողնված են փողոցների մեջ։ Մարդկության այդ անարդված պատկերները, գետնասող, գետնաչարչար լինելով, կողկողագին ձայնով պաղատում են, անցորդների կարեկցու-

թյունն են հայցում: իսկ դու, որ Բոսֆորի ծովակամրջից անցուղարձ ես անում, տեսնո՞ւմ ես թշվառության այդ արյունահոսող պատկերները մայրաքաղաքում, որը Եվրոպայի քաղաքակիրթ աշխարհի խիստ մերձավոր դրացին է:

Բայց մի՞թե թշվառության երևույթի պատկերները նրանք են միայն, որ խեղանդամ են, կույր ու համր են, մի լումայի ու հացի կարոտ են, անտուն-անհարկ են, մերկ ու մուրացիկ շրջում են փողոցներում: Ո՛չ, դրանք թշվառության փոքրիկ երևույթներն են, որոնց մարդու աչքը սովոր է տեսնել և այնպես է կարծում, թե միայն դրանք են թշվառ:

Թշվառությունն աշխարհի երեսին համատարած է, և մեր ներքին ու արտաքին կյանքի մեջ ծավալվելով՝ տիրել է մի տեղ առավել, մի տեղ՝ նվազ, նրա պատկերի երևույթները շատ բազմադիմի են: Տե՛ս, որդյա՛կ իմ, ես նրանց պատկերները հանում եմ քո առաջ:

Թշվառ չե՞ն նրանք, որ աչք ունեն՝ լույսը չեն տեսնում, տգիտության մեջ են և կամավոր կույր. թշվառ չե՞ն նրանք, որ լեզու ունեն, ականջ ունեն, բայց խոսել չեն կարող և ոչ էլ լսել են կամենում. թշվառ չե՞ն այն մարդիկ, որ ոտք ունեն. քայլելու ճանապարհ չունեն, ձեռք ունեն՝ գործել չեն կարողանում, սիրտ, հոգի ունեն՝ թմրած

ու լքված են: Առավել թշվառ չե՞ն այն ժողովուրդները, որ ընտանիք ունեն՝ պանդխտության մեջ չարաշար մաշվում են, որ կյանք ունեն վերջապես, շնչում և շրջում են երկրի վրա, բայց կիսակենդան են. բանական կյանքի և ճշմարիտ կենդանության պատկեր չունեն:

Կան տակավին ընդհանուր թշվառության շատ ուրիշ մերկատեսիլ, ողորմելի պատկերներ, որոնց թողնում և քո աչքի առաջ չեմ հանում, որպեսզի մատաղ հոգիդ այժմվանից վշտակիր չլինի և չհուսահատվես՝ տեսնելով, թե մեր կյանքի թշվառության փշերը որքա՛ն բազմապատիկ են, և որոնց մեջ շրջապատված դժբախտ մարդը միշտ խայթոցահարվելով՝ ամենայն վշտաբերությամբ է վարում իր կյանքը:

Եվրոպայի քաղաքակրթությունը հին աշխարհի բարբարոս կյանքը գիտությամբ, կրթությամբ հեղաշրջեց և ջանում է մարդկային թշվառության փշերը բոլորովին քաղել, արմատախիլ անել և մարդկային կյանքը երջանկության ծաղիկներով գարդարել:

Բայց ի՞նչ օգուտ, երբ տեսնում է, որ կյանքի մեջ, այլևայլ կերպարանքով, նոր երևույթներ են երևան գալիս, և նոր աշխարհի մարդիկ ծաղիկների հետ այդ փշերը ևս մշակում են: Պարձեցող քաղաքակրթությունն իսկ զարմա-

նում է, թե որտեղի՞ց են արդյոք ծնվում թշվառության նորաբույս փշերը, կամ մեր ընկերային երջանկության արտում բարի սերմերի հետ ո՞վ է խառնում ու ցանում դառնահամ ու հեղձուցիչ որոմները:

Հրեշտակները հարցրին, Հիսուսը պատասխանեց, թե թշնամի մարդն է այն ցանել: Այո՛, չարարվեստ մարդն է որոմնացան մշակը, որ ինքնաբույս արտադրում է իր սրտից ու բնությունից: Ուրեմն կարելի՞ է այս աշխարհից վերացնել այն մարդկանց, որ թշնամի են ընկերային երջանկությանը և միշտ ապականում են նրա բարի սերմերի ագարակը:

Այդ ցանկությունը հրեշտակները ևս ունեցան, հրաման խնդրեցին, որ գնան ու որոմնաբույսերը քաղհանեն, բայց նախախնամող Հոր Որդին ասաց. «Թո՛ւյլ տվեք, թող միասին, մինչև հնձի ժամանակը մի երկուսն առժամանակ ածեն» (տե՛ս Մատթ. ԺԳ 24-30):

Թեպետ Ավետարանի առակը խսկապես հավատացյալներին և թերահավատներին ցույց է տալիս, որ այդ երկու դասն անբաժան, միասին աճում և ազդում են թե՛ եկեղեցու անդաստանի մեջ և թե՛ աշխարհում, սակայն շատ բնական է այս խորհրդավոր առակից իմաստասիրել, որ երկնային նախախնամության մի թաքուն, անիմանալի խոր-

հուրդ է այն, որ նա կամենում է՝ այդ երկու հակառակ բույսերն իրար հետ աճեն ու մնան: Մի՞թե հողը ևս այդ օրենքի տակ չէ, դու չե՞ս տեսնում, որ մի տեղ ծաղիկներ, մի տեղ փշեր են բուսել: Հողի բնական փշերը հնազանդ են մարդուն, և մարդը կարող է նրանց արմատով հանել և տեղը ծաղիկներ տնկել, բայց մեր ընկերային աշխարհի փշերը այնքան հին ու խորարմատ են, այնքան խիստ ու ստահակ են, որ մարդու բանականության և ճարտարության առաջ չեն հնազանդվում, ուստի դժվարին, անհնարին է թե՛ հին և թե՛ նոր փշերը մարդկության անդաստանից վերացնել:

Խոնարհվելով վերնախնամ տեսչության առաջ՝ պետք է խոստովանենք, որ մարդկանց այս խառնաբույս ընկերային կյանքը հավիտենական օրենքով փակված մի կնիք է. մարդու ձեռքը չի հասնի քակել կամ եղծել այն, երջանկությունը պահել, թշվառությունը հեռացնել աշխարհից:

Խոսում և գրում ենք, որդյա՛կ իմ, թե ո՞րն է մարդու երջանկության և թշվառության նշգրիտնակարագիրը, կամ ո՞վ է երջանիկ և ո՞վ է թշվառ աշխարհում:

Մարդիկ կասկածելի դատաստանով այնպես են համարում, որ ով որ հաց և գանձ ունի, ով որ համբավով, հարստությամբ որպես աստղ փայլում է ընկերային հորիզոնին, ով որ իշխան է,

տիրում է ժողովրդին, ով որ գահ ունի և զորությամբ պերճացած հրաման է տալիս աշխարհին, ահավասիկ, նրանք են մարդկանց դատաստանի առաջ համարվում երջանիկ, իսկ ով որ հաց չունի, իր աստղն աղոտ է, չի փայլում, նրա համար ասում են, թե թշվառ է:

Բայց եթե մտնենք մարդկային հասարակություն և զննենք յուրաքանչյուր մարդու սիրտն ու հոգին, կտեսնենք, որ այն մարդիկ, որոնց ժողովուրդը երջանիկ է համարում, նրանք իրենք այդպես չեն կարծում. Ես դա ցույց տամ մի այլաբան օրինակով. մեր մտքով մի սանդուղք ստեղծենք, որի ծայրը համանի մինչև երկինք, և իր ամեն մի աստիճանին աշխարհի բոլոր մարդիկ խումբ-խումբ շարված լինեն՝ թագավորից սկսած մինչև հետին ստրուկ ծառաները: Դու մի պահ կանգնի՛ր այդ սանդուղքի հանդեպ, դիտի՛ր ու տե՛ս, թե ինչպես աշխարհում ամեն մարդ, իր կյանքի վիճակից անգոհ լինելով, սանդուղքի ստորին աստիճաններից սկսած մինչև վեր, ուր թագավորների գահերն են դրված, բոլորը միասին երջանկություն, երջանկություն են աղաղակում և դեպի այն ձգտում:

Թագավորը, որին համարում ենք, թե երջանկության կատարին է հասել, կասի, թե՝ երջանիկ կլինեի, եթե գահս ուրիշի գահից վեր դնեի,

Կեսար լինեի, Նապոլեոն լինեի և այլն: Գահաժառանգը կասի, թե՝ իմ այն օրը կլինի երջանիկ, երբ գահակալ հայրս գերեզման կզնա, իր գահն ինձ կթողնի, և ես թագ կկապեմ ու կթագավորեմ աշխարհի վրա: Մեծ նախարար իշխանը կասի, թե՝ երանի արքայազուն լինեի, և իմ գլուխը թագով պատկեր, այնժամ ես տիրապես երջանիկ կլինեի:

Այդպես՝ սանդուղքի գլխից մինչև ներքին աստիճանը, մարդիկ ցանկությամբ ձգտում են դեպի վերագույն կարծված երջանկությունը և միշտ դժգոհ լինելով իրենց կյանքից ու վիճակից, ցանկությունից մաշվելով՝ վախճանվում են ու միայն գերեզմանի հողով են հագենում:

Ի՞նչ զարմանալի խաղեր կան ու կլինեն այս երջանկության, ոու ասա թշվառության սանդուղքի վրա, որտեղ մարդիկ, ելեէջ առնելով, մրցում են, և ամեն ոք դեպի բարձրություն է ձգտում՝ հուսարով, թե ստույգ երջանկության կայանը բարձրության աստիճանի վրա է:

Բայց, ավա՛ղ, հեգ մարդկային ընկերության այս դժվարին ելեէջներում, մեծագույն մասը, սանդուղքի աստիճաններից վայրահոսելով, թափում են դետին, ամեն մարդ իր չափով ու թափով ջախջախվում, և այնժամ մեր աչքի առաջ բացվում է մարդկանց թշվառության տեսարանը:

Թշվառի կյանքն ինքնին արդեն ջախջախված է իր կարիքի ու զրկանքների մեջ, նրա վիճակը միշտ գետնահավասար է, նա բարձրություն չունի, որ երկնչի կործանումից, իսկ երջանիկ կարծվածը, որի բախտն ու վիճակը բարձրագույն աստիճանի վրա են կայացած, և ինքն էլ առանց կասկածների է, հանկարծ սահելով՝ կործանվում է և մեծ շառաչով տապալվում գետին, ինչպես մի տապարահաստ մայրի ծառ։ Այնժամ միապես ողբում են անբախտն ու բարեբախտը՝ մեկն իր մի ոտքից, մյուսն իր փարթամ գլխից չարաչար ջախջախվելով։

Ուրեմն՝ եթե այսպես է, ապա այս աշխարհում երջանկությունը և ապերջանկությունը զուգածին եղբայրներ են, մեր կյանքի ճանապարհին միշտ համընթաց են, և մեզ անհնարին է թվում նրանց իրարից բաժանելը և մարդկային կյանքն իրու մի դրախտ այնպես մշակելը, որ բնավ թշվառության փշեր չբուսնեն։

Ուստի, որովհետև մարդու կյանքը խառնաբույս է երկրում, քանի դեռ ինքը կա, ընդունայն է ջանալ մեր այս փշալից աշխարհը ծաղկերուրաստան դարձնել։

Խոռվում ու վհատվում ես, որդյա՞կ իմ, երբ այսպես հուսահատ եմ խոսում՝ տեսնելով, որ պարտիզապանն, իր պարտեզը մշակելով,

դարմանելով, փշերից մաքրելով, անբեր հողն է բարի սերմերով ու տունկերով արդյունավորում։ Մի՞թե մարդը կամ մարդկությունը հողից անպիտան է։

Այո՛, մարդը հողի տիրապետ իշխանն է, և հոգեղեն ձիբքով ու բանականությամբ ճոխացած՝ հողից բյուր անգամ գերազանց է, բայց գիտե՞ս մարդն ի բնե չարին հակամետ է, ճանաչում է բարին, բայց ինքը դեպի չարն է հակամիտում, ուստի ծշմարիտ է Աստծու խոսքը, թե՝ միտքը մանկությունից չարին է հարում (Ծննդ. Հ. 21)։ Մարդը ոչ միայն հակամետ է չարին, այլև չարաստեղծ ու չարահնար է։ Մարդն՝ իբրև հեղինակ, իր սրտի գործարանում ստեղծում է չարն ու դուրս հանում. ահա ա՛յդ է թշվառության աղբյուրը, որ վազում է դեպի մեր ընկերային դարաստանն ու սնուցում մեր ապերջանիկ կյանքի թշվառության փշերը։

Քրիստոսն աշխարհի փիլիսոփաների պես մարդուն իր երեսով ու երևույթով չքննեց, նա թափանցող հոգի էր, մտավ մարդու սիրտը, կրկտեց ու վկայեց, որ չարության ու բարության աղբյուրը մարդու սիրտն է, բարի սրտից բարին է բխում, չարից՝ չարը։ Այս երկվտակ հոսանքները ծավալվում են մեր ընկերային հողի վրա, որոնցով միասին աճում ու զորանում

են թե՛ երջանկության ծաղիկները, թե՛ թշվառության փշերը:

Քաջ գիտակցեցի՞ր, բարեսե՛ր որդյակ իմ,
որ գտանք մարդկային ընկերության աղբյուրի
բուն ակը, որ մարդու սիրտն ու միտքն է:

Պետք է խցել չարի ակը, պետք է բանալ բարու ակը, որ բարություն բխի: Փոքրիկ չարերը
չարության փոքրիկ վտակներ են բխում, եթե
առանձին մնան, այնքան էլ չեն կարող ողողել
մարդկային հասրակական աշխարհը:

Իսկ մեծագույն չարերի խորը սրտից ամենամեծ չարության գետերն են հորդում և հեղեղելով առհասարակ ապականում ժողովրդի
դաշտն ու դարաստանը: Եվ զարմանալին այն
է, որ չարերը չարերին էլ չեն խնայում, որոնք
իրենց գործակիցն ու բաժանակիցն են, այլ չա-
րին ու բարուն միԱնույն ջրում են խեղում և
մի կրակով վառում երջանկության ծաղիկներն
ու թշվառության փշերը:

Մեծն Ալեքսանդրը և Քսերքսեսը սովորա-
կան մարդիկ էին և մարդկայինը խորթ չէր
նրանց. նրանց լայնաբաց սրտից բխեցին աշ-
խարհակալության ջրհեղեղները, մեկը Պարս-
կաստանից սկսվեց, հասավ մինչեւ Հունաստան
և թափվեց Հոնիական ծովը, իսկ մյուսն սկսվեց
Մակեդոնիայի աշխարհից, իր արշավանքի հզոր

հեղեղով խեղդեց Պարսկաստանն ու Հնդկաս-
տանը, դարձավ դեպի Բարելոն և թափվեց
Պարսից ծոցը:

Այսպես նաև ուրիշ աշխարհակալների հպար-
տահող սրտերից չարության հեղեղներ բխեցին
ու ապականեցին մարդկության դրախտը: Այդ-
պիսի արյունկզակ սրտերից ոմանք ուզում էին
ձեռքերը լվանալով չքմեղանալ աշխարհի առաջ,
ուստի պարծենալով ասում էին, թե՝ «Մենք Աստ-
ծու ձեռքի վրեմինդիր պատուհան ենք»:

Այն գիտենք, որ երկնային արդարության դա-
տաստանն է մեղապարտ ժողովրդի հատուցումն
այդպես տնօրինելը. դրանք իրենց անպա՞րտ են
համարում: Բայց գիտենք նաև, որ աշխարհում
շատ անգամ չարերին չարերն են պատուհանում,
որից մարդկային միտքը վարանում է ու չի կարո-
ղանում ըմբռնել Աստծու արդարության ու դա-
տաստանի անքննելի խորհուրդը:

Տեսա՞ր, սիրելի՛ որդյակ իմ, մեծասիրտ չա-
րերը մեծագույն չարիքների աղետներ են բե-
րում աշխարհին, որոնց մահաբեր չնչի առաջ
խամրում են երջանկության բոլոր ծաղիկները
և վար են թոթափիվում, և այն, որն այսօր երջա-
նիկ է, վաղը թշվառության հողին է նստում:

Բայց փոքրաթիվ չարերից ևս վախենանք ու
կասկածենք, թեպետ մտածելով առանձին-առան-

ձին՝ դրանք մի-մի փոքրիկ սրտեր և աղբյուրներ են համարվում, իսկ երբ վտակ առ վտակ գալով՝ միանում են, այնժամ ահազդին գետ են կազմում, հեղեղում երկիրը, և ազգ ու ժողովուրդ միան-գամայն գետում ջրահեղձ են լինում:

Ես չեմ ասում չարության բնածին սերմերն ու կաթիլներն իսպառ չքացնել մարդու սրտից, որում ելևէջ են առնում, ինչպես հյուլեն արևա-շողի մեջ, և մարդու չարամիտ սիրտը բոլորու վին մի բարության աղբյուր դարձնել անխառն ու անմասն չարության շամանդաղներից:

Որքա՛ն դժվարին և անհնարին է կապարի նման երկրին ծանրացած երկրաքարշ մարդուն այնքան գերազույն բարության վերածել և կարծել, թե նա կարող է բարի լինել, ինչպես Աստված և հրեշտակը։ Հիսուսը տեսավ, թե ինչ է ներքուստ կրում մարդու կեղծող հոգին և ասաց. «Բարի չէ ոչ ոք, այլ միայն Աստված» (Մարկ. ֆ 18, Ղուկ. ֆ Ը 19):

Մարդու սիրտն՝ իբրև մի երկծորակ աղբյուր, մե՛րթ չարություն է բխում և մե՛րթ բարություն, մե՛րթ դառն է և մե՛րթ քաղցր։ Սրա համար մեր հոգեկիր նարեկացին մարդու հարափոխ վիճակը ողբալով ասում է. «Այսօր՝ մաքուր հոգեկիր, վաղը՝ մոլի խելագար»։ Շատ և բավական է, եթե ապիկար մարդը կարողա-

նա չարության ակը որքան հնարավոր է փակելով նվազեցնել, բարություն բխել և իր սիրտը սրբել աղտղտին կաթիլներից։

Սոկրատի նման բարոյական իմաստասերները զորհանապազ աքնում են և, թերևս, չեն հավատում ու ասում են, թե լույսը, գիտությունը, դաստիարակությունը, քաղաքակրթությունը կարող են մարդու սիրտը կրթելով, մշակելով, ուղղելով սրբել չարության ախտերից և վերացնել թշվառությունն աշխարհից։

Այդ հրաշքին եթե միայն մարդու ձեռքն արհեստավորի, ես չեմ հավատա, որդյա՛կ իմ, իսկ եթե մարդու դաստիարակող ձեռքի հետ Ավետարանի հոգին և ընկերության ձեռքը ևս հրաշագործի, այո՛, այնժամ կհավատամ, թե մեր ընկերային կյանքը կծաղկազարդվի և կազատվի չարության և թշվառության վիշերից։

Երկյուղա՛ծ որդյակ իմ, ես քեզ չեմ խրատում, որ աշխարհի կրթության և գիտության իմացական լույսը չընդունես, այլ հորդորում եմ, որ քո ստացած բնական լույսը Ավետարանի լույսի և սիրո հետ խառնես, երկու լույսով շրջես աշխարհում, մի լույսով քո առօրյա հացը գտնես, իսկ մյուսով՝ հավիտենական կյանքը։ Դրանով դու միանգամայն ազատ կմնաս մարմնիդ և հոգուդ կորստական թշվառությունից։

Աշխատի՛ր, որ սրտիդ բուրաստանը բարեբույս ծաղիկներով մշակես, աշխատի՛ր, որ փշաբույս չլինի սիրտ, և փշերով չվարակվի հոգիդ. իմացի՛ր, թե չարարվեստ լինելով՝ փուշ մշակես, փուշը քեզ կվառի, կյանքդ մոխիր կդառնա: Մարդ ես դու, և, անշուշտ, բնածին փշեր են բուսնում քո մեջ, միշտ ջանա խնամքով սրբել դրանց, եթե մի անգամ խոր արմատ ձգեն, գիտե՞՞ս՝ որքան դժվար է լինելու հետո արմատահան անելը: Զգուշացի՛ր նաև եկամուտ չարության սերմերից, երբ չարի մշակ ընկերներդ այն ուզում են սերմանել մատաղ սրտիդ մեջ: Ընկերային կյանքում ո՞չ չարություն փո՛խ առ, այլ միշտ բարություն ստացի՛ր:

Ի վերջո, մեծ երկյուղածությամբ կարդա՛ Դավթի սրտահան աղերսը. «Իմ մեջ մաքուր սիրտ հաստատի՛ր, Աստված, և արդար հոգի նորոգի՛ր իմ որովայնում» (Սաղմ. Ծ 12):



ԴԱՍ ԺԱ

ԱՇԽԱՏԻ ԱԶԳԵՐԻ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄՆ ՈՒ ՆՎԱՋՈՒՄԸ

Ի՞նչ է նրա անունը, որի ամենակալ ձեռքից մի աներևույթ կշիռ կա երկնքից երկրի վրա կախված:

Նրա տուրբ անունն արդարություն է, որ կշռում է այս աշխարհի ազգերի մեղքն ու արդարությունը և չափում հատուցումը: Մարդիկ այն չեն տեսնում և վարանում են, թե ինչո՞ւ համար ազգերը մե՛րթ բարձրանում են և մե՛րթ խոնարհվում, մե՛րթ բարդագամում են և մե՛րթ նվազում:

Դրա պատճառները զենքը և զորությունը չեն, այլ՝ մեղքը և արդարությունը. ուստի Սողոմոնն ասում է. «Արդարությունը ազգը բարձրացնում է, մեղքը՝ նվազեցնում» (Առակ. ԺԴ 34)

Նախորդ դասին քաջ դիտակցեցիր, որդյա՛կ իմ, թե որոնք էին մարդկային ընկերային

կյանքի երջանկության սկզբնաբուխ աղբյուրները՝ բարությունն ու չարությունը, որ առաջանում էին մարդու սրտից, ինչպես ջրի վտակն աղբյուրի ակից:

Այս դասի մեջ պիտի սովորեա, թե որո՞նք են ապա այն սկզբնապատճառ աղբյուրները, որով աշխարհի բովանդակ ազգերը և ժողովուրդները մե՛րթ բարգավաճում են և մե՛րթ նվազում, մե՛րթ բարձրանում են և մե՛րթ խոնարհվում, մե՛րթ ազատ քաղաքացի են լինում և մե՛րթ ստրուկ ծառա: Ամբողջ հոգով ուշք դիր, և ես կասեմ քեզ այդ հեղհեղուկ բախտի պատճառները:

Երկրի համայն ազգերը, ժողովուրդները, իշխանությունները և գահերը հեղաշրջող տարերքներ կան. մեկի անունն արդարություն է, մյուսինը՝ մեղք. այս երկաքանչյուրի հեղինակը և ծնողը դարձալ մարդն է, մարդու սիրտն է և մարդու աշխարհի վրա վարած կյանքի արգասիքն է:

Սուրբ Գիրքն այս երկու որոշակի բառերով է հասկացնում իսրայելի ժողովրդի կյանքը, որովհետեւ այդ երկու բառերի ընդարձակ նշանակության տակ է առնում մարդու կյանքի բովանդակ գործերը՝ մեղքն ու արդարությունը:

Մարդն այս աշխարհում այդ երկու ճանապարհի վրա է քայլում՝ կա՛մ արդարության և կա՛մ մեղքերի: Ուղիղ ճանապարհն արդարու-

թյան ճանապարհն է, մոլոր ճանապարհը մեղքի ճանապարհն է: Մարդն ազատ, անբռնադատ է, ինքն ազատաբար ընտրում է իր ճանապարհը, կա՛մ արդարություն գործելով՝ արդար է լինում, կա՛մ մեղք գործելով՝ մեղապարտ է լինում:

Ինչպես մարդը, այնպես էլ ազգը, ժողովուրդը, երկիրը և թագավորությունը դարձյալ այդ երկու ճանապարհով են ընթանում: Եթե արդարություն են գործում, դրա պառազը փառքն է, ազատությունը, խաղաղությունը, երջանկությունը և բարեկեցիկ կյանքը, իսկ եթե մեղք և անօրենություն են գործում, այն ևս իր մոտալու վախճանն է ունենում, այն է՝ անարդանքը, ստրկությունը, սուրը և պատերազմը, տառապանքը, աղքատությունը և չարավար կյանքը:

Ո՞վ է, որ այս հատուցումները տալիս է ազգերին, ո՞վ է, որ կշռում ու չափում է ազգերի մեղքը և արդարությունը և փոխարենը վճարում, ո՞վ է, որ արդարագործ ազգերին օրհնելով՝ նրանց կյանքը և սերունդը բազմապատկում, բարգավաճ է դարձնում այս երկրի վրա, ինչպես խոստանում էր արդար նահապետին. «Օրհնելով կօրհնեմ քեզ և բազմացնելով կբազմացնեմ քո զավակներին երկրի վրա» (Ծննդ. իԲ 17):

իսկ ո՞վ է, որ անիրավ, մեղավոր ազգերին զրկում է իր օրհնությունից, նրանց կյանքն անձեռ, անսերունդ, առանց բարգավաճելու է թողնում, որով կամ իսպառ ջնջվում են, կամ նվազում:

Աչափասիկ, այս ամենը չափողը և տնօրինողը Արդարությունն է, նույն ինքը՝ Աստված, որ արդարություն և ուղղություն է սիրում, ինչպես Դավիթն է ասում (Սաղմ. Ծ 8, Ճ՛ 12, 26, 64): Նույն արդարությունն է, որ յուրաքանչյուր ազգի իր գործով է չափում: Քրիստոսն աշխարհ եկավ, վկայեց այդ արդարության համար և ասաց. «Եվ ինչ չափով, որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ համար» (Մատթ. Է 2, Ղուկ. Ժ 38):

Բայց, արդ, սկսեմ ճառել քեզ, որդյա՛կ իմ, թե ինչպես է ազգի և ժողովրդի մեջ տարածվում մեղքը և արդարությունը: Շատ բնական է, որ մեղքը նախ անհատ անձերից սկսվի և գնալով բազմանա, որով ոտքից գլուխ կախտահարվի ժողովրդի մարմինը. ահավասիկ այս է ամբողջ ազգի և ժողովրդի մեղքը:

Իսկ երբ, ընդհակառակը, ժողովրդի բարոյական մարմինը, ոտքից սկսած մինչև գլուխ, արդարություն է գործում, մեծ ու փոքր, առհասարակ յուրաքանչյուր կարգի մարդ ճանա-

չում է իր պարտքն ու իրավունքը. դա էլ ժողովրդի և ազգի արդարությունն է:

Թե՛ մեղքը, թե՛ արդարությունն իրենց նկարագիրն ունեն: Ես նախ մեղքի տգեղ ստվերագիրը հանեմ քեզ համար, որ այժմ, երբ մեղքն իր ամեն հանգամանքներով տարածվում է ժողովրդի ողջ մարմնի մեջ, նրա մահվան առիթ է դառնում. սկսում է կամաց-կամաց հյուծվել, մեռնել:

Եվ ո՞րն է այդ մահացու մեղքը: Ինչ որ հիշում եմ, այն եմ թվում:

Երբ ազգի և ժողովրդի խղճի գիտակցության խայթը իսպառ բթանում է, երբ պարտականությունների և իրավունքների արդարաչափ կշիռը ժողովրդի ընկերային կյանքից վերանում է, երբ ազգի և երկրի վարիչ իշխանները արդարության պարտականությունները մոռանում են, երբ դատավորներն անիրավում են, և օրենքի փոխարեն կամքը և բռնությունն է տիրում, երբ ժողովուրդը մոռանում է այն պատվերները և պարտականությունները, որ Քրիստոսը և Պողոսը պատվիրեցին՝ Կայսրինը կայսրին տալ (Մատթ. ԻԲ 21, Մարկ. ԺԲ 17, Ղուկ. Ի 25), և հատուցել, ում պարտական է ժողովուրդը, ոչ մեկին պարտք չմնալ (Հոռմ. ԺԳ 7): Երբ ժողովուրդը ստահակում է և երկրի ու ազգի օրենքները հնագանդությամբ չի հարգում,

երբ հեստում է և ուզում է անիշխան լինել, երբ ժողովուրդն իր ընկերային շահավաճառության մեջ առանց արդար կշռի է գործում, այլևս իր խիղճը բաց է թողնում և որչափ կարող է անիշխավում և նենգում է, երբ նյութապաշտությունն է տիրում ժողովրդի մեջ, հոգին նվաստանում ու մեղկանում է, հովիվն իր հոտով, պաշտոնյան իր ժողովրդով և իշխանն իր երկրով Աստծու ճանապարհից առհասարակ խոտորվում են, երբ ժողովուրդը ճշմարտությունն ատում է, չի ուզում գնալ դեպի լույս, երբ խավարասեր լինելով՝ խավարագործության մեջ է թափառում, երբ ազգը և երկրի կառավարությունը, յուրաքանչյուրն իր կարգը գերադասելով, շփոթ է առաջացնում, ժողովուրդն իբրև իշխան է լինում, մանուկը ծերունու աթոռին է բազմում, քահանան իբրև ժողովուրդ է լինում, և ժողովուրդն՝ իբրև քահանա, տերն՝ իբրև ծառա, և ծառան՝ իբրև տեր, տիկինն՝ իբրև աղաքին, և աղաքինն՝ իբրև տիկին, երբ անարդը հարգվում է իբրև պատվական, պատվականն՝ անարգվում, երբ տգետներն ու խարեւաներն են տիրում, ժողովրդի հավատարիմները՝ մերժվում:

Համառոտ մի խոսքով՝ երբ երկրի ժողովուրդը բանականության լույսը, մարդկության պատիվը իսպառ մոռանում է, թե՛ բնական խղճի

օրենքները, թե՛ Աստծու հայտնած օրենքները, թե՛ քաղաքային և ընկերային օրենքները եղծանում ու ապրում է այնպես, ինչպես Նոյյան դարի ապիրատ ժողովուրդը, որոնց համար Սուրբ Գիրքը վկայում է. «Ապականվեց ամեն մարմին Տիրոջ առջև» (Ծննդ. Զ 17):

Իսրայելի ժողովրդի մարմինը, երբ ոտքից մինչև գլուխ զեղծանվում և ախտավորվում էր, Եսային՝ իբրև բժիշկ, շոշափելով նրա ցավերը, ասում էր. «Ամեն գլուխ ցավի մեջ է, ամեն սիրտ՝ տրտմության, ոտքերից մինչև գլուխ նրա վրա առողջ տեղ չկա, և այլն» (Եսայի Ա 5-6):

Եթե ուզում ես թե՛ եբրայական ժողովրդի, թե՛ աշխարհի այլևայլ հին ժողովուրդների բարքերի ապականության ողջ նկարագիրը տեսնել, մեծ ուշադրությամբ կարդա՛ Սուրբ Գրքի Դատավորների և Թագավորությունների գրքերը, կարդա՛ մարգարեռությունների բոլոր գրքերն ու բողոքները: Տե՛ս՝ Աստծու ընտրյալ մարգարեռները որքա՛ն կենդանի նկարագիր են բերում ու այն դնում ժողովրդի աչքի առաջ:

Թո՛ղ Սուրբ Գիրքը, կարդա՛ ազգերի ընդհանուր պատմությունները, որոնք նույն ժամանակների մարդկանց կյանքի հանգամանքներն են հայտնում, և կտեսնես, որ ժողովուրդների համատարած մեղքը կործանել է աշխարհի հին ազգե-

րին ու գահերը, ինչպես Եգիպտոսի, Հունաստանի, Հին Հռոմի վերջին Հարստության, Կարքեղունի, Բաբելոնի, Ասորեստանի և այլն։ Չմոռանանք նաև նոր Հռոմի Կոստանդիանոսի գահը, որ Բյուզանդիոնի գագաթն էր բարձրացել։

Աշխարհի նոր ազգերին էլ մեղքերը տակավին պիտի կործանեն, եթե խույս տան ճշմարիտ քաղաքակրթության լույսից և դեռևս ցանկանան ապրել հնության և հին մեղքերի մեջ։

Ճշմարիտ քաղաքակրթություն ասացի, որպեսզի դու կարողանաս որոշել, որ աշխարհում սուստ քաղաքակրթության երևույթներ ևս կան, որոնք հեռվից, թեև այլևայլ գույներով շպարված, տեսնվում են, բայց գնալով ժողովրդի կյանքը ներքուստ վատթարացնում են, զեղծանում զեխության ու ծայրահեղ ազատության մեջ։ Նրանք ևս վաղ թե ուշ այժմյան բարգավաճությունից կնվազեն ու կկործանվեն, քանի որ, ինչպես աշխարհի փորձն է ցույց տալիս, ամեն ծայրահեղության վախճանը կործանում և կորուստ է։

Բայց դու, ողջամի՛տ որդյակ իմ, միգուցե այնպես ես ըմբռնում ու դատում, թե եղք ազգը և ժողովուրդը, ինչպես վերը նկարագրեցի, իր զեկավարներով հանդերձ, միահամուռ մեղանչում են, այնժամ համայն ազգը, հայրենիքը և պետությունը, իբրև արդար և անաչառ հատուցում

միասին կրելով կորստյան աղետը, կործանվում են, որի ճիշտ օրինակը տեսնում ենք Սոդոմի և Գոմորի ամբարիշտ ժողովրդի վրա։ Արդար նահապետ Աբրահամը, խոնարհվելով իբրև հող ու մոխիր երկնային արդարության առաջ, կամեցավ նրա ցասումն իջեցնել, ուստի մտերմորեն հարցրեց. թե՝ «Տե՛ր, այդ քաղաքների մեջ, եթե քառասուն արդար գտնվի, դարձյա՞լ պիտի կործանես, նրանց համար մնացյալ ժողովրդին չպիտի՞ խնայես» (Ծննդ. ԺՀ 29)։ Այսպես հարցնելով՝ իջավ մինչև արդարների հինգ թիվը, այն ևս չգտնվեց, միայն մի արդար կար՝ Ղովտը, դուրս հանեց նրան ու հետո կործանեց ու մոխիր դարձրեց ամբարիշտների քաղաքները։

Սակայն շատ անգամ արդարության հատուցումն ուրիշ եղանակով ենք տեսնում, այսինքն՝ ժողովրդի կամ երկրի մի մասը մեղանչում է, օրինազանց է լինում, հատուցումն ամբողջ ազգը հավասարապես է ընդունում։ Ի՞նչ է դա՝ լավ հայտնի է աշխարհին. ինչպես անցյալի պատմությունից գիտենք և ներկայի մեջ տեսնում ենք մեր աչքով, զեկավարները մեղք են գործում, երկիրը և ժողովուրդն են տուժում և կործանվում, ազոխը հայրերն են ուտում, որդիների ատամներն են առնում, առաջնորդները շեղվում են, ժողովուրդն է մոլորվելով հետեւում։

Եվ այսպես՝ աշխարհի մեծամեծ լեռների պես մեծակույտ մեղքերը, զայրացած հեղեղների և գետերի նման, բարձրադիր լեռներից թափվում են ժողովրդի դաշտի վրա, և այն հեղեղի մեջ առնելով՝ ամեն բարեշինություն քանդում և ավերում են։ Ի՞նչ է լինում սրա վախճանը. ոչինչ, այնուհետև իրենք ևս նստում են ավերակ հողաբերի վրա։

Համառոտ անցա այս կետի վրայով, որդյա՛կ իմ, ուշիմ ես դու, հասկանում ես, թե ինչ եմ խոսում, թողնենք ժողովրդի մեղքը, բավ է, որքան նրանից խոսեցի, այժմ սկսեմ նրա արդարությունից խոսել։

Ինչպես վերը տեսար, մեղքը, մեծանալով, տարածվելով, քանդում է երկիր ու ժողովուրդ, այդպես էլ արդարությունը շինում և կանգնեցնում է ժողովրդի համար տուն, քաղաք և երկիր, և ինքն այնտեղ հանգչում։ Արդարությունը ժողովրդին դեպի կորուստ չի տանում, այլ դեպի գյուտ, դեպի փառավորություն, բարձրություն և անմահություն։ «Քանի որ արդարությունը մշտնջենական է և անմահ»։

Ինչպես է լինում, որ որևէ երկիր իր ժողովրդով, ջեկավարներով, յուրաքանչյուր կարգի և վիճակի մարդկանցով իրենց պարտականություններն արդարությամբ են գործում։

Դու միտք դիր, և ես կարճաբանեմ քեզ. Երբ պետական աթոռին նստող թագավորն արդարությամբ է գործում, իշխանն իրավունքով է իշխում, դատավորն օրենքով է դատում, ժողովուրդը հնագանդվում է օրենքին, երբ ընկերային շահավաճառության մեջ գինուն ջուր չի խառնում կամ չփորձած արծաթը փորձվածի տեղ չի ծախում, որ վերևից Աստված տեսնում էր ու հանդիմանում հսրայելի ժողովրդին։

Այո՛, արդարությունը բարձրացնում է ազգ ու ժողովուրդ, երբ նա ծամարիտ պաշտում է իր Տեր Աստծուն, չի կեղծավորում միայն շուրջերով պատմել նրան, երբ նա երախտագետ է լինում իր պարգևատու Արարչին և չի ապերայտում, ինչպես հսրայելի ապաշնորհ ժողովուրդը, որոնց ապերայտությունն Աստված դատելով վկա էր կանչում երկնքին ու երկրին ու սրտառուց կերպով գանգատվում։ «Եզն իր տիրոջն է ճանաչում, և էշը՝ իր տիրոջ մսուրը, իսկ հսրայելն ինձ չճանաչեց, իմ ժողովուրդն ինձ չհասկացավ» (Եսայի Ա. 3)։

Արդարություն են գործում ու բարձրանում, երբ քահանան ու ժողովուրդը կատարում են եկեղեցու օրինական պարտականությունները, քահանան պաշտոնասեր է լինում, ժողովրդասեր է լինում, գիտությունը չի մերժում, տե-

սուչ հովիվն ու հոտը ճանաչում են իրար, մեկն, անձնադիր լինելով, արթնությամբ հսկում ու հովում է, մյուսը՝ կամավոր հնագանդվում նրան, երբ ժողովրդի բոլոր դասակարգերը և յուրաքանչյուր անհատ անձ թե՛ առ Աստված և թե՛ առ մարդկի իրենց պարտքերը ճանաչում են և Ավետարանի քարոզած ընկերական օրենքը լիովին կատարում են:

Ժողովուրդը ևս բարձրանում է, եթե Ավետարանի եկեղեցու այդ արդարությունները գործելուց հետո սիրում է նաև ծամարիտ քաղաքակրթության առաջադիմությունը, որ Ավետարանի քարոզած ազատության լույսից լույս առնելով՝ լուսավորում է մարդկային հասարակական աշխարհը, մարդուն իր հին բարքերի բիրտությունից դեպի կատարելություն է տանում և ազնվացնում:

Ես գիտեմ՝ դու, մեր այս ժամանակը տեսնելով, գայթակղվում ես քաղաքակրթ աշխարհով, որ թողնում է Ավետարանի քարոզած խաղաղության դարը, թողնում է արդարության իրավախոհությունը, կոփի, սուր, թնդանոթ է գործի դնում, արյունով լվանում կյանքը, մահով գրավում ժողովրդի որդիներին:

Հարցեր մի՛ տուր, պատասխանը շատ դժվարին ու ընդարձակ է, դու նույնիսկ չգիտես, որ

քաղաքակրթ աշխարհն, իր հին ոգուց փոխվելով, դեռ զգոնացած չէ և այդ սպանիչ հրազեն գործիքներն իբրև արդարություն է գործի դնում: Ո՞վ է լսում Քրիստոսի խոսքը, որ սաստում է. «Սուրբ դիր պատյանի մեջ...» (Մատթ. հ. 52, Հովհ. Ժ. 11):

Թողնենք գահակալներին, թողնենք պետական մարդկանց, նույնիսկ ժողովուրդն է գահ սիրում, փառք սիրում, սուր սիրում, իր ընկեր ժողովրդի վրա հաղթություն սիրում. բայց ես քեզ չեմ ասում, թե արևմտյան քաղաքակրթ աշխարհում արդարությունը հանգուցյալ է տիրապես:

Ո՞չ, նրա մեղքերը շատ են, նա դեռ պահում է հին վայրենության այն մեծ, ահոելի մեղքը: Եկո՞րն է դա. փոխանակ խաղաղարար արդարության՝ խոռովություն և արյունագործության արհեստ: Երբ զայրանում է, իր հնարած գերանդիներով մարդկանց կյանքը հնձում ու վերացնում է աշխարհից: Մարդկանց հոգիներն ինքը չի տվել, չգիտենք՝ ի՞նչ իրավունքով է առնում:

Տեսա՞ր, արդարասե՛ր որդյակ իմ, թե որքա՛ն զորավոր է արդարությունը, որքա՛ն հզոր ձեռնկալու է աշխարհում այն ազգերին, որ նրան սիրում ու պահում են, նրանք օրսստօրե բարգավաճում ու բարձրանում են, իսկ այն ազգերը, որ արդարությունն արհամարհում են, ար-

դարության ուղիղ ճանապարհից խոտորվում են, պարտականությունների և իրավունքների կշիռը ոտնահարելով՝ խորտակում են, մարդկության չնորհն ու խղճի գիտակցությունը կորցնում են, աստվածապաշտության կրոնն ու հավատը ոչինչ են համարում, ահավասիկ, այդ ազգերի սերունդներն Աստծու արդարության օրհնությունը ժառանգել չեն կարող:

Եվ ի՞նչ կլինեն՝ այդ հայտնի է. թե՛ աշխարհակալ լինեն, թե՛ գահերն ամպերի վրա դնեն, ի վերջո, արդարության կայծակից զարկվելով՝ տապալվելու են գետնին, խոնարհվելու են մինչև խոր գերեզման: Ինչպես մեկ մարդու համար ծնունդ, ածում, մահ և գերեզման կա, այդպես էլ ազգերն իրենց գերեզմանն ունեն, և ահագին մի վիճ է, որի մեջ ծածկվում է նրանց հիշատակը: Ի՞նչ են նրանք թողնում. Եղիպատոսի բուրգեր, Բաբելոնի աշտարակներ և Հռոմի կրկեսներ: Մի ժամանակ դրանք կվերանան աշխարհից, կվերանան ինչպես Լիբանանի մայրիները, որ անցնելիս տեսավ Դավիթն ու ամբարիշտների կյանքին նմանեցրեց. «Տեսա ամբարշտին մեծացած ու բարձրացած, ինչպես Լիբանանի մայրիները: Ես մոտով անցա, և ահա նա չկար, փնտրեցի, և նրա տեղը չերևաց» (Սաղմ. Լ. 25: 35–36):

Այլևս հերիք է, որդյա՛կ իմ, թողնենք ազգերի մեղքն ու արդարությունը, շատ հարմար է, թե ասեմ մահը և կյանքը: Դու, անշուշտ, ինքնին հասկացար, որ այդ երկուսի սկզբնական սերմերը, ժողովրդի անհատներից սկսվելով և ցանվելով—ցանվելով, տարածվում են ազգի ողջ երկրով մեկ, իսկ դու, որ մի ազգի և ժողովրդի անհատ սերմիկն ու զավակն ես, մանկությունից սկսած՝ ճշմարտություն և արդարություն սիրի՛ր: Ո՛չ մտքիցդ, ո՛չ ձեռքիցդ երբեք մի թողնի այդ ճշմարտության սուրբ կշիռը, որ քեզ ուսուցանում է պարտականությունների և իրավունքների կատարյալ ճանաչումն ընկերային կյանքի մեջ: Թե անարատ պահես այդ կշիռը, դու աշխարհի վրա մուրացիկ չես լինի: Դավիթը երաշխավորում է. «Մանուկ էի ես և ծերացա, բայց արդարին արհամարհված չտեսա, կամ նրա զավակին՝ հաց մուրալիս» (Սաղմ. Լ. 25: 1. 25): Լավ է, որ հենց աղքատ ու արդար լինես, քան մեծատուն՝ սուտ ու անիրավ՝ ըստ Սողոմոնի առակի (Առակ. ԺԹ 22): Դարձյալ նա է ասում. «Անիրավությամբ դիզված հարստությունը պիտի պակասի, բայց աստվածապաշտությամբ ձեռք բերված ունեցվածքը պիտի բազմապատկվի» (Առակ. ԺԳ 11):

Կփառավորվես, որդյա՛կ իմ, եթե նախանձավոր ու հետևող լինես արդար նախնիների շավիղին, եթե Արիստիղեսի պես կյանքիդ մեջ ուրախությամբ վարվես, անիրավությունից խորչես և արդար անուն թողնես աշխարհում, այնժամ քո արդար գործերը կհավերժացնեն քո հիշատակը քո ժողովրդի մեջ: Ի՞նչ մեծ փառք է քեզ համար, գիտե՞ս, որ անունդ կենդանի մնա, միշտ կարդացվի ժողովրդի կենդանի սրտում, և չես լինի դու այնպես, ինչպես Դավիթն է ասում. «Նրանց հողերը կկոչվեն իրենց անունով» (Սաղմ. Խթ. 12):



ԴԱՍ ԺԲ

ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ

Որո՞նք են ժամանակի պատահարները, որ մեծամեծ աղետներ են բերում աշխարհին. տարերքնե՞րն են, հոդմե՞րն են, ծովե՞րն են, ցամա՞քն է, շա՞րժն է, սո՞վն է, տարաժամ մա՞զն է: Ո՞չ, ո՞չ, աշխարհի մեծ պատահարները մարդիկ են, և նույնիսկ մարդն է մարդուն պատահար, տարապարս է մարդկանց դատաստանը, որ պատահարները միայն տարերքներին է վերագրում, կամ ասում են, թե չար ժամանակը բերեց:

Հարցրո՛ւ, նորատի՛ որդյակ իմ Սամվել, և ես կասեմ քեզ, թե ի՞նչ է ժամանակը, ու որո՞նք են աշխարհում նրա պատահարները: Դու, որ նոր ժամանակի գարնան ծաղիկն ես, դու, որ նոր ես թևակոխել կյանքիդ առաջին շրջանը, դեռ ամառ ունես, որ քո պտղաբերության շրջանն է,

աշուն ունես, որում պիտի ժողովես պտղավետ
կյանքիդ արդյունքը, ձմեռ ունես, որում պիտի
հանգչես ու վայելես:

Մեծ ուշադրությամբ սովորի՛ր այս դասը,
սովորի՛ր, թե ինչպես է արագ-արագ շարժ-
վում ժամանակի անիվն ու շրջանն և իր հարա-
դարձ հոլովման մեջ վարում-տանում մարդկա-
յին կյանքը խանձարուրից մինչև գերեզման՝
առաջ բերելով աշխարհի այլեայլ պատահար-
ներ՝ մե՛րթ չարիքներ, մե՛րթ բարիքներ, և չարն
ու բարին, անիրավն ու արդարն առհասարակ
իր հզոր գավազանի տակ վարելով՝ հեզ մարդու
կյանքը աշխարհի գետերի նման տանում թա-
փում է հավիտենական ծովի անդունդը:

Ժամանակն աշխարհի գահերին, թագերին
տիրող մեծ աշխարհականն է, իր հավիտենական
գավազանով հավասարապես իշխում է գահի և
ստրուկ ծառայի վրա, բոլոր մարդկանց միահա-
մուռ վարում դեպի գերեզմանի վիճը:

Ժամանակը մարդկային բոլոր գործերի
մեծ դիվանապետն է, որ արձանագրում է մեր
կյանքի հաշիվը, մեծ դիվանագետների հաշի-
վը, աշխարհին տիրող թագավորների հաշիվը,
պատերազմի և արյան դաշտերի հաշիվը, հպա-
տակ ժողովրդի հաշիվը, բողոքող զրկածնե-
րի հաշիվը, հղփացած մեծատունների հաշիվը,

տվայտյալ Ղազարոսների հաշիվը, ամեն կար-
գի և վիճակի մարդկանց հաշիվը:

Ժամանակը երկնային արդարության և հա-
տուցման գործադիր ոստիկանն է, սուրհանդա-
կի պես շրջում է աշխարհում. գնում մտնում
է անտառ, անտառի տիրակալ առյուծին սպա-
նում, վերադառնում է թագավորի պալատ, նրա
շունչն ու հոգին քաղում, հասնում է Բաբելոնի
դաշտ, հպարտացող գոռողի դիցապատկեր ար-
ձանը կործանում: Ժամանակն իր ձեռքի տա-
պարով կտրեց այն աշխարհասվյուռ ծառը, որ
բարձրանալով իր ճյուղերը դեպի երկինք էր
արձակում. ընկավ, տարածվեց գետնին և իր
չափը ճանաչեց:

Ժամանակն, արծվից էլ սուրաչք ու արա-
դաթե, բարձրանում և շեշտակի դիտում է աշ-
խարհը, իջնում ու քաղաքները հողաբլուր է
դարձնում, Բաբելոնի, Նինվեի, Հին Արմավի-
րի, Արտաշատի ու պերճ Անիի փառքն ավե-
րակների տակ է թաղում, թողնելով երկրագնդի
երեսը՝ գնում Վեզուվ լեռան տակն է մտնում,
կրակ տալիս, հրանյութ բորբոքում և Պոմպեի
պերճությունը մոխրաթաղով ծածկում:

Բայց կանիրավենք, եթե ասենք, որ ժամանա-
կի ձեռքը միշտ քաղում ու չի շինում, կամ թե
աչառում է, մի աշխարհը շինում է, մյուսը՝ քան-

դում: Ժամանակը վաղուց է, որ թողել է արևելքը և գնացել արևմուտք: Երեք դար է, որ այնտեղ է դեգերում, արևմտյան հին աշխարհն իր ամեն շենքով տապալեց, նոր հիմք դրեց, նոր աշխարհ կանգնեցրեց, նոր մարդ վերածնեց, լույս, գիտություն և քաղաքակրթություն ծավալեց ընկերային աշխարհում: Անշուշտ, ժամանակը միշտ արևմուտքում չի մնալու, մի օր կդառնա արևելք և այն իր հնությունից կվերանորոգի:

Թողնենք այս վերացական մտածողությունները, որդյա՞կ իմ, և հեղգամտությամբ այնպես չկարծենք ու դատենք, թե երբ մարդիկ անգործ նստեն, ժամանակը նրանց համար ինքնին կործի:

Մենք թեպետ աշխարհի բոլոր պատահարները ժամանակի ազդեցությանն ենք վերագրում, բայց հետազոտել է պետք, թե պատահարներն ի՞նչ են, որտեղից է նրանց սկիզբն ու ծնունդը:

Ուղիղ դատելով՝ հարկ է խոստովանել, թե ժամանակի պատահարները մեր անցած գործերի հետևանքներն են. Եթե մենք չգործենք, ժամանակն իր պատահարները կդադարեցնի՝ բաց թողնելով բնական տարերքների պատահարները: Ժամանակը մինչեւ գերեզմանի դուռը վարում է իր պաշտոնը, իշխում է մարդու կյանքի վրա, այնուհետև կնքում իր հաշիվը, ինչպես կկնքեր մեռելների աշխարհի վրա:

Որքա՞ն զարմանալի է, երբ մարդիկ, առանց գործելու, ժամանակից գործ և հաջողություն են սպասում, որպես թե ժամանակն է աշխարհի տնտեսն ու մատակարարը և կամ մեր ագարակի վարձու մշակը: Նախախնամության օրենքով ժամանակն իր պարտականությունները լիովին կատարում է. ցանկալի գարուն է մեզ բերում, որ վարենք, ցանենք, ամառ է բերում, որ մեր ցանաձները բուսնեն, աշուն է բերում, որ մեր աշխատանքի ու վաստակի պտուղները ժողովելով՝ շտեմարաննենք, ձմեռ է բերում, որ երկրի հողը, վաստակաբեր մշակը, եզնամոլները հանգստանան, և մարդն իր վաստակը քաղցրությամբ վայելի: Անաշխատ և տրտնջացող մարդը, որ ո՛չ գարնանը ցանում է, ո՛չ ամռանը դարմանում է, ո՛չ աշնանը ժողովում է, ամեն բան ժամանակի հաջողությունից է սպասում և ցանկանում է ձմռանը հանգիստ նստի, ուտի ու վայելի:

Մարդիկ, ինչ վիճակի մեջ էլ որ լինեն՝ թե՝ հաջողության և թե՝ ձախողության, սովորել են միշտ անշնորհակալ լինել ժամանակից, ուստի ասում են, թե ժամանակը չար է, անհաջող է, միշտ արկածներ է բերում. մի օր ծաղրերես է երևում և մյուս օրը խոժոռում է, թե այսօր հաց է տալիս, վաղն անոթի է թողնում և այլն:

Գիտենք, որ ժամանակի մեջ բախտն ու մարդու հեղինակությանը անհաստատ են, գիտենք նաև, որ ժամանակը մեծամեծ արկածներ ունի, որ մեր ուժից խուսափում են, և մարդը չի կարող խույս տալ կամ փախչել. ամպերը որոտում են, հուր ու կայծակը՝ փայլատակում, խեղճ հովիվը, որ ապաստանել էր կաղնու ծառի տակ, զարկվում և այրված ու սևացած խանձող է դառնում: Ժամանակը նույն ամպերից սոսկալի կարկուտ և անձրև է տեղում, սար ու ձոր հեղեղվում են, գյուղ ու քաղաք ողողվում ու քանդվում են: Ժամանակն ամպերից իջնում, գետնի տակ է մտնում, ահագին երկրաշարժեր է հանում, կործանում մեր շքեղ կառուցած շենքերը, ո՞հ, մեր շինած տունը մեզ համար գերեզմանի գուր է դառնում: Ժամանակն՝ իբրև ժանտ հրեշտակ, մահտարաժամ է բերում, աշխարհից աշխարհ ման գալիս, չոր ու կանաչ առհասարակ վառում, և չփիտես, թե որտեղից է բերում այն անհուն, անհամար ջորյակն ու մորեխը, որ ցանած արտերի ու դաշտերի կանաչն են ուտում ու սպառում: Ժամանակը երբեմն էլ անձրևաբեր ամպերն է վանում ու ցրում, և երկինքը, պղնձանալով երաշտով, հարվածում է խեղճ երկրագործի ողջ աշխատանքին: Ժամանակը սաստկաշունչ հողմերով փչում ու ոչ

միայն ծովի ալիքներն է հուզում և ծովավաստակ աշխատավորներին ջրի անդունդի տակ անհող, անգերեզման, անհիշատակ թաղում, այլև նույնիսկ ցամաքում, ուր մարդիկ իրենց ապահով են կարծում, նույն հողմերով ծառեր ու շենքեր է տապալում և Աֆրիկայում շատ անգամ գյուղեր ու քարավաններ է անապատի ավազանների տակ թաղում:

Չենք ժխտում, որ ժամանակն այլ արկածներ ևս ունի, որոնց ենթարկված են աշխարհն ու հեգ մարդը, բայց ժամանակի բերած այդ պատահար արկածները շատ նվազ են և ոչ մի համեմատություն չունեն այն արկածների հետ, որ մարդ ինքն է իր ձեռքով բերում կամ անգիտությամբ, կամ գիտությամբ ու չարությամբ հանդերձ:

Ուշադրությամբ լսի՛ր, որդյա՛կ իմ, ես մարդկանց ու ժամանակի իրավունքների դատավճիռը պիտի վեր հանեմ, և դու, որ մանուկ իմաստուն ես, իբրև ծեր՝ եղի՛ր դատավոր ու վճիռ տո՛ւր:

Մարդիկ իրավունք ունե՞ն ասելու, թե ժամանակն իր այդ արկածներով ավերում է մեր աշխարհը, թշվառացնում մարդկային հասարակությունը, երբ ազգն՝ ազգի դեմ, մարդը՝ մարդու դեմ, ընկերն՝ ընկերոջ դեմ սուր հանելով՝ զինում են եղբորը հարազատ եղբոր դեմ իբրև

թշնամի, իսկ երբ աշխարհի գահակալների հոգին զայրանում է, դիվանագիտության ծածկված հրաբուխները՝ պայթում, ծովալիքների պես բանակները պատերազմի դաշտ են խուժում, վիթխարի հրանոթները՝ որոտում, բյուր-բյուր կտրիճ, կայտառ երիտասարդներ մի փոքրիկ ժամանակի մեջ դիտապաստ գետին են փոփում, ոտնաքարչ, անարդաքար լցվում են այն վիհերի մեջ, որ այդ դժբախտ զինվորներն իրենց ձեռքով էին փորել, մայրերը սգում են, որ կորցրեցին իրենց զավակներին, ամուսինները ողբում են, որ կորցրեցին լծակից սիրելիներին:

Ահավասիկ քեզ ամենամեծ պատահարը և պատուհասը մարդկային ազգի, որ բյուր անգամ բնական պատահարներից դժմդակ է: Եվ ո՞վ է այդ արհեստական ու կամածին պատահարներն առաջ բերողը. մա՛րդն է, մա՛րդը, նրա մեծամիտ հոգին, նրա բարձրացրած ձեռքը, որ ծանրանում է մարդու վրա և անխնա ջախջախում Աստծու ճարտարապետած պատվական անոթները, որ նա՝ իրեւ բրուտ, մեկ-մեկ շինում ու հոգեղեն կրակով թրծելով՝ դեպի լույս է հանում:

Բայց մի՞թե սրա համար ցավ են զգում աշխարհի անսիրտ, սառնահոգի դիվանագետները. պատահելիս կատակով իրար ասում են. «Թող

մայրերը կրկին ծնեն»: Ո՛հ, մի՞թե դրանք չգիտեն վշտակիր մայրերի երկունքը, չգիտե՞ն, թե մի մանուկը որքան դժվարություններով է մեծանում, մարդ դառնում: Զգիտեն, այո՛, նրանց մեծ գիտությունը միայն շահն ու փառքն է, նրանց համար երբեք փույթ չէ, թե կկոտորվեն ծողովրդի որդիները:

Հասկացա՞ր, խոհակա՞ն որդյակ իմ, թե մարդու կյանքի մեծ պատահարն ու պատիժը դարձյալ նույն մարդն է: Տարեքների պատահական արկածները համեմատելի չեն այն արկածների հետ, որ խորամանկ մարդու ձեռքն արհեստավորում է:

Սակայն ինձ այն է շատ զարմանալի թվում, որ մարդիկ, ժողովուրդներն այնքան են սովորել մարդու ձեռքից պատահարներ կրել, որ ոչխարի նման թե սպանդանոց էլ վարեն, ոչինչ չեն զգա, կասեն, թե մեր բախտը, մեր ճակատագիրն այս է, մանավանդ արևելյան ժողովուրդները, և սրա բարոյական և ներքին պատճառն ուրիշ բան չէ, քան տգիտության անլույս խավարի մեջ կաշկանդված մարդկանց ստրկացված, ընկճված, խեղդված ոգին:

Այժմ դառնանք, խոսենք այնպիսի ժողովուրդների կարծիքի մասին, որոնք միշտ՝ ամեն ժամ, տրտնջում են, թե ժամանակի պատահար-

ները չար են, ժամանակը մեզ համար զլացող է, մենք մանուկ ժողովուրդ ենք, մեր ձեռքից բռնած՝ առաջ չի տանում, թողել է մեզ կիսաճամփի վրա անշարժ ու հետադեմ, այնինչ արևմտյան բոլոր ազգերին տարավ, հասցրեց առաջադիմության օթևան:

Բայց մի՞թե այդ աչառող կարծված ժամանակն արևելյան աշխարհի և նրա ժողովրդի համար բարի պատահարներ չբերեց: Այո՛, քսան տարի առաջ նա մի մեծ պատահար արեց, այնուհետև քնեց, ասաց ու կարծեց, թե՛ ես այլևս պատահար չունեմ, դարձյալ ապրելու եմ այնպես, ինչպես ապրում էի առաջ՝ հին օրենքով, հին դրությամբ և հին ճանապարհով, որի ելքը դարձյալ հին պատահարը բերեց մեր աշխարհ. հանկարծ քնած տեղից արթնացանք, և, ահա, պատահարը մեր դուռն էր հասել:

Դու ասա՛, որդյա՛կ իմ, այլևս մեղադրելու իրավունք ունի՞ այնպիսի աշխարհը և ժողովուրդը, որ սուր աչք ունի՝ հեռուն տեսնել չգիտի, սուր միտք ունի՝ սովորել չի կամենում, հանճար ունի՝ ուղեղի մեջ թմրած է, դուրս հանել չգիտի, ձեռք ունի՝ արհեստագործել չգիտի, առույգ ոտք և սրունքներ ունի՝ քայլել չգիտի, լեզու և ազատ կամք ունի՝ խորհել և խոսել չգիտի, ճնշվում է՝ ճիչ բարձրացնելու հնար

չգիտի, բնակավայր ունի՝ մոռանում է, հիշել ու շինել չգիտի, ընդարձակ հող ունի՝ մշակել, աճեցնել չգիտի, աղքատ է՝ մինչդեռ զեխ կյանք է սիրում, խնայողությամբ տնտեսել չգիտի, թե պատեհությունը հաջողվի՛ ժամանակը ճանաչել չգիտի, թե մի քայլ անի, կպարծենա, կաղաղակի. լուռ ու խոհեմ առաջադիմել չգիտի, թե ասեն ճամփի վրա առյուծ կա, վախից կդողա. առյուծի ձեռքից անցնել, ազատվել չգիտի, ինքնավար օրենք և սահմանադրություն ունի, վարել ու հնազանդվել չգիտի, մտքով դեռ մանուկ լինելով՝ քվե և ընտրություն չգիտի, միշտ իր զեկավարներին փոփոխել կուզի, անփոփոխ պահել չգիտի, ներկայի մեջ միշտ զեղծելով՝ պազայի հետևանքները չգիտի:

Լսեցիր ու դատեցի՛ր, որդյա՛կ իմ: Երբ մի երկիր, ազգ ու ժողովուրդ թափառում է այսքան և այսպիսի անգիտության և խակության մեջ, նա այլևս իրավունք ունի՞ մեղադրության հանցանքը ժամանակին վերագրելու, իսկ ինքը չքմեղանալով ասելու, թե ժամանակը չար է, թե երկրի պատահարներն են կապում մեր ձեռքն ու ոտքը:

Գիտենք այդ, այո՛, կան երկրի պատահարներ՝ ծանր ու դժվարին, որոնք կաշկանդում են մարդու առաջադիմության քայլերը, իսկ ժամանակի պատահարներն էլ մի՞թե վերանում կամ պակա-

սում են աշխարհից: Բայց մարդու մեծ պատահարը մարդն է, պետք է մրցել այդ պատահարի հետ գիտությամբ և կրթությամբ. դա է միակ միջոցը, որ հաղթում է պատահարներին:

Թողնենք այժմ երկրի և ժողովրդի ընդհանուր պատահարները, խորհրդածենք առանձին ընտանիքների, գերդաստանների և անհատ անձերի համար, որ զորհաճապաղ դառնորեն տրտնջում են, թե՝ ժամանակի չարությունից մեր տունը, մեր գերդաստանը կործանվեց, ճոխ ու ազնվական ընտանիքը չքափոր դարձավ, և այլն:

Բայց ուղիղ դատելով՝ տեսանք դրանց և ժամանակի պատահարների դատաստանը, տեսանք նաև, թե այդ կործանիչ ձեռքը առավել իրե՞նցն էր, թե չարապատեհ ժամանակինը:

Այն ճոխ ու ազնվական ընտանիքները, որ ուղիղ տնտեսության օրենքից ու չափավորությունից խոտորվելով՝ գեղձվեցին, շուայլվեցին ամենազեխ կյանքի մեջ, զրկվեցին թե՛ հին և թե՛ նոր հարստությունից. այս բնական վախճանը չար ժամանակը բերեց, թե՞ չափազանցության հետևանքն էր հարստություն տնտեսել չգիտենալը:

Դու տեսնում և ճանաչում ես մեծատունների այդ ժառանգորդ զավակներին. դրանք երանի են տալիս իրենց հոր ու պապի ժամանակին՝ ասելով, թե նրանց ժամանակը շատ բարի ու

հաջող էր, իսկ մերը՝ չար ու դժվարին: Այսպես արդարանալ են ուզում նրանք, որոնք իրենց կյանքը ծուլության և անգործության մեջ վարեցին, ոչ միայն անսպառ գանձեր վատնեցին, այլև այդ նյութական ճոխության հետ հայրենի տան բարոյական համբավը, փառքն ու հիշատակը կորցրին: Արդ՝ ո՞ւմն է մեղադրանքը, ո՞ւմն է հանցանքը. չար ժամանակի՞նը, թե՞ չարավար ժառանգորդներինը:

Գուցե նրանք սրտմտեն ու չընդունեն այս դատաստանը, ասեն, թե չար ժամանակը զեխության չարօրինակ, նորասիրության պերճանքները հեղեղի նման արևմուտքից քշեց-բերեց մեր աշխարհը, մենք էլ, կամա-ակամա, ողողվեցինք, ժամանակը մեզ նույնիսկ ստիպեց, որ հետեւնք քաղաքակիրթ աշխարհին:

Կդրվատեի ես հայկական ընտանիքը, եթե ստույգ և իրապես փափագեի քաղաքակիրթ աշխարհի օրինակին հետևել: Երանի՛ թե այդպես լիներ, բայց իրերի ճշմարտությունը վկայում է, որ դրանք, թողնելով Եվրոպայի մեծամեծ բարեմասնությունների օրինակները, միայն նորասիրության պերճանքները գրկեցին, թողեցին ներքին կրթական մասը և միայն արտաքին կեղևն առան, թողեցին, ինչ որ հատուկ էր մեր ազգային բնիկ հատկությանը, և ինչ որ մեր

առաջադիմությանը ձեռնտու օրինակ էր, այսինքն՝ բուն քաղաքակրթության ճշմարիտ տարերքը. դրանք են՝ գիտությունը, կրթությունը և լուսավորությունը:

Է՛չ, լսաւե՛ր որդյակ իմ, ես ձանձրացա՝ այս տնտեսական խնդրի մասին քարոզելով, խոսելով, գրելով և կրկնելով. այս մի քանի օրինակները քեզ բավական են, մնացածը դու ինքդ իմաստասիրի՛ր: Իմացի՛ր, որ աշխարհում ամեն չարաչար կյանք իր չար հետեւանքն ունի, որին մարդիկ չար ժամանակ են կոչում:

Բայց մենք հավատում ենք, թե ժամանակը երկնային արդարության ձեռքի մի չափն է. Քրիստոս վկայեց այդ չափի համար. «Եվ ինչ չափով, որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ համար» (Մատթ. Է 2, Ղուկ. Զ 38): Հավատում ենք նաև, որ այդ չափի գործադրիչ ոստիկանը ժամանակն է, որ իր չար կարծված պատահարներով հատուցում է յուրաքանչյուրին՝ գործերին համեմատ չափով:

Այլևս ավարտենք այս դասը, որդյա՛կ իմ, և դու ուղղի՛ր քո դատավճիռը ժամանակի պատահարի մասին՝ գիտենալով, որ ժամանակն ինքնին պատահար չունի, այլ ամեն պատահար մեր նախորդ գործերի հետեւանքն է, իսկ հետեւանքները Աստծու հավիտենական օրենքի

հատուցումն են: Ինչ որ այսօր կրում ենք, անցյալի հետեւանքն է, իսկ ինչ այսօր գործում ենք, նրա հետեւանքը ապագան է կրում:

Ուրեմն՝ երկյուղա՛ծ որդյակ իմ, վախեցի՛ր գործերիցդ ավելի, քան ժամանակի պատահարներից, ներկա կյանքի մեջ միշտ ջանա՛ուղիդ գործել՝ հավատալով, որ ուղիդ գործի հետեւանքն ու վախճանն ուղիդ կլինի: Ուղիդ ճանապարհը դեպի ուղիդ նպատակ է տանում: Սովորի՛ր Քրիստոսի առակից, որ անառակության հետեւանքը սովամահությունն է (Ղուկ. ԺԵ 17), սովորի՛ր աշխարհի օրենքներից, որ գողության հետեւանքը կախաղանն է: Սովորի՛ր կյանքի փորձերից, որ ուրիշներին զրկելու հետեւանքը չարաչար հատուցումն է:

Շատ մի ծիծաղիր. հետեւանքը լացն է, եթե սգաս ու համբերել գիտենաս, հետեւանքը միսիթարությունն է: Ցուրաքանչյուր օրինազանցության հետեւանքը միշտ պատիժ, անարդանք և կորուստ է, ինչպես որ առաքինության հետեւանքը վարձատրությունն ու փառքն է: Եթե աշխարհն արդարապես չվարվի՝ ո՛չ օրինազանցին պատիժ տա, ո՛չ արդարին վարձ, թո՛ղ այնժամ քո դատաստանը երկնային արդարությանը, դու առաքինացի՛ր, զորացի՛ր ողջ կյանքում և հավատա՛, որ եթե ժամանակի պատահարների հեղեղները հառնեն ու

բախվեն քեզ, դու անսասան, անկործան կմնաս,
երբ Ավետարանի այն իմաստուն մարդու պես հա-
վատիդ շենքը խողադիր վեմի վրա հաստատես:

Թե ժամանակի պատահարները քեզ տարու-
բերեն, դու անշարժ կա՛ց, թերահավատելով մի՛
սասանվիր, պատահարները կգան ու կանցնեն,
քանի որ այս աշխարհը պատահարի աշխարհ է,
հետ մարդը ճնշված է պատահարների տակ ու չի
կարող խույս տալ, դրա համար էլ մեր անպաշտ-
պան խեղճությունը կարեկցելով՝ Քրիստոս սովո-
րեցրեց, որ աղոթենք Հոռը. «Մի՛ տար մեզ փոր-
ձության, այլ փրկի՛ր մեզ չարից» (Սատթ. Զ 13,
Ղուկ. ԺԱ 4):

Աղոթի՛ր, որդյա՛կ իմ, Աստծուն ապավինի՛ր,
և պատահարները կհեռանան քեզանից: Ուղիղ
մտածի՛ր, ուղիղ գործի՛ր, ուղիղ ընթացի՛ր, և պա-
տահարներ քեզ չեն պատահի: Մանավանդ աղո-
թի՛ր, որ մարդկանց պատահարին չհանդիպես:
Դավիթն առավել ընտրեց Աստծու պատահարը,
քան մարդկանց, որ խստասիրտ են, ողորմել չգի-
տեն: Արա համար էլ լավագույնն այն է, որ քեզ
միշտ Աստծու ձեռքը հանձնես և Դավիթի պես
սրտեռանդ աղոթես. «Ապավե՛ն իմ Աստված, որի
վրա եմ դրել իմ հույսը» (Սաղմ. Ղ 2):

ԴԱՍ ԺԳ

ԱՎԵՏԱՐԱՆ ԵՎ ԲՆԿԵՐԱԾԽՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչն է դարմանն այս մեր հիվանդ ու
թշվառ աշխարհի. Ավետարանը, ընկերա-
սիրությունը և միաբան զորությունը:
Արա համար Բանն բժիշկն ինքնին եկալ
աշխարհ՝ մեր վերքերը բուժելու և մարդ-
կության հնացած կյանքը վերանորոգե-
լու: Ում անունը ճշմարտություն և կյանք
էր, այսպես ավետարանեց. «Ես եկա, որ
կյանք ունենաք և առավել ևս ունենաք»
(Հովհ. Ժ 10):

Ավետարանին որդեգիր հավատացյալ որդ-
յա՛կ իմ Սամվել, Ավետարանը և Ավետարանի
քարոզած ընկերասիրության դասը պիտի քեզ
պատմեմ: Ականջդ բա՛ց արա, սիրտդ ինձ տո՛ւր
և լսի՛ր խոնարհ երկյուղածությամբ Քրիստոսի
դասը, որ քեզ լույս կտա, հույս կտա, կյանք և
անմահություն կտա:

Հիսուս, որ աշխարհում ուսում չէր ստացել,
Պաղեստինում բացեց Ավետարանի համալսա-
րան և սկսեց քարոզել:

Ես այժմ թողնում եմ Ավետարանի քարոզած
ընդհանուր դասերը և միայն ընկերասիրության
դասը քեզ պիտի ավանդեմ, և բավական է, որ
այն սրտի մտոք պահես, քանի որ սերը և ընկե-
րասիրությունը աստվածային պատվիրանների
գլուխն ու օրենքների հիմքն են:

Մովսեսը, որ հսրայելի ընկերության օրենս-
դիրն էր, Աստվածասիրությունից հետո տվեց
ընկերասիրության պատվերը: Բայց Մովսեսն
այս գերագույն պատվիրանը քարե տախտա-
կի վրա գրեց միայն, այն անձնազոհ արյունով
մկրտելով՝ չնվիրագործեց:

Իսկ Հիսուս, սիրո մեծությունն իր անձի վրա
չափելով, ասաց. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի,
քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարե-
կամի համար» (Հովհ. ԺԵ 13): Ասաց և հետո
իր բարեկամ մարդու համար խաչվեց և ընկե-
րասիրության օրենքն իր արյունով, իր մահով
և իր մեծ ու անկշիռ սիրով մկրտեց և իր այդ
գերագույն օրինակով սերը տվեց աշխարհին,
որպես միակ դեղ ու դարման, փրկություն,
ազատություն հիվանդ ու թշվառ մարդկային
ընկերության:

Այս դեղն ու դարմանը մեկ բառից է կազմ-
ված՝ Սիրեջեք: Իր զորությունն անչափ է, իր
շնորհն անկշիռ է, իր բժշկությունն ամենաը-
վեստ է, իր ձեռքն ամենահաս է, և իր սուրն է
միայն, որ սպանում է մարդկանց հոգու մահա-
ռիթ կրքերը:

Երկնային սերը, որ մարդու կերպարանքով
երևաց աշխարհին և մեր փրկության ճարտա-
րապետն է, խորապես դրեց սիրո այս հիմքը ոչ
թե հողի վրա, այլ մարդկանց սրտի ու հոգու
մեջ, որպեսզի այդ հիմքի վրա նորոգի մարդ-
կության հնացած շենքը:

Սիրո այս մեծագույն օրենքն է միայն, որ
կարող է աշխարհում հաստատուն պահել մեր
ընկերային շենքը, ապա թե ոչ՝ հիմնահատակ
կքայլքայվի:

Խոստովանել և վկայել է պետք, որդյունք իմ,
որ գիտությունը և քաղաքակրթությունն արդի
մարդկային ընկերության վիճակն առավել արտա-
քուստ բարվոքեցին, դու այնքան էլ մի՛ հետևիր
այն սնապարծ մարդկանց մեծախոսությանը, որ
այդ շնորհն ու պարծանքը միայն գիտությանն ու
քաղաքակրթությանն են տալիս և ոչինչ են հա-
մարում Ավետարանի արդյունքը:

Դու ճշմարտությամբ հավատա՛, որ աշխար-
հի արդի ընկերային առաջադիմության հի-

մունքներն իր Ավետարանով ու ձեռքով դրեց Հիսուս: Եվ որո՞նք են այդ բարոյական հիմունքները. ահավասիկ՝ սեր, հավասարություն, եղբայրություն, միություն և ընդհանուր, անխտիր մարդասիրություն, որով բովանդակ երկրի անհամար ազգերը, մի համաշխարհային եկեղեցու գավիթում ժողովվելով, մի հոտ են կազմում, մի Հոր որդիներ են կոչվում, և միայն ինքն է այդ հոտի հովիվը և առաջնորդը:

Եվ ո՞րն է Հիսուսի աշխարհ բերած առավելագույն և ճշմարիտ կյանքը, եթե ոչ Ավետարանի քարոզած ընկերական սերը և հավատացյալների համատարած խաղաղությունը, որը միայն Հիսուս տվեց, և աշխարհը չէր կարող տալ այն: Ուստի իբրև վերջին կտակ՝ Վերջին ընթրիքի երեկոյան ասաց. « Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս» (Հովհ. ԺԴ 27):

Կարդա՛ հնախոս պատմությունները և կտեսնես, որ մեծամեծ աշխարհակալներ եկան այս աշխարհ ու անցան, գնացին, աշխարհը խռովության մեջ թողին, իրենք գերեզմանում խաղաղություն գտան: Նրանք իրենց զորությամբ ու սրով բնավ չկարողացան խաղաղություն տալ երկրին, երկրի երեսը լվացին արյունով և

սոսկալի բռնության տակ ջախջախեցին մարդու ազատ կյանքը:

Եկան վերջին դարերը, մանավանդ տասնիններորդ դարը, որը քաղաքակրթության դար են կոչում, և որում ես ու դու ծնվեցինք ու ապրում ենք. ասում են, թե մարդուն առաջադիմության քիչ քայլեր են մնացել, մինչև որ կատարին հասնի: Քաղաքական և համաշխարհային կառավարման համար դիվանագետներ ժողովվեցին, մեծամեծ, ստվար-ստվար օրենքներ կազմեցին և երկիրը մշտնջենական խաղաղության մեջ պահելու համար դաշնակցություններ կռեցին: Եվ ո՞րն էր նրանց բոլորի նպատակը, մարդկային հասարակական կյանքը հավասար բարվոքե՞լը, թե՞ իր պետության և երկրի շահերը առավել հոգալը: Դա իրավունք է, գիտենք, բայց առանց ընկերոջ և ազգերի իրավունքը խելու:

Այժմյան աշխարհին տիրող մեծ աշխարհակալը շահն է, գրա համար էլ մարդը չի հավատում, թե քաղաքակրթությունն ընդունում է Հիսուսի տված խաղաղությունը կամ Ավետարանի քարոզած ընկերասիրության դաշնակցությունը:

Ո՛հ, որքա՛ն հեռու են իրարից դիվանագիտությունը և Ավետարանը, Խաչը և Կրուպի թնդանոթը, եկեղեցու միաժողով գավիթը և

պատերազմի արյան դաշտը. ի՞նչ համեմատություն մահվան ու կյանքի միջև։ Քաղաքակրթությունը դեռ մահ է բերում, մարդկանց սպանելու համար դեռ գործիքներ է հնարում, քուն ու հանգիստ չունեն աշխարհի տիրակալներն ու դիվանագետները, վիշապի նման տուտին կանգնած՝ ֆշում, սպառնում են և ի՞նչ են խնդրում. պատերազմ, անշուշտ, իրար կլանելու համար։

Այսպես, մինչդեռ Հիսուս իր Ավետարանի ազատ սիրով խաղաղություն է տալիս երկրին, մեր կարծեցյալ քաղաքակրթությունը դեռ սրով, արյունով և հին աշխարհի խելքով է խաղաղությունը հաստատել ուզում։

Դու տե՛ս և համեմատի՛ր այս երկու եղանակները. այլևս կհավատա՞ս, թե սոսկ քաղաքակրթությունն, առանց Ավետարանի աջակից զորության, մարդու խոռված ընկերային վիճակը խաղաղության մեջ կպահի, կզունանան, կհանդարտվեն այն զայրացած հոգիները, որ հուր, սուր, կռիվ, վրեժինդրություն են գոչում։

Ավա՛ղ մարդկային թշվառաբախտ հասարակությանը, ո՞վ գիտի, դեռ քանի՞ դարեր աշխարհն իր ազգերով, ժողովրդով պիտի հեծեն աղիողորմ, երկրի մեծամեծ պետական ծովերը պիտի խոռվածն, այդ ալիքները կոհակներ պիտի

հանեն, այդ ինքնավառ հրաբուխներն, ինչպես գրեցի, միշտ պիտի բորբոքվեն, շարժեն երկրագունդը, աշխարհը սասանեն, ջրով ու մոխրով ծածկեն ժողովրդի կյանքը։

Ոգիղ լքում է, որդյա՛կ իմ, և հուսահատվում ես, թե աշխարհի վիճակն ու վախճանն ո՞ւր կհասնի, եթե աշխարհավար դիվանագետները տակավին այսպես շարունակեն։

Ես ասեմ քեզ, որդյա՛կ իմ. մեր աշխարհի կարգն ի սկզբանե՝ այն ժամանակվանից, այս է և այսպես պիտի գնա տակավին։ Դու գիտես, մարդը դեռ անհալ և անկատար մի հանք է աշխարհի պատահարների քուրայի մեջ, այսինքն՝ կրակի և իր արյան մեջ նա դեռ պիտի հալվի ու մաքրվի, մինչեւ որոշվեն ընտրյալները, մինչեւ դա ճշմարիտ քաղաքակրթության ոսկեդարը, որում աշխարհի ղեկավարներն անկեղծ սրտով և անխար մտքով ընդունեն Ավետարանի ընկերության և խաղաղարար ոգին, մեռնեն ու գնան աշխարհիս երեսից խոռվարար և անարդար տիրապետող ոգիները։ Այդ օրը միայն կհավատանք, որդյա՛կ իմ, որ Դավթի գուշակությունը տիրապետ կլրանա. «Ամբողջ երկրում և լեռների գագաթներին խաղաղություն կտիրի։ Լեռները խաղաղություն կբերեն ժողովրդին, և բլուրներն արդարություն» (տե՛ս Սաղմ. ՀԱ, 3, 71):

Դառնանք, այժմ խոսենք ընկերասիրության այն պարտականությունների մասին, որոնց առհասարակ, պարտական են Ավետարանին հավատացող որդիները:

Ուզո՞ւմ ես ճիշտն իմանալ, որդյա՞կ իմ, թե ի՞նչ է ընկերասիրության պարտքը, որքա՞ն և մինչև ո՞ւր, և ո՞վ է մեր ընկերը. միայն մեր ընտանի՞րը, մեր ազգականնե՞րը, մեր բարեկամնե՞րը, մեր դրացինե՞րը, մեր ազգակիցնե՞րը կամ հայրենակիցնե՞րը և կամ այն մարդի՞կ, որ մենք չենք ճանաչում։ Ո՛չ, Ավետարանի ընկերասիրության պարտքն ընդհանուր մարդասիրությունն է, երբեք այդ շեշտված բառերը չի ընդունում։ «Եթե դուք ձեզ սիրողներին սիրեք կամ ձեր բարեկամներին բարություն անեք, ո՞րն է ձեր շնորհը»,— ասաց Քրիստոս (տե՛ս Մատթ. Ե 46–47, Ղուկ. Զ 32–33):

Ուստի ընկերասիրության մեծ պարտքը՝ պետք է տարածվի ողջ մարդկության վրա՝ երբեք խտրականություն չդնելով ո՛չ ազգի, ո՛չ կրոնի, ո՛չ մեծի, ո՛չ փոքրի, ո՛չ ծանոթի, ո՛չ անծանոթի միջև, պետք է ընկեր համարվի ամեն մարդ, որ նմանակից պատկեր է կրում։

Իբրև ապացույց՝ մի առակ բերեմ քեզ Ավետարանից, որով Քրիստոսն իր բոլոր հավատացյալներին ծայրագույն ընկերասիրության

օրինակ է ցույց տալիս. երբ կեղծ օրինավոր մի դպիր փորձելով հարցնում է Հիսուսին. «Վարդապե՞տ, ի՞նչ պետք է անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ» (Ղուկ. Ժ 25): Հիսուս պատասխանում է. «Օրենքում ի՞նչ է գրված, ինչպե՞ս ես ընթերցում» (Ղուկ. Ժ 26): Դպիրը պատասխանում է. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով...» (Ղուկ. Ժ 27): Հիսուս գարձյալ պատասխանում է. «Ճիշտ պատասխանեցիր, այդ արա՞և և կփրկվես» (Ղուկ. Ժ 28): Պարծեցող դպիրն սկսեց կրկին անգամ հարցնել. «Եվ ո՞վ է իմ ընկերը» (Ղուկ. Ժ 29), իբրև թե չգիտեր։ Հիսուս այնժամ սքանչելի առակով ճշմարիտ ընկերասիրության մի պատասխան տվեց. «Մի մարդ երուսաղեմից երիքով էր իջնում և ընկավ ավագակների ձեռքը...» (Ղուկ. Ժ 30):

Դու շատ անգամ լսել ու կարդացել ես այս խորհրդավոր առակը, որով Հիսուս ընդհանուր և անխտիր մարդասիրություն է ուսուցանում և աշխարհի համայն մարդկային ազգերին միապես ու հավասար ընկեր է անվանում։ Հիսուս Մովսեսի նման միայն եբրայական ազգի մարդ չէր, որ խտրականություն դներ եբրայեցու և եղիպտացու միջև, այլ համայն աշխարհի, համայն ժողովուրդների մարդն էր։ Նա չգիտեր

երբեք հրեայի ու սամարացու միջև տարբերություն դնել: Այնպես է թվում, թե այդ հարցաբան օրինասեր դպիրը հրեա էր, որ սամարացուն մահու չափ ատում էր: Քահանան և ղետացին ևս հրեա էին, որոնք ճամփին ընկած օտար, արնաշաղախ վիրավորին տեսան և առանց կարեկցելու՝ անցան գնացին: Զգիտենք, թե ավազակներից հարվածված անձն ի՞նչ ազգից էր. Հիսուս նրա ազգի անունը պահում և հիշում է միայն անկյալ թշվառին կարեկցող մարդուն, որ բնիկ սամարացի էր և իսկույն գթացել էր խեղճին ու պատել, դարձանել նրա վերքը:

Ո՞վ գիտի, գուցե անկյալ վիրավորը ևս կա՛մ սամարացի էր, կա՛մ անծանոթ մի անձ, դրա համար այդ երկու անցնող հրեա ուղերները մոլեկրոնությամբ իրենց սիրտը խստացրին և չուզեցին անկյալի աղետը տեսնել:

Երանի քեզ, որդյա՛կ իմ, եթե ազնվասիրտ լինես և այս առակի օրինակից Քրիստոսի քարոզած ընդհանուր ընկերասիրության և մարդասիրության օրենքը սրտիդ մեջ խորը դրոշմես, գթասիրտ, գորովասիրտ լինես, այս աշխարհի հրապարակներում ընկած վիրավորներ շատ կան, միայն ամայի լեռներում չեն, ուր ավազակների որջերն են, այլ նույն բազմամարդ քաղաքների և շեների մեջ. և զորավոր-

ների հարստահարող ձեռքը չի զարկել, գցել գետնին: Երբ քեզ այդպիսի զրկյալներ պատահեն, անկարեկից աչքով չնայես և չանցնես՝ առանց կատարելու ընկերասիրության պարտականությունդ, որքան որ կարող ես:

Հիշի՛ր, որդյա՛կ իմ, Հիսուսի վերջին պատասխանը, որ տվեց օրինասեր դպիրին. «Արա՛ այդ և կապրես» (Ղուկ. Ժ 28): Գնա՛, կատարի՛ր ընկերասիրության պարտականություններդ և այնժամ դու կապրես:

Բայց, ավա՛ղ, չգիտեմ, թե մարդիկ ե՞րբ պիտի ճանաչեն այդ մեծ բարոյականության զորությունը, այդ երկնային զորավիդ ձեռքը, որ Հիսուս տվեց իր հավատացյալ ժողովրդին և նրան այդ զենքով զինվորեց, որպեսզի նա կովի աշխարհի դեմ:

Եթե ողջ կյանքդ և քո անձը թե՛ Ավետարանի և թե՛ նրա քարոզած ընկերասիրության համար նվիրես, արժի: Սիրո մեծ օրինակը մեր առջեկից անցավ, գնաց Գողգոթայի գլուխ: Սերն, իսեր մարդկային ընկերության, նվիրեց իր անձը, և ինչ խոսքով քարոզում էր, այն գործով կատարեց աշխարհի առաջ: Տեսե՛ք ու չափեցե՛ք, մարդի՛կ. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամի համար» (Ղովհ. Ժ 6 13),— ասաց և մեռավ:

ՎԵՐՋԱԲԱՆ

ՍԻՐԱՔԸ ՄԱՄՎԵԼԻՆ

Յանկալի որդյա՛կդ իմ Սամվել, Կյանքիդ
առաջին շրջանի դասերն ավարտեցի. թո՛ւյլ
տուր ինձ, որ մի փոքր հանգստանամ, միտքս
ու հոգիս կազդուրվի, ես եթե ողջ մնամ, և
Աստված քեզ ողջ պահի, մի բարեղեպ ժամա-
նակ դարձյալ կսկսեմ պատմել երկրորդ շրջա-
նի դասերդ: Քանի դեռ գրելը սիրում եմ, ոգիս
հոժար է, և դու սիրում ես լսել ու կարդալ,
ոգիդ փութեռանդ է, գիտես ու ճանաչում ես
քո առաջադիմության ժամանակը:

Հայրական ու կրթական դասերս խնամ-
քով պահի՛ր մտքումդ, միշտ հիշի՛ր, թե ես որ-
քա՛ն խնամքով և սիրով պատմեցի քեզ, ես քո
սերմնացան մշակն եմ, որդյա՛կ, այս իմ սկ-սկ
գրերն, իբրև մի-մի ցորենահատիկ, սրտիդ պա-
րարտ հողում ցանեցի այժմ. երկինքն իր արեով

և անձրևով բուսեցնի, և Աստված աճեցնի, ինչ-պես Պողոսն է խոստովանում (Հմմտ. Ա. Կորնթ. Գ. 6-7): Դու պտղաբեր լինես այնքան, մինչև միւնույն տեղում հարյուրը բուսնի, և ես ու քո հայրենի կարոտ որդիներն ուրախ-ուրախ վայելենք քո առատ ու շահեկան արդյունքը:

Քրիստոսն իր աջով օրհնի քեզ, ինչպես օրհնեց իր մշակ աշակերտներին, և դու գնալով պտղաբեր լինես, և քո բարի պտուղն ու հիշատակը մնա աշխարհում:

Ես՝ քո հայր Սիրաքը, ամենայն խնամքով ավանդեցի քեզ այս դասերը, և դու երկյուղած հնագանդությամբ լսեցիր, բայց իմաց'իր, որ միայն լսելով արդար չեն դառնում, այլ՝ առնելով և ուսուցանելով: Եվ դու այժմվանից ու խտ դիր, որ իմ դասերը որդիներիդ ավանդես, և այսպես որդուց որդի, թոռուից թոռ շարունակվելով անմոռաց կմնան Սիրաք հորդ խրատներն ու դասերը, որով իսկապես կատարած կինես Առակների խոսքը. «Որդյա՛կ, մի՛ մոռացիր իմ խրատները և իմ խոսքերը պահի՛ր քո սրտում, որպեսզի երկարեն քո կյանքի օրերը» (Առակ. Գ. 1-2):

Վարի՛ր, որդյա՛կդ իմ Սամվել,
Ուղիղ վարի՛ր մաճն ու ակոսը,
Արձակ դաշտեր են մեր արտերը՝

Պարարտ բերուն և բարեբեր.
Եվ ես ցանեմ ցորենի հատեր.
Քաղենք հույսով բազմապատիկ,
Օրհնյալ է հողն ու մեր սերմերը,
Օրհնեալ՝ մշակները, եղնամոլները,
Օրհնեալ է անդն ու անդաստանը,
Օրհնյալ՝ Աստված,
Որ տա անձրև և արև,
Օրհնյալ՝ վաստակն երկրագործի,
Արդար՝ ազատ դժրանքներից:



ԲԱՌԱՑԱՆԿ

ազոխ – խակ, չհասած և թռու խաղող, ժուռ
աղբդին կամ աղբաղբին – շատ աղ պարունա-
կող, աղահամ տվող
աճեցուն – աճող, աճուն
ամենարվեստ – ամեն տեսակ արվեստ ունեցող,
ճարպար, քաջարվեստ, հնարագետ
անկրկիպ – չհետազողված, անքննելի
անձնութ – ճեկա, զավակ, սերունդ ջսնեցող, անորդի
աննկուն – չընկածվող, անընկածի, հասպատուն
այծենի – այծի մազ
ապսպել – հանձնարարել, պատվիրել
ապիրափել – ապիրատ դառնալ, չարանալ, անհ-
րավություն գործել
առապար – քարքարութ, խորդուրոդ, անհարթ,
անկոխ տեսն
ավագ աչք – հոգու՝ մորի աչք, իմացականություն,
միկրո
արամներն առնել – թռու քան ուրելուց արամնե-
ռը բռնվել՝ հարուել

արբուն – տարիքի հասունություն, առույգ հասակ,
չափահասություն
արբունքահասակ – չափահաս
արմագիք – տարրեր տեսակի ունդեր՝ հունդեր, ըն-
դեղեն
արյունկզակ – արյունարրու, զազանարարո
բազմադիմի – բազմազան, զանազան
Բանն թժիշկ – նկատի ունի Քրիստոսին
զան – ծեծ, ձաղկանք
զոցել – կողակել, փակել, ծածկել
զրվան – աման՝ մեկ կամ մի քանի գրիվի տարո-
ղությամբ
դաշտանալ – հարթ դառնալ, դափակել
դարասպան – ծառասպան, պարտիզ
դժնիկ – դժնիկազգիների ընկանակի պատկանող
փշոր թուփ, եղչերափուշ
դժպիկ կամ դժպիհ – անհան, դիմաձ, արեկի
դիմահարել – դիմադրության՝ արգելքի հանդի-
պելով դեմ առնել, խափանվել, ընդհարվելով
կանգ առնել
դիմապաստ կամ դի գապաստ – իբրև դիմակ ըն-
կած՝ դապալված, դիմակ դարձած, սպանված
եկամուգ – դրսից մուծված, օդարամուց, ձեռք բե-
րովի, ոչ բնական, խորթ
երկարանցուր – թե՛մեկը և թե՛մյուսը, թե՛մեկի և թե՛
մյուսի. երկուսից ամեն մեկը, ամեն մեկի
զորիանապագ – ամեն օր, միշտ, շարունակ

ընդունայն – ունայն, դադարիկ, սնուղի, սին, փուց
անպետք, անարժեք
Ժողովել – հավաքել, մի տեղ բերել
իմաստակ – իմաստության վրա հիմնված դա-
դողություններ անող, ճարդարաւությամբ
հայրնապես սխալ դրույթները որպես ճշմա-
րիկ ներկայացնող
իմաստափել – 1. ուսումնասիրել. 2. դադելով
բնրոնել, մշտածել, խորհել
Խիաթան կամ լիթան – բայց աստվածաշնչական՝
ավանդության ծովային հոկայսկան զազան՝
թռչող վիշապ
Խելարերել – հիշել, մշտաբերել
Խելամփել – հասկանալ, բարոնել, խելամուգ լինել
Խոչ – խանգարիչ միջոց, խոչընդող, արգելք
Խոփոր(Վ)ել – շեղ(վ)ել, ծռ(վ)ել
Խութ – արգելք, խոչ խոչընդող
Կաճառ – սկսադիմիս
Կծել – ցորենի և զարու արդմերի խիստ հաստոնանա-
լով չարսնալը, երբ հապիկները սկսում են քավիթ-
փել
Կշտապինդ – կուշր ուղեկով կողքը պնդացրած,
կուշր կերած-խմած, հագեցած
Կողկողագին – ողբազին, լալագին, ցավագին
Կորդանալ – խոպանանալ, կոշտանալ, պնդանալ,
անդանալ

Կրկփել – մի բան փնտրել, որոնել, պրապել
կուր լինել – կեր լինել, կերակոր լինել
համբել – հաշվել, թվարկել
հեղգամիփ – մարով ծոյց, թուլամիփ, անհոգ
հեղգություն – ծուլություն, դանդաղկողություն,
անհոգություն
հեսպել – անհնազանդություն ցուցաբերել, անսասպ
լինել, չինազանդվել, բնտվզել
հոգածել – հոգս անել, մշտմիսալ, խորհել
Ճեռնկալու կամ ճեռնկալ – մեկի ձեռքից բռնող, օգ-
նական, պաշտպան, թեութիկունք
Ճեռնիսա – մի բան անելու ունակ՝ կարող
ճշգրտահան – պատկերը ճիր հանող, ճշպորնն
նկարող
Ճռաքաղ – բնդիանրապես բերքի վերջին մնա-
ցորդները հավաքել
Ճահլարաժամ – ժամանակից շուտ՝ հանկարծա-
հաս մահ, հապիկապես համաձարակ, ժամկա-
մահ, ժանդապիս
Ճաճ – արորի կոթ, որից բռնելով՝ մամկան ուղղու-
թյուն է լրացն խովին
Ճաճկալ – մաճք բռնող՝ դեկավարող, վար անող,
հեղլող
Ճամիկ – մայրիկ, մեծ մայր, լրադիկ
Ճանկակից – հասակակից

մեծագործել – մեծագործություն անել, երևելի, նշա-

նավոր գործեր կատարել

մեղկանալ – մեղկ դառնալ, թուլանալ, թուլամորթ

դառնալ

Նավակափիք – Ծննդյան և Զարկի ճրագալույցե-

րի երեկոն

նկրպել – ձգուել մի բանի, ամեն կերպ ջանալ

նկուն – նվասդ, սպոր, չնշին, ցած

շահապակություն – շահապակելը, արշավանք,

հարձակում

շահավաճառություն – վաճառաշահություն, վա-

ճառականություն, առևտուր

շամանդաղ – նսենություն, մթազնություն

չքմնդանալ – աղդարանալ

չքոփի – չնշին, աննշան

պայազաք – ազնվական կամ թագավորական

դրհմի ժառանգ

պափել – փաթաթել, կապել

պադիպաք – խորին

պղնձանալ – երաշտ լինել, անձրև չորեղալ

ջորյակ – մայիսյան բգեց

Վաճառանոց – առևտուր անելու դեղ, առևտուրի

հրապարակ, շուկա

Վարշամակ – թաշկինակ

Վափամսել – մկրահոգվել, վարսանել, սննդանզսպա-

նալ, մղապանջվել

Վարագ–Վարագ – այսպես՝ տեսակ–տեսակ

գույգ – պոչ ազի

ուղղավարող – սոսազնորդող

քակել – քանդել, ավերել, կործանվել

ԲՈՎԱԴԱՎՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԵՐԸ	
ԲԱՐԵԿԱՄԺՈՂՈՎՈՒԹՅԱՅՑՈՅ	5
ՄԻՐԱՔ ԵՎ ՍԱՄՎԵԼ	
ԴԱՍ Ա	
ՄԱՐԴԸ ԵՎ ԱՇԽԱԲՀԸ	13
ԴԱՍ Բ	
ՏԻԵԶԵՐՔ	
ԲՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ	23
ԴԱՍ Գ	
ԱՆՀԱՎԱՍԱՐ ԿՅԱՆՔ	
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	35
ԴԱՍ Դ	
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՊԱՏԱԿ ԺՈՂՈՎՈՒԹՅ	49
ԴԱՍ Ե	
ԺՈՂՈՎՈՒԹՅԸ ԵՎ ԱՇԽԱԲՀԸ ԱՁՆՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	71
ԴԱՍ Զ	
ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՀԱՅ	87
ԴԱՍ Է	
ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻղ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	
ԴԱՅ ԵՎ ԲԱՆ	103
ԴԱՍ Ը	
ԻՆՔՆԱՇԽԱՏ ԱՌԱՋԱՊԻՄՈՒԹՅՈՒՆ	125
ԴԱՍ Թ	
ՀԱՆՁՓ ԵՎ ԸՆԿԵՐՈՅՑԻՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ	137

ԴԱՍ Ժ	
ԱՇԽԱԲՀԸ ԵՐՋԱՄՆԿ ԵՎ ԱՊԵՐՋԱՄՆԿ ԿՅԱՆՔԸ	153
ԴԱՍ ԺԱ	
ԱՇԽԱԲՀԸ ԱԶԳԵՐԻ ԲԱՐԳԱՎԱճՈՒՄՆ ՈՒ ՆՎԱԶՈՒՄԸ	169
ԴԱՍ ԺԲ	
ԺԱՄՄԱՎԿԵ ԵՎ ԱՇԽԱԲՀԸ ՊԱՏԱՀԱՄՆԵՐԸ	185
ԴԱՍ ԺԳ	
ԱՎԵՏԱՐԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՈՅՑԻՐՈՒԹՅՈՒՆ	201
ՎԵՐՋԱԲԵՐԸ	
ՄԻՐԱՔԸ ՍԱՄՎԵԼԻՆ	213
ԲԱՌԱՑԱՎՆԿ	
	216

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ - Լ

ԽՐԻՍՏՅԱՆ ՇԱՅՐԻԿ

ՍԻՐԱՔ ԵՎ ՍԱՄՎԵԼ

Փոխադրությունը՝ Վ. Պարանյանի

Խմբագիր՝ Լիլիթ Պետրոսյան

Էջադրումը՝ Արտակ Տիտանյանի

Զափսը՝ 70x100 1/32, ծավալը՝ 14 տպ. մամուլ,
տեքստը՝ երկու գույն, կազմը կոշտ, չորս գույն
տպաքանակը՝ 1000:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան

226

227

